ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՀԱՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

**2-րդ, 3-րդ, 4-րդ թեմաներ**

***Կազմող՝ Արմեն Ղուկասյան***

***2021***

## ԹԵՄԱ 2. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅՔԸ Ք.Ա. VII-III ԴԴ. (10 ԺԱՄ)

### 1. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ: (1ԺԱՄ)

**Ա) Հայկական թագավորությունը Սկայորդու օրոք:**

Վանի թագավորության թուլացմանը զուգահեռ նրա նախկին լայնածավալ տերության արևմտյան մասում ամրապնդվում և ուժեղանում է հայկական մի մեծ իշխանություն՝ հայոց նահապետներ Սկայորդու և նրա որդի Պարույրի գլխավորությամբ, որոնք ըստ Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված տեղեկությունների, Հայկ նահապետի սերունդներից էին:

Օգտվելով Ասորեստանում տիրող խառնակ վիճակից և Վանի թագավորության թուլուցումից՝ հայկազունի Սկայորդին ապստամբում է Վանի բռնակալ արքաների իշխանության դեմ՝ նրանց տիրապետությունը թոթափելու և անկախության ձեռք բերելու նպատակով: Նրան հաջողվում է ազատագրել ամբողջ հարավ-արևմտյան Հայաստանը և վերականգնել հայկական թագավորությունը:

Սկայորդուն հաջողվում է դաշնակցել կիմմերների և սկյութների հետ: Հավանաբար դա է պատճառը, հայոց թագավորը կոչվում էր Սկայորդի:

Դա նրա տիտղոսն էր, որ նշանակում էր ոչ միայն հսկայի որդի, այլ նաև սակի (սկյութի) սիրելի: Հայոց արքա Սկայորդին բարեկամանում է նաև Ասորեստանի հետ՝ ստանալով նրա հովանավորությունը՝ ընդդեմ Ուրարտուի: Ուրարտական թագավոր Ռուսա II-ն իր հերթին դաշինք է կնքում կիմմերների հետ: Հայ-ասսուրական բարեկամությունը շարունակվում է նաև հետագայում: Ք.ա. 653 թ. Ասորեստանի դեմ ապստամբում է Բաբելոնը և նրան է միանում Մարաստանը: Շուտով ապստամբությունը ճնշվում է, Ասորեստանը փորձեր է կատարում սկյութների օգնությամբ նորից իրեն ենթարկել անջատված երկրները, բայց դրանք, ընդհակառակը, հանգեցնում են Մեդիայում սկյութների տիրապետության հաստատմանը:

ՊԱՐՈՅՐ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՎՈՐ:

**Բ)Հայկական թագավորությունը Պարույր Սկայորդու օրոք:** Ք.ա. 650-ական տեղի ունեցած իրադարձություններից որոշ ժամանակ անց տարածաշրջանում տեղի է ունենում ուժերի նոր դասավորություն: Շուտով Ասորեստանը խիստ թուլանում և բռնում անկման ուղին: Խալդեյները Ք.ա. 626 թ. գրավում է Բաբելոնը և հայտարարում է Ասորեստանից անկախ: Ք.ա. 625 թ. Մեդիան (Մարաստանը) Կիաքսարի գլխավորությամբ նույնպես անկախանում է Ասորեստանից: Որոշ ժամանակ անց Մեդիան և Բաբելոնը, սկզբում իրարից անկախ, իսկ հետո համագործակցած հանդես են գալիս Ասորեստանի դեմ: Այդ ժամանակ Հայաստանում իշխում էր Սկայորդու որդի Պարույրը: Ելնելով քաղաքական ուժերի հարաբերության փոփոխությունից՝ հայոց թագավոր Պարույրը կտրուկ փոխում է իր դիրքորոշումը ի շահ հայկական թագավորության: Նա հեռանում է խիստ թուլացած և անկման ուղին բռնած Ասորեստանից և միանում բաբելոնա-մարական դաշինքին: Պարույր Սկայորդին իր ճիշտ քաղաքականության շնորհիվ կարողանում է ընդլայնել հայոց թագավորության սահմանները: Եթե Սկայորդու օրոք հայկական թագավորությունն ընդգրկում էր հիմնականում հարավ-արևմտյան Հայաստանը, ապա հայոց արքա Պարույրի օրոք այն միավորվում էր

ուրարտական տերության հարավային, արևմտյան և հյուսիսային բոլոր երկրները և շրջանները, ինչպես նաև արևելյան կոմից մեծ մասը: Շուտով Վանի վերջին արքաները կորցնում են իրենց իշխանությունը նաև այս տարածքներում: Ք.ա. 616-605 թթ. երբ դաշնակից Բաբելոնի և Մեդիայի (Մարաստանի) արքաները պատերազմական գործողություններ են ծավալում Ասորեստանի և նրա բարեկամ երկրների դեմ: Պարույրը դաշնակցելով Մեդիայի հետ՝ մասնակից է դառնում Ասորեստանի պետության կործանմանը: Փոխարեն Մեդիայի թագավոր Կիաքսարը թագադրում է Պարույրին և Հայաստանը ճանաչում որպես թագավորություն: Այսպես Պարույրը դառնում է հայոց առաջին պսակավոր թագավորը: Թագավոր ճանաչվելուց հետո Պարույրը զենքն ուղղում է կործանման եզրին գտնվող ուրարտական թագավորության դեմ, Հայոց թագավորը պարտության է մատնում Վանի վերջին թագավորին և հաղթականորեն մտնում մայրաքաղաք Վան:

**Գ)Անցում Երվանդական թագավորությանը:** Հայոց թագավոր Պարույրը իր տիրապետությանն է ենթարկում նորանոր երկրներ և տարածքներ, որոնց մասին վկայում է հույն աշխարհագետ Ստրաբոնը: Հայաստանը Պարույրի 49-ամյա գահակալության տարին դառնում է հզոր պետություն, որի հետ հաշվի էր նստում աշխարհակալ Մարական տերությունը: Նրա մահից հետո հայոց գահն անցնում է Երվանդին, որը հիմք է դառնում իր անունը կրող Երվանդական (Երվանդյան, Երվանդունիների) արքայատոհմին:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Փորձեք պարզել, Հայկազունիների արքայատոհմի վերականգնման արտաքին և ներքին պատճառները: Բերեք փաստեր ձեր պատասխանի օգտին:
2. Ի՞նչ եք կարծում հնարավոր էր Հայկազունիների իշխանության վերականգնումը առանց Ուրարտուի դեմ բախումների: Հիմնավորեք ձեր պատասխանը::
3. Ձեր կարծիքով ինչո՞ւ Ք.ա. 650-ական թթ. տարածաշրջանում տեղի ունեցավ ուժերի նոր դասավորություն: Ում շահերից էր բխում այն: Հիմնավորեք ձեր պատասխանը:
4. Ի՞նչ եք կարծում ի՞նչ իրադարձություններ նպաստեցին Վանի տիրապետության տակ գտնվող և նրան ենթակա երկրների վրա Հայկազունիների իշխանության տարածմանը:
5. Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ Մարաստանը չխոչնդոտեց Պարույր արքայի մահից հետո Երվանդական տոհմին արքայական գահի անցումը: Հիմնավորեք ձեր պատասխանը:

## 2. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ: (1 ԺԱՄ)

**Ա) Երվանդ Սակավակյացը և հարաբերությունները Մարաստանի հետ:** Ք.ա. 580-ական թթ. Պարույր Սկայորդուն հաջորդած Երվանդ I-ը, որին Խորենացին անվանում էր Սակավակյաց, կարողանում է ամրապնդել ու հզորացնել Ուրարտուին փոխարինած համահայկական երկրորդ թագավորությունը: Երվանդ Սակավակյացի օրոք (Ք.ա. 580-570-ական թթ) հունական աղբյուրների տեղեկությունների համաձայն հայկական թագավորության սահմանները հասնում են հյուսիս-արևմուտքում՝ Մարաստան, հարավում՝ Հյուսիսային Միջագետք, իսկ արևմուտքում՝ Կապադովկիա: Նշանակալի էր Երվանդ 1-ինի զորքի թիվը: Նա կարող էր մարտի դաշտ դուրս բերել 8 հազար հեծյալ և 40 հազար հետևակ զորք, որն այն ժամանակներում պատկառելի ուժ էր: Երվանդ I արքայի հարստությունը կազմում էր 3 հազար տաղանդ արծաթ: Նա ուներ երկու որդի՝ Տիգրանը և Շավարշը ու մեկ դուստր՝ Տիգրանուհի անունով: Երվանդն իր արքունիքը շրջապատել էր հայ ավագանու ներկայացուցիչներով՝ պատվավոր հայերով: Երվանդ Սակավակյացի օրոք հայոց թագավորության մայրաքաղաք եղել է Տուշպա-Վանը:

Նրա գահակալության սկզբնական շրջանում պահպանվում էր դեռևս Պարույր Սկայորդու օրոք ձևավորված հայ-մարական դաշնակցային և բարեկամական հարաբերությունները: Այդ ժամանակ Մարաստանը պատերազմում էր արևմուտքում՝ Փոքր Ասիայում և զգում էր Հայաստանի կարիքը իր թիկունքի ապահովման համար: Սակայն, երբ ավարտվում են Մարաստանի նվաճումները արևմուտքում և առաջավոր Ասիայիում հաստատվում է նրա տիրապետությանը: Մարաց Աժդահակ թագավորը (Ք.ա. 585-550 թթ) վարում է երեկվա դաշնակիցներին իր տիրությանը ենթարկելու ու կեղեքելու քաղաքականություն: Ի թիվս այլ երկրների, նա զենքն ուղղում է Հայաստանի դեմ՝ տիրանալու նախկին ուրարտական թագավորության ժառանգությանը: Տեղի է ունենում կատաղի բախում նրանց միջև: Այդ պայքարում Երվանդ I-ը պարտություն է կրում և ստիպված է լինում ընդունել նրա գերիշխանությունը: Հայոց թագավորը պարտավորվում է 50 տաղանդ հարկ վճարել մարաց թագավորին, պատերազմի դեպքում զորք տալ նրան և ամրություններ չկառուցել: Դրանից որոշ ժամանակ անցհայոց թագավորը, օգտվելով Մարաստանի և Բաբելոնի միջև առաջացած պատերազմից, ապստամբում է Մարաստանի դեմ: Մարաց թագավոր Աժդահակն իր զորահրամանատար, պարսիկ Կյուրոսին զորքով ուղարկում է Հայաստան ապստամբությունը ճնշելու համար: Կյուրոսին հաջողվում է խորամանկությամբ ձերբակալել հայոց արքային ու նրա ընտանիքի անդամներին: Երվանդ I-ի թագաժառանգ որդի Տիգրանի միջնորդությամբ, որը դեռ պատանի հասակից Կյուրոսի որսակից ընկերն էր, նախկին հիմունքներով, բայց վճարվելիք հարկը կրկնապատկելու պայմանով նոր պայմանագիր է կնքում Կյուրոսի և հայոց թագավորի միջև, որը պահպանվում է երկար տարիներ:

**Բ)Հայաստանի հզորացումը Տիգրան Երվանդյանի օրոք:** Երվանդ I-ի Հայկազունու մահից հետ գահ է բարձրանում նրա որդին՝ Տիգրան I Երվանդյանը (Ք.ա. մոտ 560-525 թթ.): Նրա օրոք Հայաստանի սահմանը ոչ միայն համընկնում էր Հայկական լեռնաշխահի բնական սահմաններին, այլև տարածվում էր նաև Կապադովկիայի, Վրաստանի ու Աղվանքի վրա: Նա առաջին հերթին վարում էր Հայաստանը Մարաստանի գերիշխանությունից ազատագրելու քաղաքականություն՝ նրա դեմ պայքարում կողմնորոշվելով դեպի ընկեր ու բարեկամ Կյուրոս զորվարը: Տիգրանի և Կյուրոսի միջև հաստատված ամուր բարեկամությունը զգալի վտանգ էր ներկայացնում մարերի համար և խիստ մտահոգություն պատճառում Մարաց Աժդահակ թագավորին: Շուտով Մարաստանում լուրջ դժգոհություններ են ծագում Աժդահակի դեմ: Օգտվելով երկրում խմորվող դժգոհություններից՝ Ք.ա. 553թ. Կյուրոսն ապստամ-բություն է բարձրացնում Մարաց արքայի դեմ: Երեք տարի տևած (Ք.ա. 553 – 550թթ.) ռազմական գործողություններին ավարտվում են մարական զորքի ծանր պարտությամբ:

Կյուրոսը Ք.ա. 550թ. գրավում է Մարաստանի մայրաքաղաք Էկբատանը և, այստեղ գահ բարձրանալով, հիմնադրում է Աքեմենյան հին պարսկական պետությունը, որով մարական գերիշխանությունը փոխարինում է պարսկական տիրապետությունը ու գերիշխանությունը: Իրենց մասնակցությունը բերելով մարական պետության կործանմանը, նրա տիրապետության գտնվող ժողովուրդները, դրանց թվում նաև հայ ժողովուրդը, անշուշտ, հույսեր էին տածում,որ կազատվեն մարական գերիշխանությունից և ձեռք կբերեն լիակատար ինքնուրույնություն և անկախություն: Սակայն մյուս ժողովուրդների նման հայ ժողովրդի հույսերը չեն արդարանում:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Փորձեք ցույց տալ, որ Երվանդ Սակավակյացի օրոք Հայաստանը ընդգրկում էր նախկին ուրարտական պետության ողջ տարածքը:
2. Ձեր կարծիքով ինչո՞ւ փոխվեց Մարաստանի վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ և նա սկսեց իր երեկվա դաշնակցին իրեն ենթարկելու քաղաքականություն վարել: Հիմնավորեք ձեր պատասխանը:
3. Ի՞նչ պարտավորություններ ուներ Հայաստանը Մարաց պետության նկատմամբ: Ձեր կարծիքով Հայաստանն ի վիճակի էր կատարել դրանք: Հիմնավորեք ձեր պատասխանը:
4. Ի՞նչ եք կարծում Մարաստանի դեմ ապստամբած պարսից արքա Կյուրոսը կարող էր հասնել հաղթանակի առանց Տիգրան I-ի աջակցությամբ: Հիմնավորեք ձեր պատասխանը:
5. Փորձեք պարզել, թե ընկնելով պարսկական գերիշխանության տակ՝ Հայաստանը արդյո՞ք պահպանում էր իր պետական անկախությունը, թե ոչ: Ինչո՞վ է տարբերվում պետական անկախությունը գերիշխանությունից: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Լրացրե՛ք «Երվանդական արքաները» աղյուսակը.**

| *Արքաներ* | *Գահակալությունը* | *Բնութագիրը* | *Գործունեությունը* | *Արդյունքները, հետևանքները* |
|---|---|---|---|---|
| | | | | |

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. **Ո՞ւմ է հաջորդել Երվանդ Սակավակյացը.**
   1. Պարույրին 3. Վահագնին
   2. Տիգրանին 4. Հիդարնեսին

2. **Ե՞րբ է գահակալել Երվանդ I-ը.**
   1. Ք.ա. 620-610-ական թթ. 3. Ք.ա. 550-540-ական թթ.
   2. Ք.ա. 580-570-ական թթ. 4. Ք.ա. 610-590-ական թթ.

3. **Որքա՞ն էր Երվանդ I-ի զորքի թիվը.**
   1. 8 հազար հեծյալ և 20 հազար հետևակ
   2. 4 հազար հեծյալ և 40 հազար հետևակ
   3. 8 հազար հեծյալ և 40 հազար հետևակ
   4. 4 հազար հեծյալ և 20 հազար հետևակ

4. **Ի՞նչ էին Երվան I-ի որդիների անունները.**
   1. Տիգրան և Պարույր 3. Վահագն և Շավարշ
   2. Պարույր և Վահագն 4. Շավարշ և Տիգրան

5. **Ե՞րբ է գահակալել Մարաց Աժդահակ թագավորը.**
   1. Ք.ա. 560-525 թթ. 3. Ք.ա. 562-585 թթ.
   2. Ք.ա. 585-550 թթ. 4. Ք.ա. 604-562 թթ.

6. **Ո՞վ է ճնշում Աժդահակի դեմ Երվանդ I-ի ապստամբությունը.**
   1. Կամբիզը 3. Դարեհը
   2. Կյուրոսը 4. Կյուրոս Կրտսերը

7. **Ո՞ւմ որսընկերն է Կյուրոսը.**
   1. Շավարշի 3. Երվանդի
   2. Պարույրի 4. Տիգրանի

8. **Ե՞րբ է գահակալել Տիգրան I Երվանդականը.**
   1. Քա 560-525 թթ. 3. Քա 550-529 թթ
   2. Քա 522-486 թթ 4. Քա 529-522 թթ

9. **Ե՞րբ է Կյուրոսը գրավում Մարաստանի մայրաքաղաքը.**
   1. Ք.ա. 522 թ. 3. Ք.ա. 550 թ.
   2. Ք.ա. 410 թ. 4. Ք.ա. 590 թ.

10. **Ե՞րբ է տեղի ունեցել պարսից արքա Կյուրոսի ապստամբությունը Մարաստանի դեմ.**
    1. Ք.ա. 522-521 թթ. 3. Ք.ա. 612-610 թթ.
    2. Ք.ա. 401-400 թթ. 4. Ք.ա. 553-550 թթ.

## 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ: (1 ԺԱՄ)

**Ա) Հայաստանի և Աքեմենյան Պարսկաստանի հարաբերությունները:**

Հայկական թագավորությունը, Կյուրոսին նրա հաջորդների օրոք, իր արտոնյալ տեղն ուներ այդ տերության մեջ: Սակայն վիճակը փոխվում է, երբ գահ է բարձրանում Աքեմենյան Դարեհ I (Ք.ա. 522-486 թթ) թագավորը: Նրա դաժան իշխանությունը մեծ դժգոհություն է առաջացնում: Ք.ա. 522-520թթ. Նրա դեմ ապստամբում են տերության գրեթե բոլոր երկրները, այդ թվում նաև Հայաստանը: Այդ ապստամբության մասին է պատմում Քիրմանշահ քաղաքից ոչ հեռու գտնվող Բեհիսթունի ժայռի վրա թողած սեպագիր արձանագրության մեջ, որը գրված է երեք լեզվով՝ հին պարսկերեն, բաբելերեն և Էլամերեն լեզուներով: Արձանագրության պարսկերեն մասում Հայաստանը կոչվում է Արմենիա, Էլամերենում՝ Հարմինույա, իսկ Բաբելերեն մասում՝ Ուրարտու: Ուրարտու անվան հիշատակումը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ այն հայոց պետության անվանումներից մեկն է:

Բեհիսթոնյան արձանագրության սկզբում Հայաստանը չի հիշատակվում ապստամբած երկրների շարքում, դա նշանակում է, որ վերջինս լիովին անկախ էր: Բայց արձանագրության շարունակության մեջ արդեն մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայերի ապստամբության մասին, որոնք ցույց են տալիս, որ Դարեհ I-ն ամենահամառ դիմադրողության է հանդիպել Հայաստանում: Եթե մյուս ապստամբ երկրները Դարեհ I-ի հաջողվում էր նվաճել մեկ արշավանքի ընթացքում, ապա Հայաստանը ընկճելու և հնազանդեցնելու համար պահանջվում է հինգ արշավանք:

Հայաստանում ծագած ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I-ը ուղարկում է իր մերձավորներից Դադարշիշ անունով մի հայ զորավարի: Դադարշիշն իր արշավանքների ընթացքում բախվելով հայերի հզոր ռազմական ուժերի հետ ծանր պարտություն է կրում: Աքեմենյան հայազգի զորավարի անհաջողություններից հետո Դարեհ I-ը ստիպված է լինում փոխել նրան: Վեց ամիս անց Դարեհը Հայաստան է ուղարկում պարսիկ զորավար Վահումիսային:

Պարսիկ զորավարը հայերի հետ ընդհարվում է նախ՝ Հայաստանի սահմաններից դուրս՝ Հյուսիսային Միջագետքում, ապա նաև Հայաստանում: Կատաղի մարտերից հետո, ի վերջո հայերի համառ դիմադրությունը կոտրում է և նրանք պարտություն են կրում Դարեհի գերիշխանությանը:

Ք.ա. 521թ., երբ արդեն ճնշված էր ապստամբությունը, Հայաստանը ճանաչվում է Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանությունը: Պարսիկներն իրենց հերթին դիմում են զիջումների: Նրանք իշխանությունը թողում են Հայկազունի Երվանդական արքայատոհմի ձեռքում, որոնք ստանում են լիակատար ներքին ինքնավարություն և դրամ կտրելու իրավունք:

**Բ)Հայաստանը Աքեմենյան տերության կազմում:** Ապստամբությունի ճնշումներից հետո Դարեհ I-ը տերության ներսում կատարում է մի շարք բարեփոխումներ, որոնց նպատակն էր ուժեղացնել ու ամրացնել կենտրոնական իշխանությունը: Ք.ա. 520թ. Դարեհ I-ը Աքեմենյան տերությանը բաժանում է 20 մեծ վարչական միավորների՝ սատրապությունների: Սրանց կառավարումը հանձնվում է բարձրաստիճան պաշտոնյաների, որոնք կոչվում են սատրապներ: Նրանք իրենց ենթակա սատրապությունների քաղաքացիական բնակչության նկատմամբ ունեին վարչական և դատական անսահմանափակ իշխանություն: Սատրապների պարտականությունների մեջ էին մտնում նաև պետական

հարկերի հավաքումը, պարհակների կազմակերպումը, ճանապարհների անվտանգության ապահովումը և այլն:

Դարեհի վարչական բաժանման համաձայն Հայաստանը կազմում է պարսկական տերության 13-րդ սատրապությունը սատրապությունը: Հայաստանի կառավարիչ-սատրապները Հայկազուն-Երվանդական տոհմի ներկայացուցիչներ էին և մեծ մասամբ կրում էին Երվանդ անունը: Նրանք շարունակում էին կարևոր դիրք գրավել Աքեմենյան տերության մեջ: Երվանդական սատրապ կառավարիճները ազգակցական, խնամիական սերտ կապեր էին հաստատել Աքեմենյան արքաների հետ: Հայաստանը որպես հարկ Պարսկաստանին վճարում էր տարեկան 600 տաղանդ արծաթ, պարսից արքային ուղարկում տարեկան 20 հազար նժույգ և թանկարժեք մետաղից պատրաստված բարձրարվեստ անոթներ: Որպես սատրապություն՝ Հայաստանն Աքեմենյան Պարսկաստանի կազմում մնում է մոտ 200 տարի մինչև Ք.ա. 331թ.:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Փորձեք պարզել, թե ընկնելով պարսկական գերիշխանության տակ՝ Հայաստանը արդյո՞ք պահպանում էր իր պետական անկախությունը, թե ոչ: Ինչո՞վ է տարբերվում պետական անկախությունը գերիշխանությունից: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
2. Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ Դարեհի դեմ ապստամբեցին նրա տիրապետության տակ գտնվող գրեթե բոլոր երկրները: Արդյո՞ք Հայաստանը բավարար ուժեր ու միջոցներ ուներ պահպանելու իր ձեռք բերած անկախությունը: Բերեք փաստեր ձեր պատասխանի օգտին:
3. Թվարկե՛ք Վանի թագավորության անկման պատճառները:
4. Ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքը Դարեհ 1-ինի կատարած վարչական փոփոխությունների նկատմամբ: Ո՞րն էր դրանց նպատակը: Ձեր կարծիքով ինչո՞ւ էին աքեմենյան արքաները Հայաստանի սատրապներ նշանակում էին Երվանդական արքայական տոհմի ներկայացուցիչներին: Հիմնավորեք ձեր պատասխանը:
5. Եթե ձեզ առաջարկվեր մեկ հարց տալ Երվանդական գահակալներից որևէ մեկին, ապա ո՞ւմ կուղղեիք ձեր հարցը և ի՞նչ բովանդակություն կարող է ունենալ այն:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. **Ե՞րբ է տեղի ունեցել հպատակ ժողովուրդների ապստամբությունը Դարեհ I-ի դեմ.**
   1. Ք.ա. 553-550 թթ. 3. Ք.ա. 539-538 թթ.
   2. Ք.ա. 522-521 թթ. 4. Ք.ա. 525-524 թթ.

2. **Քանի՞ լեզուներով է գրված Բեհիսթոնյան արձանագրությունը.**
   1. Երկու 3. Չորս
   2. Երեք 4. Հինգ

3. **Ո՞ր քաղաքի մոտ գտնվող ժայռի վրա է գրված Դարեհ I-ի սեպագիր արձանագրությունը.**
   1. Էկբատան 3. Քիրմանշահ
   2. Տուշպա-Վան 4. Բաբելոն

4. **Ի՞նչ լեզուներով են գրված Բեհիաթունյան արձանագրությունները.**
   1. Հայերեն, ուրարտերեն, խեթերեն 3. Պարսկերեն, էլեմերեն, բաբելոներեն
   2. Խեթերեն էլամերեն, պարսկերեն 4. Բաբելոներեն, հայերեն, խուռիերեն

5. **Ո՞վ է Հայաստանում բռնկված ապստամբությանը ճնշելու համար Դարեհ I-ի կողմից ուղարկված հայազգի զորավարը.**
   1. Կամբիզը 3. Դադարշիշը
   2. Վահումիսան 4. Էմբասը

6. **Ո՞վ էր Հայաստանում բռնկված ապստամբությունը ճնշելու համար Դարեհի կողմից ուղարկված պարսիկ զորավարը.**
   1. Քսերքսեսը 3. Շավարշը
   2. Կյուրոսը 4. Վահումիսան

7. **Ե՞րբ է Հայաստանը ճանաչել Աքեմենյանների գերիշխանությունը.**
   1. Ք.ա. 521 թ. 3. Ք.ա. 520 թ.
   2. Ք.ա. 550 թ. 4. Ք.ա. 401 թ.

8. **Ի՞նչ վարչական միավորների էր բաժանվում Աքեմենյան տերությունը.**
   1. Մարզպանությունների 3. Նահանգների
   2. Սատրապությունների 4. Ստրատեգիաների

9. **Տարեկան որքա՞ն տաղանդ արծաթ էր տալիս Հայաստանը Պարսկաստանին որպես հարկ.**
   1. 200 տաղանդ արծաթ և 1000 նժույգ
   2. 400 տաղանդ արծաթ և 15 հազր նժույգ
   3. 4 հարյուր տաղանդ արծաթ և 10 հազար նժույգ
   4. 600 տաղանդ արծաթ և 20 հազար նժույգ

10. **Մինչև ե՞րբ է Հայաստանը մնում որպես սատրապություն Աքեմենյան Պարսկաստանի կազմում:**
    1. Ք.ա. 521 թ. 3. Ք.ա. 401 թ.
    2. Ք.ա. 550 թ. 4. Ք.ա. 331 թ.

## 4. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ: (1 ԺԱՄ)

**Ա) Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները:** Ք.ա. IV դ. կեսից Աքեմանյան Պարսկաստանը խիստ թուլանում է և բռնում քայքայման ուղին: Գնալով ուժեղանում են կենտրոնախույս ձգումները, տետության տարբեր մասերում գլուխ են բարձրացրել գործնականում անկախ ցեղեր ու ցեղախմբեր: Այդ նույն ժամանակ Արևմուտքում՝ Բալկանյան թերակղզում ուժեղանում և հզորանում էր Մակեդոնիայի թագավորությունը, որտեղ Ք.ա. 336թ. գահ է բարձրանում 20-ամյա տաղանդավոր երիտասարդ, հռչակավոր փիլիսոփա Արիստոտելի սան Ալեքսանդր Մակեդոնացին: Օգտվելով Աքեմենների թուլացումից՝ Ալեքսանդրը որոշում է պատերազմել Պարսկաստանի դեմ, գրավել Փոքր Ասիան և Արևելքի հարուստ երկրները և հասնել համաշխարհային տիրապետության: Մակեդոնա-հունական ոչ մեծաքանակ զորքերը (30 հազար հետևակ, 5 հազար հեծելազոր) Ք.ա. 334թ. գարնան անցնում են Հելլեսպոնտոսը (Դարդանելի նեղուցը) և ափ իջնում Փոքր Ասիա: Նրանք Գրանիկոս գետի մոտ բախվում են Դարեն III-ի (Ք.ա. 336-331թթ) փոքրասիական սատրապների զորքի հետ և ջախջախում նրան: Հաջորդ՝ Ք.ա. 333թ. Գարնանը, Ալ. Մակեդոնացու զորքեր Կիլիկիայի Իսոս քաղաքի մոտ տեղի ունեցած են ճակատամարտում կրկին ծանր պարտության են մատնում Դարեն III-ի բանակին: Դարեհը փախուստի է դիմում՝ հաղթողների ձեռքին թողնելով մորը, կնոջը և զավակներին: Երկու կողմից զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի է ունենում Ք.ա. 331թ. հոկտեմբերի 1-ին Հյուսիսային Ասորիքում, Գավգամելա բնակավայրի մոտ: Պարսկական զորքերի կազմում ճակատամարտին մասնակցում էին հայկական զորքերը՝ Աքեմենների տիրապետության տակ գտնվող Մեծ Հայքի և Փոքր Հայքի կառավարիչներ Օրոնտես-Երվանդ III-ի և Միթրաուստեսի գլխավորությամբ: Մարտը սկսվում է վաղ առավոտյան և ավարտվում ուշ երեկոյան: Այս անգամ էլ պարսից բանակը պարտություն է կրում, իսկ Դարեհը կրկին դիմում է փախուստի և ավելի ուշ սպանվում իր մերձավորներից մեկի ձեռքով: Այստեղ կռվող հայկական զորքն արագ երթով նահանջի հրաման է ստանում և դուրս գալով ճակատամարտից՝ վերադառնում են Հայաստան:

Գավգամելայի ճակատամարտում տարած հաղթանակը վերջ է դնում Աքեմենյան տերության գոյությանը: Շարունակելով հաղթական երթը՝ Ալեքսանդրն առանց լուրջ դիմադրության հանդիպելու գրավում է Միջագետքը, իսկ Ք.ա. 330թ. վերջերին մոտենում Դարեհի մայրաքաղաք Պարսեպոլիսին: Աքեմենյաների մայրաքաղաքը դիմադրության փորձ անգամ չի անում: Պերսեպոլիսը գրավվում է, ավերվում ու հրկիզվում: Կողոպտվում են Աքեմենյան արքաների դարերով կուտակված գանձերը:

Աքեմենյան տերությունը նվաճելուց հետո՝ Ալեքսանդրի բանակը ներխուժում է Միջին Ասիա և երեք տարվա դաժան կռիվներից հետո է միայն հաջողվում հպատակեցնել այն: Այստեղից հունա-մակեդո-նական զորքերն Աֆղանստանի վրայով մտնում են Հնդկաստան: Ալեքսանդրին հաջողվում է գրավել Ինդոս գետի ափին ընկած երկրները: Ալեքսանդրը մտադիր էր գրավել ողջ Հնդկաստանը, բայց նրա հոգնատանջ բանակը հրաժարվում է շարունակել արշավանքը: Ալեքսանդրը ստիպված տեղի է տալիս և իր զորքի հետ Ք.ա. 324թ. վերադառնում Միջագետք՝ Բաբելոնիա՝ հիմք դնելով մի նոր հսկայածավալ ու խարհակալ տերության, որի սահմանները տարածվում էին Մակեդոնիայից մինչև Ինդոս գետը՝ Հնդկաստան, Սև ծովից ու Միջին Ասիայից մինչև Եթովպիա: Նրոաստեղծ այս տերության մայրաքաղաքն է դառնում Բաբելոնը: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով Առաջավոր Ասիայում սկզբնավորվում է հելլենիզմի (հույներեն իրենց անվանում էին հելլեներ)՝ հունականության դարաշրջանը: Հայաստանն այդ դարաշրջան է մտնում որպես իր անկախությունը վերականգնած պետություն:

**Բ)Հայկազունի Երվանդյանների թագավորության վերականգնումը:**Գավգամելայում տարած հաղթանակից հետո Ալեքսանդրը չի հետապնդում իրենց զորքերով Հայաստան վերադարձած Երվանդ III-ին և Միթրաուստեսին: Մակեդոնական արքան, փաստորեն, Հայաստան չի մտնում և այն չի նվաճում: Սակայն Գավգամելայի ճակատամարտից ամիսներ հետո, նա Հայաստանի սատրապ է նշանակում Միթրեն կամ ավելի ճիշտ Միհրան անունով մի պարսիկ: Սակայն այդ նշանակումը ձևական ու անվանական է մնացել, որովհետև Միթրեն-Միհրանը չէր կարողացել մտնել Հայաստան և այնտեղ հաստատվել սատրապի պաշտոնում: Որ իրոք Հայաստանը չի նվաճվել երևում է նրանից, որ այս նշանակումից երեք տարի անց՝ Ք.ա. 329թ. Ալեքսանդրը Մենոն զորավարի գլխավորությամբ մի զորաբանակ է ուղարկում Հայաստան՝ Սպեր Գավառում գտնվող ոսկու հանքերը գրավելու համար: Ինչպես վկայում է հույն մատենագիր Ստրաբոնը, հայերը ջախջախում են նրա բանակը, իսկ զորավարին՝ «խեղդամահ անում»: Դրանից հետո մակեդոնական արքան ալևս փորձ չի անում Հայաստան նոր զորք ուղարկելու, ինչը խոսում է այն մասին, որ նա ստիպված էր հաշվի նստել հայկական ռազմական ուժի հետ և խուսափել նրա հետ նոր բախումից:

Այն երկրները որոնք չէին նվաճվել Ալեքսանդր Մակեդոնացու կողմից, օգտվելով Աքեմենյան տերության կործանումից, ձեռք են բերում ինքնուրույնություն և անկախություն: Այդպես են վարվում նաև մինչ այդ Աքեմենյան տերության կազմում գտնվող Մեծ Հայքի և Փոքր Հայքի կառավարիչները՝ Երվանդը և Միթրաուստեսը: Նրանք վերականգնում են Հայաստանի անկախությունը և իրենց հայտարարում թագավորներ, Երվանդը՝ Մեծ Հայքում, Միթաուստեսը՝ Փոքր Հայքում: Սրանով հայոց պետականության զարգացման գործընթացը, որ ընդհատվել էր Ք.ա. VI դարի վերջին, գտնում է իր շարունակությունը: Երվանդական արքայատոհմի գլխավորությամբ վերականգնված հայկական թագավորությունը իրավական հիմքերի տեսանկյունից խիստ օրինական էր համարվում, որովհետև Երվանդականները մայրական գծով ազգակցական կապ ունեին Աքեմենյանների հետ: Իսկ այդ ժամանակ Առաջավոր Ասիայում ազգակցական կապը կարևոր պայման էր թագավորական տոհմերի իշխանության օրինականությունը շեշտելու և ճանաչելու համար: Այս հանգամանքն ամրապնդում էր հայկական թագավորության դիրքը նորաստեղծ հելլենիստական պետությունների շարքում:

Դեռ նոր էին անկախացել Մեծ Հայքը և Փոքր Հայքը, երբ Առաջավոր Ասիայում տեղի են ունենում նոր իրադարձություններ: Ք.ա. 323թ. մահանում է Ալ. Մակեդոնացին և նրա ստեղծած տերությունն արագորեն սկսվում է քայքայվել նբաժանվումէմիքանիմասի:Դրանցիցամենահզորն ու ամենաընդարձակը Հայաստանի սահմանակից Սելևկյան պետությունն էր, որն ընդգրկում էր Ալեքսանդրի պետության գրեթե բոլոր ասիական (արևելյան) շրջանները: Շուտով Սելեկյան պետությունն իր հարևան Հայաստանի նկատմամբ հանդես է բերում նվաճողական նկրտումներ: Նորանկախ Հայաստանը Երվանդ III-ի (Ք.ա. 331-300թթ.) գլխավորությամբ ոչ միայն պահպանում երկիրի անկախությունը,այլ նաև վճռորոշ դեր է խաղում տարածաշրջանում:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով, որո՞նք էին Աքեմենյան Պարսկաստանի թուլացման ու քայքայման պատճառները:
2. Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ Ալ. Մակեդոնացու զորքերը կարողացան համեմատաբար հեշտ հաղթանակներ տանել պարսկական մեծաքանակ զորքերի դեմ և մեկը մյուսից հետևից գրավել նրա տիրապետության տակ գտնվող երկրները: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
3. Ձեր կարծիքով, ո՞րն էր պատճառը, որ Ք.ա. IV դարի վերջի քարորդում Մեծ Հայքի նորաստեղծ թագավորությունը կարողացավ ոչ միայն պահպանել իր անկախությունը, այլև վճռորոշ դեր կատարեց տարածաշրջանում:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ե՞րբ է Աքեմենյան տերությունը բռնում թուլացման և քայքայման ուղին.**

1. Ք.ա. V դարի վերջում 3. Ք.ա. IV դարի վերջում
2. Ք.ա. IV դարի կեսին 4. Ք.ա. V դարի կեսին

**2. Ե՞րբ է գահ բարձրացել Ալ. Մակեդոնացին.**

1. Ք.ա. 336 թ. 3. Ք.ա. 356 թ.
2. Ք.ա. 331 թ. 4. Ք..ա. 329 թ.

**3. Ե՞րբ է Ալ. Մակեդոնացին անցել Հելեսպոնտոսը և մտել Փոքր Ասիա.**

1. Ք.ա. 301 թ. 3. Ք.ա. 324 թ.
2. Ք.ա. 323 թ. 4. Ք.ա. 334 թ.

**4. Ե՞րբ է գահակալել պարսից արքա Դարեհ III-ը.**

1. Ք.ա. 336-331 թթ. 3. Ք.ա. 330-300 թթ.
2. Ք.ա. 356-336 թթ. 4. Ք.ա. 312-281 թթ.

**5. Ո՞ր ճակատամարտն է տեղի ունեցել Ք.ա. 333թ.**

1. Իպսոսի 3. Գավգամելայի
2. Իսոսի 4. Գրանիկոնի

**6. Ե՞րբ է տեղի ունեցել Գավգամելայի ճակատամարտը.**

1. Ք.ա. 336 թ. 3. Ք.ա. 331 թ.
2. Ք.ա. 334 թ. 4. Ք.ա. 312 թ.

**7. Ի՞նչ երկրներ է գրավում Ալ. Մակեդոնացին Իսոսի ճակատամարտից հետո.**

1. Փոքր Հայքը, Կապադովկիան, Ասորիքը
2. Ասորիքը, Պոնտոսը, Լեդիան
3. Լեդիան, Փունիկիան, Եգիպտոսը
4. Ասորիքը, Փյունիկիան, Եգիպտոսը

**8. Հայաստանի ստրապներից ովքե՞ր էին մասնակցում Գավգամեայի ճակատամարտին.**

1. Տիգրան Երվանդյանը, Օրոնտես-Երվանդ II-ը
2. Օրոնտես-Երվանդ II-ը, Միթրաուտեսը
3. Միթրաուտեսը, Օրոնտես-Երվանդ III-ը
4. Օրոնտես-Երվանդ III-ը, Սամոսը

**9. Ո՞րն է պարսից արքա Դարեհ III-ի մայրաքաղաքը.**

1. Բաբելոնը 3. Տյուրոսը
2. Շոշը 4. Պերսեպոլիսը

**10. Միջին Ասիայից հետո ո՞ւր է արշավում Ալ. Մակեդոնացին.**

1. Հնդկաստան 3. Մարաստան
2. Պարթևստան 4. Վրաստան

## 5. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ք.Ծ.Ա. III ԴԱՐՈՒՄ: ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ: (1 ԺԱՄ)

**Ա)Հայկական թագավորություններ Ք.ա.III դարում:** Ք.ա. III դարում Մեծ Հայքի թագավորությունն ավելի է ամրապնդվում ու հզորանում: Երվանդ III-ի և նրա հաջորդների օրոք Հայաստանն ընդհանուր առմամբ պահպանում է աքեմենյան շրջանում իր ունեցած սահմանները: Պետության մայրաքաղաքը շարունակում էր մնալ Արմավիրը: Ք.ա. IV դարի I կեսին Երվանդականների իշխանությունը տարածվում էր Ծոփքին հարող անդրեփրատյան Կոմմագենե երկրի վրա: Այդ ժամանակ Սելևկյանները փորձում էին տիրանալ Հայաստանին կամ գոնե հարկատու դարձնել նրան, բայց հանդիպում էրն համառ դիմադրության: Երվանդ III-ին հաջորդած մյուս թագավորներն իրենց հերթին վարում են ընդգծված հակասելեկյան քաղաքականություն: Սակայն որոշ ժամանակ անց Մեծ Հայքի թագավորությունը զգալիորեն թուլանում է: Ք.ա. մոտ 260թ. նրանից անջատվում են Ծոփքը և Կոմմագեններն՝ կազմելով Ծոփքի-Կոմմագենների միացյալ թագավորությունը: Դրանից օգտվում են Սելևկյան տերությունը և մյուս հարևան պետությունները: Ք.ա. III դարի երկրորդ կեսին հզորացման շրջան են ապրում Իբերյան (Վրաստանը) և Ատրպատականը: Ընկած լինելով նրանց և Սելեկյան տերությամ միջև՝ Հայաստանը տարածքային կորուստներ է ունենում հյուսիսում և Արաքսի հովտում: Ատրպատականի հզորացումն անհանգստացնում էր առաջին հերթին Սելևկյաններին, որոնք վճռական քայլերի են դիմում վերջ դնելու նրա մեծապետական ձգտումներին: Ճնշելով Ատրպատականի օժանդակությունը ստացած սելևկյան սատրապների ապստամբությունը՝ Սելևկյան արքա Անդիոքոս III Մեծ (Ք.ա. 223-187թթ.) Ք.ա. 220թ. ներխուժում է Ատրպատական և պարտության մատնում նրա թագավորին: Նման պայմաններում Մեծ Հայքում գահ է բարձրանում Երվանդ IV Վերջինը (Ք.ա. 220-201թթ): Նրա գահակալության տարիները նշանավորվում է ծավալուն շինարարական գործունեությամբ: Նա հեռանում է Արմավիր մայրաքաղաքից և Արաքս ու Ախուրյան գետերի խառնարանի մոտ՝ մի ապառաժ բլրի վրա, կառուցում է իր անունը կրող Երվանդաշատ նոր մայրաքաղաքը և այնտեղ տեղափոխում արքունիքը: Ախուրյանի ափին են կառուցվում նաև գեղեցիկ ու չքնաղ շինվածքներով Երվանդակերտ դաստակերտը և Բագարան փոքր քաղաք-սրբավայր: Երվանդ IV-ը Արմավիրից Բագարան է տեղափոխում հեթանոս աստվածների արձանները և այնտեղ քրմապետ է նշանակում իր եղբորը՝ Երվազին:

Չնայած Երվանդ IV-ի եռանդուն գործունեությունը՝ նրա իշխանությունը հաստատուն չէր: Խորենացին լավ է պատկերում այն շիկացած մթնոլորտը, որի մեջ թագավորը բոլորում է իր վերջին տարիները: Երվանդը վախենում էր իր շրջապատից ու ժողովրդից: Դժգոհություն էր տիրում նաև երկրի ավագանու՝ մեծամեծների ու նախարարների մեջ: Նրանք դժգոհում էրին նրա վարած քաղաքականությունից և տարածքային կորուստներից:

Ինչ վերաբերվում է Մեծ Հայքի արևմտյան մասում առաջացած Ծոփք–Կոմմագենների միացյալ թագավորությունը, ապա այն շարունակում էր պահպանել իր անկախությունը: Թագավորության հիմնադիր Սամոսը (Ք.ա. մոտ 260-240 թթ.), որը Երվանդական տոհմից էր, Կոմմագենեում Եփրատ գետի ափին կառուցում է Սամոսատ մայրաքաղաքը: Սամոսը հատում է նաև դրամներ, դրանք մեզ հասած առաջին հայկական արքայական դրամներն են: Սամոսին Ծոփք-Կոմմագենների գահին հաջորդում է նրա որդի Արշամը (Ք.ա. 240-220 թթ): Շարունակելով հոր շինարարական գործունեությունը՝ նա Ծոփքում իր անունով կառուցում է Արշամաշատ քաղաքը: Արշամը նույնպես հատել է դրամները: Ծոփք-Կոմմագե-ների միացյալ թագավորությունը երկար կյանք չի ունենում և Արշամի մահից հետո տրոհվում է երկու մասի՝ Ծոփքի և Կամմագենեի առանձին թագավորությունների:

Աքեմենյան տերության վերացումից հետո, ինչպես արդեն ասվել է, Միթրաուստեսը Ք.ա. 331թ. հիմնադրում է Փոքր Հայքի թագավորությունը, որն սահմանների մեջ ընդգրկում է Եփրատ, Գայլ և

Հալիս գետերի վերին հոսանքների միջև ընկած տարածքները: Ի տարբերություն Մեծ Հայքի պետության՝ Փոքր Հայքի թագավորությունը շուտով ենթարկվում է մակեդոնացիներին: Սակայն Փոքր Հայքը երկար չի մնում հունամակեդոնական տիրապետության տակ: Ք.ա. 301-300 թթ. Փոքր Հայքը ևս ապստամբություն է բարձրացնում և վերականգնում իր անկախությունը, որը պահպանվում է Ք.ա. III դարի ընթացքում:

**Բ)Ներքին և արտաքին մարտահրավերներ:** Սելևկյան տերությունը Անտիոքոս III-ի օրոք վերականգնում է իր նախկին հզորությունը: Սելևկյան արքան ձեռնամուխ է լինում իր հեռահար ծրագրի ու լայնածավալ նվաճումների իրագործմանը: Օգտվելով Հայաստանի թուլացումից և նրանում առկա ներքին երկպառակությունից՝ Անտիոքոս III-ն իր գերիշխանությանն է ենթարկում Ծոփքը: Սակայն այդ գերիշխանությունը շատ անկայուն էր: Հավանաբար Ծոփքի թագավորը, հաշվի առնելով այն հանգամանք, որ Ք.ա. 217թ. սելեկյանները պարտություն են կրել Եգիպտոսից, հրաժարվում է ճանաչել Անտիոքս III-ի գերիշխանությունը և դադարեցնում է հարկ վճարելու: Անտիոքոս III-ը իր ուժերը վերականգնելուց հետո, որոշում է Ծոփքը կրկին իրեն ենթարկել: Այդ նպատակով նա Ք.ա. 212թ. զգալի ուժերով ներխուժում է Ծոփք և բանակ դնում Արշամաշատ մայրաքաղաքի մոտ: Ծոփքի թագավոր Քսերքսեսը, նկատի ունենալով թշնամու ուժերի գերազանցությունը, դեսպաններ է ուղարկում Անտիոքոսի III-ի մոտ և հայտնում, որ ցանկանում է բանակցել նրա հետ: Սելևկյան արքան, իր մոտ է հրավիրում Քսերքսեսին, հաշտվում նրա հետ և նույնիսկ նրան է զիջում հարկի մեծագույն մասը, որ հրաժարվել էր իրեն վճարել Քսերքսեսի հայրը: Այնուհետև Անտիրքոսը նրանից վերցնում է 300 տազանդ, 100 ձի և նույնքան էլ ջորի իրենց լծասարքերով և նրան է վերադարձնում ողջ իշխանությունը երկրում: Բացի այդ, Անտիոքոսն իր քրոջը՝ Անտիոքիսին, կնության է տալիս Քսերքսեսին: Այնուհետև Անտիոքոսը զենք ուղղարկում է արևելք՝ իրականացնելու իր արևելյան ծրագիրը: Նա ընկճում է Պարթևստանը, հասնում Միջին Ասիա, գրավում Բակտրիան և Հինդուկուշի վրայով իջնում Հնդկաստան: Արևելյան հաղթարշավից հետո, որը սիրում էր համեմատել Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի հետ, Անտիոքոս III-ն ավելի ուժեղ ու հաստատուն էր զգում իրեն, քան գահակալության սկզբնական շրջանում: Ուստի նա որոշեց ի կատար ածել նաև արևմտյան ծրագիրը, որով նախատեսվում էր նախ ընդլայնել իր փոքրասիական տիրությունը, ապա գրավել ողջ Փոքր Ասիան և ոտք դնել Եվրոպա՝ Բալկանյան թերակղզի: Բայց մինչև արշավանքը սկսելը անհրաժեշտ էր ապահովել իր մերձավոր թիկունքը՝ այսինքն գրավել հայկական թագավորությունները: Ք.ա. 201թ. Անտիոքոսն իր քրոջ Անտիոքիսի ձեռքով սպանել է տալիս Քսերքսեսին և տիրում Ծոփքին: Այստեղ նա ստրատեգոս (զորավար-կառավարիչ) է նշանակում իր մոտ ծառայության մեջ գտնվող զորավար Զարեհին, որը, ըստ երևույթին, Ծոփքի թագավորական տոհմից էր: Ք.ա. 201թ. նա պատերազմ է սկսում Երվանդ IV-ի դեմ: Նա մեծաթիվ զորքի գլուխ անցած, Ուտիքի վրայով, Սևանի հյուսիս-արևելյան ափով և Արագածի թիկունքով շարժվում է Երվանդի բանակի դեմ, որը գտնվում էր Երվանդաշատից 300 ասպարեզ (մեկ ասպարեզը հավասար է 600 ոտնաչափի) հեռավորության վրա, Ախուրյանի հյուսիսային կողմում: Ճակատամարտը տեղի է ունենում Երվանդավանում և Երվանդի բանակը ծանր պարտություն է կրում: Հայոց արքան փախուստի է դիմում դեպի մայրաքաղաք՝ այնտեղ պատսպարվելու համար: Արտաշեսի զորավար Սմբատը գալիս պաշարում է Երվանդաշատը: Այստեղ նրան միանում է Արտաշեսը, որն արդեն տիրացել էր Երվանդակերտին: Արտաշեսի բանակը սկսում է հարձակումը քաղաքի վրա: Դիմադրությունը երկար չի տևում: Չդիմանալով Արտաշեսի քաջերի ճնշմանը՝ ամրոցի պաշտպաններն անձնատուր են լինում և բացում քաղաքի դարպասները: Զինվորներից մեկը ներս մտնելով ամրոց՝ սպանում է Երվանդին: Բայց Արտաշեսը հիշելով, որ նրա երակներակներում արքայական արյուն է հոսում, հրամայում է թաղել նրան և մահարձան կանգնեցնել: Այնուհետև Արտաշեսը հրաման է տալիս Սմբատին՝ գնալ Բագարան՝ Մեծ Հայքի հոգևոր կենտրոն, սպանել Երվանդի եղբորը՝ քրմապետ Երվազին: Սմբատը

գնում է Բագարան, և սպանում Երվազին: Գրավելով Մեծ Հայքը՝ այստեղ Անտիոքոսը վերացնում է Երվանդական թագավորությունը և այնտեղ կառավարիչ նշանակում Արտաշեսին: Այսպես Ք.ա. 201թ. Մեծ Հայքում վերջ է դրվում Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանությանը և այնտեղ հաստատվում է Սելևկյանների տիրապետությունը, որ տևում է ավելի քան տաս տարի:

Սելևկյան նվաճումներից զերծ չեն մնում նաև Կոմմագենեն և Փոքր Հայքը: Նույն Ք.ա. 201թ. սելեկյանները նվաճում են Կոմմագենեն: Ամենայն հավանականությամբ այդ ժամանակ Անտիոքոսը նվաճում է նաև Փոքր Հայքը և, այնտեղ առանձին սատրապություն ստեղծելով:

Այսպիսով, Ք.ա. III դարի վերջում ողջ Հայաստանը հայտնվում է Սելևկյան տերության կազմում, որը տևում է մինչև Ք.ա. 190թ.:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Շինարարական ի՞նչ գործունեություն էին ծավալել Երվադունի արքաները:
2. Փորձեք պարզել, թե ինչո՞վ էր պայմանավորված Անտիոքոս III-ի այնքան հախուռն ծավալումը իր տերության հյուսիսային սահմանը եզերողհայկական պետությունների նկատմամբ: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին
3. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Սելևյաններին հաջողվեց առանց լուրջ դժվարության նվաճել հայկական թագավորությունները և դրանցում հաստատել իր տիրապետությունը: Ի՞նչ եք կարծում, կարելի է ձեր պատասխանը ընդունել որպես հիմք Հայաստանում տիրող այն ժամանակվա մթնոլորտը հասկանալու համար:

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. **Հայկական թագավորություններին հիմնական հակառակորդ պետությունն էր՝**
   1. Եգիպտոսը 3. Բյութանիան
   2. Սելևկիան 4. Փյունիկիան

2. **Ե՞րբ են Ծոփքը և Կոմմագենեն անջատվել Մեծ Հայքից:**
   1. Ք.ա. 212 թ. 3. Ք.ա. 201 թ.
   2. Ք.ա. 301 թ. 4. Ք.ա. 260 թ.

3. **Ե՞րբ է գահակալել Ծոփքի թագավոր Սամոսը:**
   1. Ք.ա. 260-240 թթ. 3. Ք.ա. 223-187 թթ.
   2. Ք.ա. 220-201 թթ. 4. Ք.ա. 240-220 թթ.

4. **Ո՞վ է գահակալել Ք.ա. 240-220 թթ:**
   1. Արդիսարեսը 3. Քսերքսեսը
   2. Արշամը 4. Երվանդ IV-րդը

5. **Ե՞րբ են միմյանցից անջատվել Ծոփքը և Կամմագենեն.**
   1. Ք.ա. 260 թ. 3. Ք.ա. 220 թ.
   2. Ք.ա. 212 թ. 4. Ք.ա. 201 թ.

6. **Ե՞րբ են հայկական թագավորությունները նվաճվել Սելեկյանների կողմից.**
   1. Ք.ա. 260 թ. 3. Ք.ա. 212 թ.
   2. Ք.ա. 220 թ. 4. Ք.ա. 201 թ.

7. **Ո՞վ է նշանակվումԾոփկի կառավարիչ.**
   1. Արիարաթը 3. Պտղոմեոսը
   2. Պերտիկասը 4. Զարեհը

8. **Երվանդ IV-ը կառուցել է՝**
   1. Բագարանը 3. Արմավիրը
   2. Էկբատանը 4. Շողը

9. **Ե՞րբ է գահակալել Երվանդ IV Վերջինը:**
   1. Ք.ա. 223-187 թթ. 3. Ք.ա. 240-220 թթ.
   2. Ք.ա. 220-201 թթ. 4. Ք.ա. 260-240 թթ.

10. **Կատարել Համապատասխանեցում.**

| | |
|---|---|
| 1. Ալ. Մակեդոնացի | ա. Ք.ա. 336-331 թթ. |
| 2. Երվանդ III | բ. Ք.ա. 223-187 թթ. |
| 3. Դարեհ III | գ. Ք.ա. 260-240 թթ. |
| 4. Անտիոքոս III | դ. Ք.ա. 336-323 թթ. |
| | ե. Ք.ա. 331-300 թթ. |

## 6. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ ԵՐՎԱՆԴՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ, ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԸ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ, ԲԱՆԱԿԸ: (3 ԺԱՄ)

**Ա) Հայկազունի Երվանդյանների թագավորության տնտեսությունը (1 ժամ):**

Հայկազունի Երվանդականների օրոք Հայաստանն ուներ իր ժամանակի համար բարձր զարգացած տնտեսություն, որի համար կային բարենպաստ պայմաններ: Հայաստանը հարուստ էր բերրի և արգավանդ դաշտերով ու գետահովիտներով (Արարատյան, Շիրակի, Տարոնի, Բագրեվանդի, Բասենի և այլն), ընդարձակ ալպյան մարգագետիններով ու արատավայրերով, ոսկու, արծաթի, երկաթի, պղնձի, կապարի հանքերով ու շինանյութերով:

Տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որը երկրի բնակչության ապրուստի անհրաժեշտ ու կարևոր միջոցն էր: Նրանք զբաղվում էին երկրագործությամբ, մշակում էին ցորեն, գարի, քնջութ, կտավատ և այլն:

Հայաստանում, հատկապես նրա նախալեռնային և լեռնային շրջաններում զարգացած էր անասնապահությունը: Հայերը պահում էին խոշոր և մանր եղջերավոր անասուններ՝ կով, ոչխար, այծ, ձի, ջորի, էշ, ուղտ և այլն: Հայերը զբաղվում էին նաև որսորդությամբ: Վկայություններ են պահպանվել թռչնաբուծության և թչնորսության մասին:

Նշված շրջանի տնտեսության կարևոր ճյուղերից էր արհեստագործությունը: Արհեստներից զարգացած մետաղագործությունը (զինագործություն, դարբնությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը), կավագործությունը, քարագործությունը, հյուսնությունը և այլ արհեստներ: Այդ մասին են վկայում գրավոր տեղեկությունները և հնագիտական նյութերը: Այս տեղեկությունները լրացվում են հնագիտական պեղումներից (Էրեբունի քաղաք-ամրոցում, Դվինում, Երզանկայում, Կարինիում և այլ վայրերում) հայտնաբերված իրերով ու առարկաներով: Նշված վայրերից գտնվել արծաթից ու բրոնզից պատրաստված ու գեղազարդված եղջերաբաժակներ, թասեր գավաթներ, ամաններ, ինչպես նաև կավե կարասներ, կժեր, կճուճներ, տարբեր նյութերից պատրաստված զանազան գույնի ուլունքներ, քարե տնային իրեր և այլն: Այդ իրերի ու առարկաների նմանությունից կարելի է ենթադրել, որ դրանք արտադրվել են ուրարտական ժամանակաշրջանի այն արհեստանոցներում, որոնք շարունակել են իրենց գործունեությունը Երվանդականների օրոք:

Հայստանի տնտեսության մեջ Ք.ա. VI-III դդ. կարևոր դեր է խաղում արտաքին և ներքին առևտուրը: Հայաստանով էին անցնում ժամանակի միջազգային նշանակության մի քանի առևտրական ուղիներ, որոնցից են իրանական սարահարթից Արաքսի հովտով դեպի Սև ծովի ափերը և Միջագետքից ու Ասորիքից դեպի Անդրկովկասի խորքերը գնացող ճանապարհները: Հայաստանի միջով էին անցնում նաև Դարեհ I-ի օրոք կառուցված Հին աշխարհի մեծագույն մայրուղիներից մեկը՝ «Արքայական ճանապարհը»: 2400 կմ երկարությամբ այդ ճանապարհը ձգվում էր պարսկական Շոշ (Սուզա) քաղաքից մինչև փոքրասիական Սարդես քաղաքը: Հայաստանի տարածքի հարավ-արևմտյան մասում «Արքայական ճանապարհը» ուներ 15 կայարաններից կազմված մի մեծ հատված՝ 330 կմ երկարությամբ: Տարբեր երկրներ և ժողովուրդներ միացնող այդ առևտրական ուղիները իրենց հետ բերում են տարանցիկ առևտրի հնարավորություններ: Այդ ուղիների շնորհիվ Հայաստանը ներգրավվում է հեռավոր ու մոտավոր առևտրական կապերի մեջ՝ բազմապատկելով երկրից արտահանվող և ներմուծվող ապրանքների քանակն ու տեսակները: Հայաստանն առևտրական ուղիներով կապված է եղել նաև Փոքր Ասիայի քաղաքների հունական աշխարհի շուկաների հետ: Այդ են ցույց տալիս Էրեբունի քաղաք-ամրոցի շրջակայքում գտնված բացահայտ հին հունական ծագմամբ արծաթե եղջերաբաժակը, միլեթյան դրամները: Բացի գինուց՝ Հայաստանից արտահանվում էին

ներկեր՝ «որդան կարմիր», կաշի, բուրդ, նժույգներ, ջորիներ, մետաղներ, արհեստագործական արտադրանք: Հայաստան էին ներմուծվում մետաքս, բամբակ, համեմունքներ, թանկարժեք քարեր, ապակյա անոթներ և այլն: Արտաքին առևտրի հետ միասին երկրի տարբեր քաղաքների ու բնակավայրերի միջև աշխուժանում է ներքին առևտուրը: Ներքին առևտրի վերելքին նպաստում է ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը և դրամների թողարկումը: Սատրապական շրջանում դրամներ են հատել Օրոնտես-Երվանդ II-ը (ոսկյա, արծաթյա և պղնձյա), իսկ Ք.ա. III դարում՝ Ծոփքի և Փոքր Հայքի թագավորները: Հայկական դրամների թողարկումը պայմանավորված էին տեղական պահանջներով, ունեին տեղական նշանակություն և դուրս չէին գալիս ներքին շուկայի սահմաններից: Ք.ա. VI-III դդ. Հայաստանի տնտեսական զարգացումը, անկախ պետականության վերականգնումը և նրա մասնակցությունը միջազգային առևտրին ու ապրանքադրամական շրջանառությունը մեծապես նպաստում են քաղաքային կյանքի վերազարդոնքին: Հայտնի է, որ Վանի թագավորության շրջանում քաղաքական կյանքը ծանր հարված է ստանում ու մարում: Քաղաքների մեծ մասը կիմմերների և սկյութների արշավանքի հետևանքով ավերվում են ու կործանվում: Պահպանվում է միայն դրանց մի փոքր մասը՝ Տուշպա-Վանը, Էրեբունին, Արմավիր-Արգիշտիխինիլին և այլն:

Ք.ա. IV դ. սկսվում է քաղաքների զարգացման մի նոր փուլ: Հարմարավետ վայրերում աշխուժանում է քաղաքային կյանքը, քաղաքները ռազմավարչական կենտրոններից վերածվում են տնտեսական կենտրոնների, ապա վրա է հասնում հելլենիստական շրջանը, բերելով իր հետ քաղաքային կյանքի իսկական ծաղկում, նորանոր քաղաքների առաջացում: Քաղաքաշինության օրրաներ են դառնում Արարատյան դաշտը, Ծոփքն ու Կոմագենեն: Այստեղ խաչվող առևտրական ուղիների վրա վեր են խոյանում շուրջ մեկ տասնյակ քաղաքներ: Արարատյան դաշտը, որտեղ գտնվում էր Երվանդակաների մայրաքաղաք Արմավիրը, Ք.ա. IV դարի II կեսից արդեն դարձել էր Հայաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի կենտրոնը, նրա սիրտը: Այստեղ Երվանդ IV-ը Ք.ա. III դարի վերջում, Արաքսի և Ախուրյանի գետախարնուրդի մոտ կառուցվում է Երվանդաշատ մայրաքաղաքը և արքունիքը Արմավիրից տեղափոխում այնտեղ: Նոր մայրաքաղաքից հյուսիս նա կառուցում է Երվանդակերտ դաստակերտը և Երվանդավանը, իսկ Աղուրյան գետի ափին՝ Բագարան քաղաք սրբավայրը՝ այն դարձնելով իր պետության պաշտպանմունքային կենտրոնը:

Ծոփքի թագավորները ևս զբաղվում են քաղաքների շինարարությամբ: Արքա Շամը Կոմմագենում հիմնադրում է Սամոսատ, իսկ Ծոփքում՝ Սամոկարտ քաղաքները: Շամին հաջորդած Արշամը Ծոփքում կառուցում է Արշամաշատ մայրաքաղաքը և Արամեա (Արշամեա)անունով երկու քաղաք Կոմմագենեում:

Քաղաքների բարձրադիր մասում վեր էր խոյանում պարսպապատ միջնաբերդը, որի շուրջ տարածվում էր բուն քաղաքը, որը, որպես կանոն, նույնպես պարսպապատ էր: Հայկական քաղաքների բնակչությունը հելլենիստական աշխարհի մյուս քաղաքների նման ունեցել է վերնախավին պատկանող քաղաքացիներից կազմված արտոնյալ համայքներ: Դրանք բաղկացած էին քաղաքի հարուստ բնակիչներից, արհեստանոցներից, խանութներից տերերից և վաճառականներից: Քաղաքային համայնքի մեջ չմտնող բնակչությունն իր հերթին կազմված էր ազատ, բայց ոչ լիիրավ խավերից և մասամբ էլ ստրուկներից: Քաղաքային համայնքներն ունեին մասնակի ինքնավարություն, ազատված էին որոշ հարկերից ու պարհակներից: Նրանք որպես նվեր թագավորից ստանում էին հողային տիրույթներ:

**Բ) Հասարակական կյանքը, առօրյա կյանքն ու կենցաղը (1 ժամ):** Ք.ա. VI-III դդ. հայ հասարակության զարգացումը գնում է սոցիալական շերտավորման և ստրկատիրական հարաբերությունների ձևավոր-ման ուղիով: Հասարակության մեջ իշխող դիրք գրավող տոհմացեղային (տոհմիկ) ավագանին աստիճա-նաբար վերածվում էր ստրկատեր ավագանու: Տոհմացեղային ավագանու

ներկայացուցիչները կազմա-կերպում էին իրենց սեփական տնտեսությունն՝ օգտագործելով ռազմագերիների և աղքատացած համայ-նականների աշխատանքը, իրենց տիրությունները կառավարելու համար նշանակվում էին հատուկ պաշ-տոնյաներ, կառավարիչներ: Ժամանակի ընթացքում այդ ավագանու շարքերը լրացնում էին բարձր զինվորականները, վարչական և հարկային պաշ-տոնյաները և նույնիսկ քրմական դասի ներկայացուցիչները:

Ինչպես Աքեմենյան Պարսկաստանում և առաջավոր Ասիայի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում հողը պետության սեփականություն էր: Բացի հողից՝ պետությանը կամ թագավորին էր պատկանում քաղաքները, բերդերը ու ամրոցները, հանքերը, ջրանցքները, ճանապարհները: Ամենաընդարձակ տիրույթներն ունեին Երվանդական սատրապ արքաները: Օրոնտես-Երվանդ II-ի գլխավոր տիրույթն էր Վանա լճի մոտակայքում գտնվող կանգնած կամ գյուղերով շրջապատված ապարանք-ամրոցները, որոնք նույնպես պատկանել է սատրապին կամ նրա ենթակային:

Հայ տնտեսական և հասարակական կյանքի հիմքը կազմում է գյուղական համայնքը, որը գոյություն ուներ շատ երկար դարեր: Գյուղի բնակիչները կազմում էին համայնք, որը ղեկավարելու համար ընտրվում էր գյուղի ավագ՝ Գեղջավագ: Համայնքի անդամներն սկզբում ունեին հավասար իրավունք: Հողը բաժանվում էր հավասար կերպով: Հարկերը գանձվում էին նույնպես հավասար: Համայնքի անդամ գյուղացիները համայնքին պատկանող արոտավայրերից ու անտառներից դարձյալ օգտվում էին հավասարապես: Բոլոր կարևոր խնդիրները քննարկվում և լուծվում էին համայնքի անդամների ընդհանուր ժողովում: Գյուղական համայնքըկազմված էր հայրական իրավունքի վրա հիմնված մեծ ընտանիքներից: Այդ ընտանիքներն ունեին իրենց սեփական տունը, տնտեսությունը, անասունները,գյուղատնտեսական գործիքները, տնային կենցաղային իրեր, կենսամթերքները խմելիքները և այլն: Ուրիշ խոսքով դրանք առանձին ընտանիքներ էին, որոնք արտադրության միջոցների և սպառման առարկաների նկատմամբ ունեին մասնավոր սեփականության իրավունք:

Քսենոփոնը ուշագրավ և հավաստի տեղեկություններ է հաղորդում հայկական գյուղերի, գյուղական տների, բնակչության զբաղմունքի, կենցաղի և ուտելիքի մասին: Նա նշում է, որ բոլոր գյուղերն ունեին իրենց գեղջավագները, որոնց հետ հույները լուծում էին իրենց խնդիրները: Հայաստանի հարավի գյուղերի տները աշտարակավոր էին, իսկ արևմտյան մասի տները «գետնափոր էին, մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ»: Տունն ուներ մեկ այլ մուտք, որը նախատեսված էր անասունների համար և փորված էր հողի մեջ: Մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով: Այստեղ կար նաև ցորեն և գարի և ընդեղեն և կարասների մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ (խոսքը գարեջրի մասին է): Գետնի մեջ թաղված այդ կարասներից գինին և գարեջուրը խմում էին եղեգնի փողի օգնությամբ: Հույն պատմիչները վկայում են, որ հայ ավագանին հագնում էին կարճ վերնազգեստներ, ճտքավոր կոշիկներ, իսկ գյուղացիները՝ տարբեր գույնի երկար զգեստներ և տրեխներ: Նրանք կրում էին նաև սրածայր սաղավարտանման գլխարկներ:

Սակայն ժամանակի ընթացքում փոխվում է գյուղական համայնքի բնույթը, ծագում են նոր երևույթներ, և համայնքը սկսում է շերտավորվել: Որոշ ընտանիքներ ավելի կարողություն և ուժ էին ձեռք բերում և յուրացնում լավագույն հողերը: Թույլերին մնում էր բավարարվել մնացած անորակ հողերով: Փաստորեն համայնքի անդամների մի մասի ուժեղացումը կատարվում էր մյուս մասի թուլացման հաշվին: Առաջանում են ընտանիքներ, որոնք կորցնելով իրենց տնտեսական կարողություններ, ստիպված են լինում պարտք վերցնել հարուստներից՝ իրենց գոյությունը պահպանելու համար: Նրանք դառնում են պարտապաններ և ընկնում կախյալ վիճակի մեջ: Չկարողանալով վճարել պարտքը, նրանք աշխատում են պարտատիրոջ համար: Համայնք կազմող գյուղացիական

ընտանիքներում ծանրանում է կանաց և երեխաների վիճակը: Արդեն Ք.ա. II դարում ստրկատիրական հասարակության պայմաններում գյուղական համայնքի այսօրինակ կախյալ վիճակը նմանվում է ստրկատիրականին և հանգում դրան:

**Գ) Պետական կարգը, բանակը (1 ժամ):** Երվանդականների թագավորությունը արևելյան տիպի միապետություն էր, որի գլուխ կանգնած էր թագավորը, իսկ աքեմենյան տիրապետության շրջանում թագավոր-սատրապ, որը ենթարկվում էր Աքեմենյան արքաներին՝ սատրապի կարգավիճակով: Հայաստանի արևմտյան մասն ուներ իր փոխկառավարիչը, որը ենթարկվում էր թագավոր-սատրապին կամ գուցե նրա օգնականն էր: Բոլոր գյուղերն ունեին իրենց ղեկավարները՝ գեղջավագները: Չնայած Աքեմենյան Պարսկաստանի նկատմամբ ունեցած հարկային և զինվորական պարտականություններին՝ Հայաստանը պահպանում է իր պետական կառավարչական, տնտեսական, լեզվական, կրոնական ներքին անկախությունը: Արտաքին բնագավառում թագավորին էր վերապահվում հայտարարելը, հաշտություն կնքելը, այլ պետությունների հետ բանակցություններ վարելը՝ անձամբ, գրագրությունների միջոցով կամ պատվիրակների օգնությամբ: Ներքին բնագավառում թագավորի ձեռքում էր կենտրոնացված երկրի և՛ օրենսդրական, և՛ գործադիր իշխանությունը: Նա է երկրի կյանքը բոլոր բնագավառների գերագույն ղեկավարը, զորքերի գերագույն հրամանատարը: Նրա իրավասության մեջ էր մտնում քաղաքներ հիմնադրելը և անվանակոչելը: Թագավորին էր պատկանում երկրի հողերը, քաղաքները, բերդերը, ամրոցները, հանքերը, ջրանցքները, ճանապարհները: Երվանդական թագավորները կրում էին թագավոր տիտղոսը: Երվանդական թագավորների իշխանությունը ժառանգական էր և անցնում էր հորից որդուն: Թագավորության իշխանության ժառանգականությունը պահպանվել է թե՛ Երվանդական թագավորության սկզբնական շրջանում՝ Ք.ա. VII-VI դդ., և թե՛Աքեմենյան սատրապության շրջանում, երբ սատրապները պատկանում էին միևնույն Երվանդական արքայատոհմին: Երվանդականները հորից որդի շարունակում էին իշխել նաև Հայաստանի անկախության վերականգնումից հետո՝ Ք.ա. IV դարի վերջում և III դարի ընթացքում:

Թագավորից հետո երկրի կարևորագույն դեմքը քրմապետն էր: Նա ոչ միայն երկրի գերագույն հոգևոր առաջնորդն էր, այլ նաև մեծ դատավորը, թագավորի գլխավոր խորհրդականը: Այդ պաշտոնը զբաղեցնում էր կամ թագավորի եղբայրը կամ թագավորական ընտանիքի մյուս անդամները:

Թագավորը երկիրը կառավարում էր իր անմիջական շրջապատի՝ արքունիքի միջոցով: Այստեղ առաջին տեղերը կիսում էին թագավորի հարազատները՝ նրա որդիները և եղբայրները: Սրանց կողքին էին մեծատոհմիկ և նորաթուխ ծառայող ազնվականության բարձր խավի ներկայացուցիչները: Սրանք էին համարվում երկրի բարձրագույն ղեկավար պաշտոնյաների կազմը, որոնք ղեկավարում էին տնտեսական, ռազմական, ֆինանսական և այլ բնագավառներ կամ վարում էին խոշոր կարևոր երկրամասեր ու քաղաքների վերակացությունը: Բարձրաստիճան պաշտոնյաներից հիշատակվում էին զորավար-սպարապետները, հացարաները, մատռվակները: Հատուկ նշանակություն ուներ դպրատունը, որի մեջ կարևոր դեմք էր դպիրը:

Երվանդականների թագավորությունը հիմնականում ընդգրկում էր Վանի թագավորության տարածքը: Թագավորության սահմանները հյուսիս-արևելքում ձգվում էին մինչև Կուր գետը, արևելքում՝ Մարաստանը, հարավում՝ Հյուսիսային Միջագետքը, Մասիուս լեռներով մինչև Եփրատ, հարավ-արևմուտքում՝ մինչև Կոմմագենների արևմտյան եզրը, իսկ հյուսիս-արևմուտքում՝ մինչև Սև ծովի ափերը: Աքեմենյան տերության կողմից նվաճվելուց հետո Հայաստանը դառնում է պարսկական 13-րդ սատրապությունը:

Երվանդական պետության կարևոր մասն էր կազմում նրա անվտանգության երաշխավոր բանակը: Երվանդականները ստեղծել էին բավականին հզոր բանակ, որի թիվը հասնում էր 48 հազարի՝ 8 հազար հեծելազոր և 40 հազար հետևակ: Բացի դաշտ դուրս բերվող այս զորքերից՝ մեծ

քաղաքներում և ամրոցներում մշտապես պահվում էին նաև կայազորներ: Հեծելազորը բանակի գլխավոր հարվածային ուժն էր և կազմվում էր ազատների դասերից: Հետևակը, որը կազմում էր բանակի ճնշող մեծամասնությունը, կազմված էր նետաձիգներից, նիզակակիրներից, տեգավորներից, սակրավորներից: Անհրաժեշտության դեպքում բանակը համալրվում էր ազատ բնակչությունից հավաքագրված աշխարհազորային ջոկատներով: Բանակի կազմում կային նաև վարձկան զորքեր: Քսենոփոնը պատմում է, որ Հայաստանի սահմանն անցնելիս իրենց դիմագրավող հայկական զորքում գտնվող վարձկան խալդայները զինված էին հյուսկեն երկար վահաններով ու նիզակներով:

Ըստ մեզ հասածտեղեկությունների՝ հայերն իբրև զենք օգտագործում էին սրեր, դաշույներ, նետ ու աղեղ, կարճ ու երկար նիզակներ, տեգեր, երկսայր տապարներ: Նրանց համար որպես պաշտպանական միջոց ծառայում էին մեծ և փոքր վահանները, երկաթե կամ պղնձե լարերով հուսված սաղավարտները, զրահները և այլն:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տնտեսության ո՞ր ճյուղերն են զարգացած եղել Հայաստանում Հայկազունի Երվանդունիների օրոք:
2. Ձեր կարծիքով որո՞նք են Հայաստանի միջազգային առևտրական կապերի զարգացման պատճառները: Հիմնավորեք ձեր պատասխանը:
3. Ինչպե՞ս կարող եք ապացուցել, որ Ք.ա. VI-III դդ Հայաստանում զարգացված էր արհեստագործությունը: Ի՞նչ եք կարծում ձեր բերած փաստարկները բավարար են արդյոք խոսելու Հայաստանում արհեստագործության զարգացման բարձր մակարդակի մասին:
4. Ձեր կարծիքով ինչո՞ւ Ք.ա. III դարում Հայաստանում վերելք ապրեց քաղաքաշինությունը: Հիմնավորեք ձեր պատասխանը:
5. Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ է ասվում, որ Ք.ա IV դարի II կեսից Արարատյան դաշտը դարձավ Հայաստանի կենտրոնը: Հիմնավորեք ձեր պատասխանը:
6. Ձեր կարծիքով ի՞նչ տարբերություն կա քաղաքի բնակչության և քաղաքային համայնքի միջև: Հիմնավորեք ձեր պատասխանը:
7. Փորձեք բնութագրել Հայաստանի հասարակական կյանքը Ք.ա. VI-III դդ.: Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան սեփականության նկատմամբ մարդկանց հարաբերություններում: Հիմնավորեք ձեր կարծիքը:
8. Փորձեք բնութագրել Հայաստանի պետական կարգը Երվանդակաների օրոք: Ձեր կարծիքով ի՞նչը կարելի է փոխել այդ պետական կարգում: Հիմնավորեք ձեր պատասխանը:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Լրացրե՛ք «Տնտեսությունը Երվանդակաների օրոք» աղյուսակը.**

| *Տնտեսությունը* | *Ճյուղը, բնութագրությունը* | *Արտադրանքները, ապրանքները* | *Արդյունքներ* |
|---|---|---|---|
| Գյուղատնտեսություն | | | |
| Տրհետագործություն | | | |
| Առևտուր | | | |

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. **Նշվածներից ընտրել այն հանքերը, որոնցով հարուստ էր Հայաստանը.**
   1. Բրոնզ 5. Պղինձ
   2. Պողպատ 6. Արծաթ
   3. Ոսկի 7. Նիկել
   4. Ուրան 8. Երկաթ

2. **Հայերի տներում ի՞նչ էին խմում հույները.**
   1. Գինի և գարեջուր 3. Օղի և կոնյակ
   2. Գարեջուր և օղի 4. Կոնյակ և գինի

3. **Ո՞ւմ օրոք է կառուցվել «արքայական» կոչվող ճանապարհը.**
   1. Դարեհ I-ի 3. Քսերքսեսի
   2. Կյուրոս Մեծի 4.Դարեհ III-ի

4. **Որքա՞ն էր «արքայական» կոչով ճանապահի երկարությունը.**
   1. 2400 կմ. 3. 3400 կմ.
   2. 2000 կմ. 4. 4000 կմ.

5. **«Արքայական» կոչվող մայրուղու երկարության որքա՞ն հատվածն էր անցնում Հայաստանի միջով.**
   1. 420 կմ. 3. 550 կմ.
   2. 330 կմ. 4. 260 կմ.

6. **Ո՞ր քաղաքից էր սկսվում և մինչև ո՞ր քաղաքն էր հասնում «արքայական» կոչվող միջազգային քարավանային ճանապարհը.**
   1. Բաբելոնից Շոշ 3. Սարդեսից Սամոսատ
   2. Շոշից Սարդես 4. Սամոստից Էկբատան

7. **Ո՞ր քաղաքները պահպանեցին իրենց գոյությունը Վանի թագավորության անկումից հետո.**
   1. Ռուսախինիլին և Մենուախինիլին
   2. Մենուախինիլին և Տուշպա-Վանը
   3. Տուշպա-Վան և Էրեբունին
   4. Էրեբունին և Թեյշեբաինին

8. **Որտե՞ղ է կառուցվել Սամոսատ քաղաքը.**
   1. Կորդուքում 3. Կոմմագենեյում
   2. Ծոփքում 4. Փոքր Հայքում

9. **Որտե՞ղ է կառուցվել Արշամաշատ քաղաքը.**
   1. Ծոփքում 3. Կապադովկիայում
   2. Ասորիքում 4. Կոմմագենեում

10. **Ո՞վ է կառուցել Բագարան քաղաք-սրբավայրը.**
   1. Սամոսը 3. Երվանդ III-ը
   2. Արշամը 4. Երվանդ IV-ը

## 7. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐՎԱՆԴՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ: (1 ԺԱՄ)

**Հելլենիստական դարաշրջանը Հայաստանում** Ք.ա. VI -III դդ. Մշակույթը կազմում է ուրարտական մշակույթի շարունակությունը և ուրվագծում է նրա դրսևորման նոր աստիճանը: Այս շրջանի մշակույթի ձևավորումը և զարգացումը կապված էր Երվանդականների օրոք Հայաստանի գյուղատնտեսության, արհեստների, առևտրի բուռն վերելքի և հասարակական հարաբերություններում կատարված փոփոխությունների հետ: Սակայն Ալ. Մակեդոնացու արշավանքներից և Աքեմենյան Պարսկաստանի անկումից հետո Առաջավոր Ասիայի երկրներում սկսվում է հելլենիզմի, այսինքն «հունականության» դարաշրջանը: Ամենուրեք լայն տարածում է ստանում հունարեն լեզուն և հելլենիստական մշակույթը: Հելլենիստական է կոչվում տեղական՝ արևելյան և հունական մշակույթի տարրերի միահուսմամբ առաջացած նոր մշակույթը: Այդ ժամանակ Հայաստանում ևս ստեղծվում է հելլենիստական մշակույթ, որը տարածվում է գլխավորապես արքունիքում, իշխող խավի շրջանում և քաղաքների բնակչության մեջ: Իսկ ժողովուրդը՝ գյուղացիությունը, հեռու էր դրանից: Նա շարունակում էր ապրել իր նահապետական հինավուրց կյանքով՝ ոչ միայն պահպանելով ազգային մշակույթն ու սեփական դիմագիծը, այլև զարգացնելով ու հարստացնելով այն՝ օգտագործելով հելլենիստական մշակույթի նվաճումները: Հելլենիստական դարաշրջանը Հայաստանում տևել է 600 տարի:

Ք.ա. VI–III դդ. հելլենիստականմշակութի մասին մեզ պատկերացում են տալիս պեղումներից հայտնաբերված նյութերը և գրավոր աղբյուրներից քաղված տեղեկությունները: Դրանց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նշված շրջանում առաջընթաց են ապրել ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր մշակույթը:

**Նյութական մշակույթ:** Այս բնագավառում Ք.ա. VI-III դդ. բարձր զարգացման են հասնում գեղարվեստական խեցեղենը և մետաղագործությունը: Այս շրջանից մեզ են հասել լավ թրծված կավից պատրաստված բաց գույնի (մոխրագույն, սրճագույն, կարմրավուն) սափորները: Կավից պատրաստվել են նաև ըմպանակներ, որոնք ունեն կորագիծ հատուկ և ընդգծված, բարձր ու լայնացող պսակ: Ք.ա. VI-IV դդ. հայկական արվեստին բնորոշ են գեղարվեստական ձևավորում ունեցող մետաղե (հատկապես արծաթյա) իրերը: Դրանցից մի քանիսը գտնվում են դեռևս IX դարի II կեսին Արևմտյան Հայաստանում: Այդ իրերի մեջ արվեստի գեղեցիկ նմուշներ են եղջերագավաթները, որոնք եղջուր հիշեցնող գավաթներ են, ներքևի մասում կենդանակերպ և փոքր անցքով:

Նշված շրջանում տարածված էին դրվագման եղանակով զարդարված արծաթյա պնակները կամ լայն ցածր թասերը: Թասերի զարդերը հորինված են լոտոս ծաղկի տարբեր մասերի՝ պսակաթերթիկների, բողբոջների և ծաղկի համադրությամբ: Արվեստի հոյակապ գործեր են երկկանթանք սլացիկ անոթները՝ սափորները (խնջույքասափորները), որոնց կանթերը կենդանակերպ են: Նշված շրջանի արվեստի հրաշալի ստեղծագործություններ են ոսկյա զարդերը, որոնց մասին պատկերացում են տալիս ծայրերն առյուծակերպ ոսկյա մանյակը և մահիկաձև կրծքազարդը: Ոսկյա մանյակը գտնվել է Բասենում՝ Դարույնքի (այժմ Հասան Կալայի) դամբարաններից մեկում, իսկ կրծքազարդը՝ Արմավիրի հնավայրում: Արմավիրի կրծքազարդը հին ոսկերչական արվեստի մի կատարյալ նմուշ է, որի երկու ծայրերին պատկերված են մեկական թռչուն, կենտրոնական մասում՝ երեք ոճավորված ծառ, իսկ ցածր աղեղի ամբողջ եզրով՝ լոտոս ծաղկի և կոկոնի հաջորդական շար արտաքին երեսից ցանցեր են այս կրծքազարդին մեծ շքեղություն է են հաղորդում նրա վանդակների մեջ ամրացված սև և երկնագույն քարերը:

Մշակութային արժեք ունեցող իրեր են քարե անոթները և կնիքները: Հայաստանի տարբեր վայրերից գտնվել զգալի քանակությամբ սկահակներ բարձր ոտքի վրա՝ ամբողջական կամ բեկորների ձևով: Մեծ թիվ են կազմում հնագիտական հուշարձաններում հանդիպող քարե կնիքները: Այդ

կնիքների տակ հարթ երեսի վրա փորագրված են տարբեր՝ մենամարտի (հեծյալների և հետևակայիների միջև) և որսի տեսարաներ: Արվեստի լավագույն նմուշներն են Հայաստանի սատրապական Մեծ Հայքի և Ծոփքի թագավորների թողարկած դրամները, որոնց վրա պատկերված են աստվածներ, կենդանիներ և նրանց դիմանկարները:

Ք.ա. VI դարից ճարտարապետությունը և քաղաքաշինությունը Հայաստանում թևակոխում է նոր փուլ՝ ի հայտ բերելով որոկական նոր հատկանիշներ: Այդ շրջանի բնակավայրերի ճարտարապետությունը բաժանվում է գյուղականի և պալատականի: Գյուղական ճարտարապետության մասին թռուցիկ տեղեկություններ է թողել Քսենոփոնը: Տեսնելով Հայաստանում իր ճանապարհին ընկած գյուղերը՝ նա նկարագրում է, որ երկրի հարավային շրջանների գյուղական տները տարբերվում էին կենտրոնական շրջանների տներից: Երկրի հարավի տները աշտարակավոր էին, իսկ կենտրոնական և հյուսիսային մասի տները՝ ստորգետնյա: Այդ տները ունեին վերևից ջրհոսի բերանի նման բացվածք, որը լայնանում է ներքևի մասում: Այդ մուտքով մարդիկ սանդուղքով իջնում էին սենյակ: Անասունների համար հատուկ մուտք էր փորված գետնի միջով: Այս տները հանդիսանում էին ժողովրդական ճարտարապետության զարգացած ձևի՝ գլխատան նախատիպը:

Պալատական ճարտարապետության լավագույն վկայությունը Աքմենյանների օրոք ուրարտական շրջանի Էրեբունի քաղաք-ամրոցի միջնաբերդում ծավալված շինարարությունն է: Ընդլայնվում է Ք.ա. VIII դարում կառուցված ուրարտական տաճարի նախամուտքի սյունաշարը և այն վերածվում է սյունազարդ դահլիճի: Դահլիճի մեջ պահպանված այն հիմքերից երևում է, որ այն ունեցել է սյուների հինգ շարք, ամեն մի շարքում 6-ական սյուն, որոնք կրել են դահլիճի հարթ ծածկը: Ներքևից եկայնքով, ցածր նստարան էր ձգվում, որի հարավային մասում տեղադրված էր զոհասեղանը: Ելնելով այն հանգամանքից, որ սա ամրոցի տարածքում միակ սրահն էր, կարելի է այն դիտել որպես ընդունասրահ, խորհրդակցությունների և ժողովների վայր:

Ք.ա. VI-III դդ. հայկական մշակույթին բնորոշ է քաղաքաշինության ծավալումը և քաղաքների աճը: Ուրարտական պետության վերացումից հետո հին քաղաքների մեծ մասն անկում էին ապրել: Փաստեր վկայում են, որ, որպես կանոն, վերակենդանացել են միայն այն քաղաքները, որոնք դադարել էին Ուրարտուի թողարկման շրջանում իրենց նախկին դերը խաղալուց: Այդպիսիներից էին Տուշպա-Վանը, Էրեբունին և Արմավիրի-Արգիշտիխինիլին: Սրանցից Վանը և Էրեբունին աքեմենյան ժամանակաշրջանում դարձել էին սատրապական նշանավոր ռազմա-վարչական կենտրոններ: Ինչ վերաբերվում է Արմավիրին, ապա նրա շրջակայքում ուրարտական ժամանակաշրջանից մեզ է հասել թերևս մի ամբողջական մասը կազմող երկու հուշարձան՝ Արմավիր բլուրը և Դավթի բլուրը: Արմավիր քաղաքը վերականգնվել Արարատյան դաշտի արևմտյան մասում, Արաքսի ձախ ափին գտնվող Արմավիր բլուրի վրա և նրա շրջակայքում: Բլրի վրա տեղադրված միջնաբերդը հոյակապ պարսպատերով, հուժկու աշտարակներով, ներսում կառուցված պալատական, պաշտամունքային, աշխարհիկ և տնտեսական բազմապիսի շինություններով հարմար վայր է դառնում Երվանդական թագավորների նստավայր և պետության ռազմաքաղաքական կենտրոն դառնալու համար: Միջնաբերդի շրջան աստիճանաբար ձևավորվում և ընդլայնվում է բուն քաղաքը: Հայաստանի անկախության վերականգնումից հետո Երվանդ III-ը հայոց արքունիքը Վանից տեղափոխվում է Արարատյան դաշտ Արմավիր և այն դարձնում իր մայրաքաղաքը: Արմավիրն ուներ խիստ շեղտված կրոնական բնույթ: Հետևաբար հնարավոր է, որ քաղաքը ձևավորվել է նաև որպես կրոնական կենտրոն: Քաղաքաշինությունը նոր թափ է ստանում Ք.ա. III դարում: Քաղաքների կառուցման համար տեղանք են ընտրվում գետերի ափերը, որոնք բացի քաղաքների տնտեսական պահանջները բավարարելու, դրանց պաշտպանական համակարգի մաս էին կազմում: Քաղաքների բնական պաշպանվածությունը լրացվում են արհեստական շինություններով՝ պարիսպները, հողաթմբեր, քանդակներ և այլն: Այդպես է կառուցվել Երվանդաշատ մայրաքաղաքը: Երվանդ IV-ը Ք.ա. III դարի վերջին Արաքսի և

Ախուրյանի խառնարանի մոտ կառուցում է իր անունը կրող Երվանդաշատ քաղաքը, որը Արմավիրի փոխարեն դառնում է պետության նոր մայրաքաղաքը: Քաղաքաշինության կարևոր օջախներն են դառնում Ծոփքը և Կոմմագենեն՝ իրենց նշանավոր քաղաքներով՝ Սամոսատ, Արշամաշատ և այլն:

**Հոգևոր Մշակույթ:** Նշված պատմական շրջափակում (Ք.ա. VI-III դդ.) զարգացում է ապրում հայ հոգևոր մշակույթը, որի մեջ առաջնային տեղ է գտնում ժողովրդական բանահուսությունը: Բանահուսություն անգնահատելի նշանակություն ունի հին հայերի հավատալիքները, կրոնը, պատմությունը, գրականությունը, արվեստ ուսումնասիրելու համար: Բանահուսության անբաժանելի մասն են կազմում դիցաբանական առասպելները, որոնք կարևոր տեղեկություններ են հաղորդում հայոց հին հավատալիքների և աստվածների դիցարանի մասին: Հայոց դիցարանի գլխավոր աստվածը շարունակում է մնալ Հայկը, որի պաշտանմուքի արմատները գնում են դարերի խորքը: Հայկը երկնքի, լույսի, հայոց երկրին կյանք պարգևող և նրան արտաքին թշնամիներից պաշպանող աստվածն էր: Հայոց դիցարանում ուժի, գեղեցկության, արհեստների ու արվեստների աստվածն էր Տորքը: Նա համարվում էր Հայկի թոռներից մեկը: Տորքը օժտված էր վիթխարի ուժով: Նա այնքան հզոր և ուժեղ էր, որ ծովի ափերին թշնամիների նավերին հանդիպելիս, ափից հսկա ժայռեր էր պոկում և նետում նրանց վրա և ջրասուզ անում: Նա ջարդ ու փշուր էր անում հսկա ժաքռերը, եղունգներով տախտակի նման հարթեցնում և դրանց վրա փորագրում պես-պես նկարներ և քանդակում արծիվներ:

Հայոց դիցարանի հին աստվածներից էր Արան: Նա ձմռանը մեռնող և գարնանը արթնացող բնության աստվածն էր: Արայի պաշտանմունքը նախապես կապված է եղել երկրագործության, ցանքի, բուսականության հետ: Հետագայում հին արևելյան հավատալիքների ազդեցության տակ Արան սկսում է հանդես գալ Շամիրամի հետ միասին: Արայի և Շամիրամի հետ պաշտվում են արալեզ կոչված ոգիները, որոնք մեր մատենագրի թողած տեղեկությունների համաձայն սերված են համարվում շնից: Հին հայերը հավատում էին, որ արալեզները լիզում էին հայրենիքի համար պատերազմի դաշտում ընկած հերոսների վերքերը և հարություն տալիս նրանց: Հայոց դիցարանի մեջ կարևոր տեղ է գրավում Ծովինարը, որը եղել է ջրի, ծովի և անձրևի աստվածուհին: Նրա պաշտանմունքը երկար ժամանակ պահպանվել է մեր ժողովրդի մեջ: Երվանդական թագավորության շրջանում պաշտվել են նաև Արամազդը, Անահիտը, Միհրը և ուրիշ աստվածներ, որոնք այդ ժամանակ երկրորդական դեր են խաղացել հայոց դիցարանում և միայն հետագայում են լայն տարածում ստացել:

Քա VI-III դդ. ստեղծվում են պատմաավանդական բնույթի վիպական զրույցներ, որոնք մեծ վարպետությամբ պատմում էին Հայ գուսանների ու վիպասածները:

Երվանդական շրջանի մասին պատմող գեղեցիկ պատմական ավանդություն է «Տիգրան և Աժդահակ» վեպը, որը ստեղծվել է հայ-մարական հակամարտության տարիներին և ունի հարուստ ու հետաքրքիր բովանդակություն:

Ուրարտական շրջանում ձեռք բերած երգ երաժշտությունն ամրապնդվում է Երվանդականների օրոք: Վերելք է ապրում մասնավորապես թաղման ծեսի հետ կապված ողբը, որի ընդերքում աստիճանաբար զգալի կշիռ է ստանում վիպական սկիզբը: Ծագում է հայոց երաժշտաբանաստեղծական հնագույն ձևերից մեկը՝ ասմունքելով և մեջընդմեջ երգերով պատմում յուրատեսակ պոեմը, որն իր զարգացման մեջ նյութեր է քաղում հայերի սկզբնական պատմությունը և կրոնին վերաբերվող զրուցներից ու առասպելներից: Այս շրջանի երգ-երաժշտությանն է վերաբերվում Գառնիից հայտնաբերված ոսկրե սրինգը, որն ուներ հինգ ձայնա անցք: Կարմիր բլուրից է հայտնաբերվել Ք.ա. VII դ. վերաբերվող մի զույգ բրոնզե ծնծղաներ: Կարելի է կարծել, որ երաժշտական գործիքներից կարող են օգտագործված լինել նաև Ք.ա. I հազարամյակին վերաբերվող եղջերափողերը, որոնք հայտնաբերվել էին Սևանի ավազանից:

Ք.ա. VI-III դդ հայոց մշակույթի մասին խոսելիս չպետք է աչքաթող անել գիրն ու դպրությունը: Հայ դպրության բացակայության պայմաններում, Ք.ա. III դ սկսած կիրառվել է հունարենը: Հնագույն հունարեն արձանագրությունները գտնվում են Արմավիրում՝ գրված երկու մեծ քարի վրա, որոնցում կան մի նամակ ուղղված Երվանդ IV թագավորին և գրական տեքստեր:

Այսպիսով, հայոց արտադրական կյանքի մնացորդները, հավատավիքները, բանահյուսությունը, նրա բազմադարյան մշակութային կյանքի արգասիք են հանդիսանում և ցույց են տալիս մեր ինքնության և ինքնատիպ մշակութի շարունակական և անխաթար զարգացումը իր բնաշխարհում:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով որո՞նք են Ք.ա. VI-III դդ հայկական մշակույթի զարգացման նախադրյալները և ինչո՞ւ է ասվում, որ այդ մշակույթն կազմում է ուրարտական մշակույթի շարունակությունը: Փորձեք հիմնավորել ձեր պատասխանը:
2. Ձեր կարծիքով ի՞նչ է նյութական մշակույթը, մշակույթի ի՞նչ բնագավառներ ընգրկում: Փորձեք բնութագրել այն: Բերեք փաստեր ձեր պատասխանի օգտին:
3. Փորձեք բնութագրել գեղարվեստական խեցեղենի հայտնաբերված նմուշները: Ինչպիսի՞ն է ձեր կարծիքը դրանց գեղարվեստական արժեքի վերաբերյալ: Հիմնավորեք ձեր պատասխանը:
4. Փորձեք բնութագրել Երվանդական թագավորության շրջանի ճարտարապետությունը և քաղաքաշինությունը:
5. Ի՞նչ եք կարծում ինչո՞վ է տարբերվում հոգևոր մշակույթը նյութական մշակույթից, որոնք են նրա բնորոշ գծերը:
6. Ձեր կարծիքով ինչո՞ւ են հին հայերը հոգևոր մշակույթում առաջնային տեղ գրավում դիցաբանական առասպելները և վիպական ավանդազրույցները:
7. Ձեր կարծիքով ինչո՞վ են առանձնանում ժողովրդական բանահյուսության մեջ վիպական զրույցները: Փորձեք պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե պահպանված չլինեին այդ գանձերը:
8. Ի՞նչ եք կարծում հայտնաբերված հնագիտական նյութերը և գրավոր աղբյուրներում պահպանված տեղեկությունները հնարավորություն տալիս են խոսելու Երվանդական թագավորության շրջանում երաժշտություն, թատրոն և դպրություն ունենալու մասին: Հիմնավորեք ձեր պատասխանը:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Լրացրե՛ք «Հայկական մշակույթը» Ք.ա. VI – III դդ. աղյուսակը.**

| *Բնագավառներ* | *Ճյուղեր* | *Նմուշներ, գործեր* | *Գնահատում, արժևորում* |
|---|---|---|---|
| Նյութական մշակույթ | | | |
| Հոգևոր մշակույթ | | | |

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. **Նշվածներից առանձնացնել այն կավե անոթները, որոնք հայտնաբերվել են Հայաստանում հնագիտական պեղումների ժամանակ.**
   1. Սափորներ 3. Սկահակներ
   2. Պտյակներ 4. Ըմպանակներ
   5. Կաթսաներ
2. **Ի՞նչ է գտնվել Բասենում Դարոյնքի (Հասան կալա) դամբարաններից մեկում.**
   1. Ոսկյա մանյակ 3. Կավե սկահակ
   2. Մահիկաձև կրծքազարդ 4. Պղնձյա գավաթ
3. **Երվանդական ժամանակաշրջանի ճարտարապետությունը բաժանվում է՝**
   1. Հայկականի և ոչ հայկականի 3. Պալատականի և քաղաքայինի
   2. Գյուղականի և պալատականի 4. Քաղաքայինի և համայնքայինի
4. **Վերակառուցման արդյունքում ինչի՞ է վերածվել Էրեբունու միջնաբերդի տաճարի նախամուտքի (բակի) սյունաշարը.**
   1. Մառանի 3. Ախոռի
   2. Պահեստի 4. Դահլիճի
5. **Ուրարտական պետության անկումից հետո նրա ո՞ր քաղաքներն են պահպանել իրենց գոյությունը.**
   1. Ռուսախինիլին 4. Էրեբունի քաղաք-ամրոց
   2. Մենուախինիլին 5. Արգիշտիխինիլի-Արմավիրը
   3. Տուշպա-Վանը 6. Թեյշեբաինին
6. **Նշվածներից ո՞ր քաղաքներն են եղել Մեծ Հայքի մայրաքաղաքը Երվանդական թագավորության անկախության վերականգնումից հետո.**
   1. Էրեբունին և Արմավիրը 3. Երվանդաշատը և Վանը
   2. Արմավիրը և Երվանդաշատը 4. Վանը և Սամոսատը
7. **Երվանդական թագավորության անկախության վերականգնումից հետո Հայաստանի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի կենտրոնը դարձավ՝**
   1. Արարատյան դաշտը 3. Սևանի ավազանը
   2. Վանա լճի շրջակայքը 4. Արածանի ակունքների շրջանը
8. **Ք.ա. VI-III դդ. հայոց հոգևոր մշակույթի մեջ առաջնային տեղ է գրվում՝**
   1. Երաժշտությունը 3. Կերպարվեստը
   2. Բանահյուսությունը 4. Թատրոնը
9. **Ո՞վ է Երվանդական շրջանի դիցարանի գլխավոր աստվածը.**
   1. Արամը 3. Արան
   2. Հայկը 4. Տորքը
10. **Ո՞վ էր Երվանդական շրջանի դիցարանում ուժի, արվեստների և արհեստների հովանավոր աստվածը.**
    1. Հայկը 3. Տորքը
    2. Միհրը 4. Տիրը

## ԹԵՄԱ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ք.Ծ.Ա.II-I ԴԴ. (14 ԺԱՄ)

### 1. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ, ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ, ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: (3 ԺԱՄ)

**Ա) Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության ձևավորման պատմաաշխարհագրական միջավայրը, թագավորության հիմնադրումը (2 ժամ):** Ք.ա III դարի վերջին Սելևկյան հզոր արքա Անտիոքոս III-ը ձեռնամուխ է լինում տրոհված ու թուլացած Հայաստանի նվաճմանը: Ք.ա. 201թ. Սելևկյան թագավորի զորքերը հայազգի զորավարներ Արտաշեսի և Զարեհի գլխավորությամբ ներխուժում են Մեծ Հայք և Ծոփք: Մեծ Հայքի թագավոր Երվանդ IV Վերջինի զորքերը սելևկյանների դեմ ճակատամարտում պարտություն են կրում: Արտաշեսը գրավում է Երվանդաշատ մայրաքաղաքը: Երվանդ IV-ը (Ք.ա 220-201թթ.) սպանվում է: Արտաշեսը թագավորական շուքով թաղում է նրան: Ծոփքում Երվանդականների վերջին ներկայացուցիչ Քսերքսեսը նույնպես զրկվում է իր իշխանությունից: Մեծ Հայքը և Ծոփքը վերածվում են սելևկյան նահանգների՝ ստրատեգիաների, որտեղ որպես նահանգապետեր, կառավա-ռում են Արտաշեսը և Զարեհը: Սելևկյանների ազդեցության տակ են ընկնում նաև Փոքր Հայքը և Կոմմագենեն: Այս վիճակը տևում է ընդամենը 10 տարի: Արևմուտքում հզորացող Հռոմեական պետությունը, վերջ տալով Կարթագենի հզորությանը և իր գերիշխանությանը ենթարկելով բալկանյան երկրները, ներխուժում է Փոքր Ասիա, որը մտնում էր Սելևկյան պետության կազմի մեջ: Բախումը Հռոմի և Սելևկյանների միջև դառնում է անխուսափելի: Ճակատամարտը տեղի է ունենում Ք.ա 190թ. Փոքր Ասիայի արևմուտքում՝ Մագնեսիա քաղաքի մոտակայքում և ավարտվում Սելևկյան Անտիոքոս III թագավորի պարտությամբ, որից հետո նրա տերությունը սկսում է քայքայվել: Օգտվելով դրանից Մեծ Հայքի և Ծոփքի ստրատեգոսներ Արտաշեսը և Զարեհը իրենց անկախ թագավորներ են հայտա-րարում՝ Արտաշեսը՝ Մեծ Հայքում, Զարեհը՝ Ծոփքում: Թշնամի Սելևկյան պետությունը թուլացնելու նպատակով Հռոմը անմիջապես ճանաչում է ապստամբած երկրների անկախությունը: Փոքր Հայքը և Կոմմագենեն ևս վերականգնում են իրենց անկախությունը:

Արտաշեսը դառնալով Մեծ Հայքի թագավոր, փաստորեն Ք.ա. 189թ. հիմք է դնում նոր թագավորական դինաստիայի, որը նրա անունով կոչվում է Արտաշեսյան: Արտաշես I-ը (Ք.ա. 189-160թթ) հայ ժողովրդի պատմության մեջ նշանավոր ռազմական ու պետական գործիչներից էր, որը մեծ համբավ ուներ հին աշխարհում: Արտաշեսն իրեն ներկայացնում էր որպես Երվանդական արքայատոհմի սերունդ, որպեսզի օրինական համարվի իր գահակալությունը:

Արտաշես I-ը վարում է ակտիվ արտաքին քաղաքականություն, որն ուղղված էր հայկական հողերի միավորման գործին: Հայկական լեռնաշխարհի բոլոր ծայրամասերի բնակչությունը վաղուց արդեն հայախոս էր, սակայն օգտվելով Երվանդական թագավորության թուլացումից, դրանց մի մասը դեռևս Ք.ա. III դարում գրավել էին հարևան պետությունները: Արտաշես I-ը հայկական հողերը ետ վերադարձնելու նպատակով արևելք, հյուսիս, արևմուտք և հարավ ուղություններով ձեռնարկում է մի շարք արշավանքներ, որոնց մասին պատմում է հույն աշխարհագրագետ Ստրաբոնը: Արևելյան արշավանքի ժամանակ, որն ուղղված էր Ատրպատականի դեմ, Արտաշես I-ի զորքերը հասնում են մինչև Կասպից ծով և Մեծ Հայքին վերադարձնում Փայտակարանն ու Պարսպատունիքը: Վրաստանի դեմ ուղղված հյուսիսային արշավանքների ժամանակ հայկական զորքերը մտնում են

Գուգարք և Կղարջք, որոնք նախապես եղել են Երվանդական թագավորության մասեր և նվաճվել էին վրացիների կողմից: Այդ արշավաքներից մեկի ժամանակ ազատվում է Վրաստանում գերության մեջ գտնվող Արտաշեսի որդի Զարեհը: Արտաշես I-ի արևմտյան արշավանքը կապված էր մի կողմից Պոնտոսի ու նրա դաշնակից Փոքր Հայքի և մյուս կողմից Կապադովկիայի միջև ծագած պատերազմի հետ: Արտաշեսը օգնում է Կապադովկիային: Օգտվելով այդ պատերազմում Պոնտոսի և Փոքր Հայքի պարտությունից՝ արևմուտքում Արտաշեսը Մեծ Հայքին է միացնում Կարինն ու Դերջանը, որոնք այն ժամանակ Փոքր Հայքի մասն էին կազմում: Բացի այդ, Արտաշեսը դաշինք է կնքում Ծոփքի թագավոր Զարեհի հետ և նրանք միասին նվաճում և իրար մեջ են բաժանում Եփրատի հովտում գտնվող Եկեղիք երկրամասը և նրան կից հողերը: Արտաշեսը արշավանք է ձեռնարկում նաև դեպի հարավ՝ Սելևկյան պետության դեմ, որը Մեծ Հայքի ամենավտանգավոր հարևանն էր: Հարավային արշավանքի ժամանակ Արտաշեսին հաջողվում է Մեծ Հայքին միացնել Տմորիք երկրամասը: Սելևկյան թագավորը փորձում է վերականգնել իր ազդեցությունը Տմորիքի վրա: Տեղի է ունենում արյունահեղ ճակատամարտ, բայց այն չի փոխում ստեղծված իրավիճակը: Տմորիք երկրամասը մնում է Մեծ Հայքի կազմում: Ծոփքի թագավոր Զարեհի մահից հետո Արտաշեսը փորձում է Ծոփքը ևս միացնել Մեծ Հայքին, բայց չի հաջողվում, որովհետև Ծոփքին օժանդակում էր Կապադովկիան: Այսպիսով, Արտաշեսի միավորիչ գործունեության շնորհիվ Մեծ Հայքի պետության տարածքը հասնում է Հայկական լեռնաշխարհի սահմաններին, բացի Ծոփքից, որը տակավին անկախ է մնում:

Մեծ Հայքի հողերի միավորումից հետո Հայաստանը Ք.ա. II դարի կեսին ընդարձակ ու ինքնուրույն պետություն էր և նոր մայրաքաղաքի կարիք էր զգում: Ք.ա. 185թ. Արտաշեսը կառուցում է այդ նոր մայրաքաղաքը, որը նրա անունով կոչվում է Արտաշատ: Արտաշատը կառուցվում է ներկայիս Խոր Վիրապի տեղում, Արարատյան դաշտում, որը արդեն դարձել էր Հայաստանի սիրտը: Այստեղ էին խաչաձևվում հարավից-հյուսիս և արևմուտքից-արևելք ձգվող առևտրական ճանապարհները: Իր բարենպաստ աշխարհագրական դիրքի շնորհիվ շուտով Արտաշատը դառնում է հին աշխարհի կարևոր կենտրոններից մեկը, ինչպես Ստրաբոնն է վկայում մեծ բնակչություն ունեցող ճոխ ու գեղեցիկ քաղաք: Արտաշատն այնքան մեծ էր, որ հռոմեացիներն այն անվանում էին «Հայկական Կարթագեն»: Արտաշատի կառուցման տեղի ընտրության և հատակագծի կազման գործում հայոց թագավորին օգնել է կարթագենացի հռչակավոր զորավար Հաննիբալը: Քաղաքն կառուցվել էր ինը հարևան բլուրների վրա, իսկ միջնաբերդ շրջապատված էր հզոր պարիսպներով: Արտաշատի պարիսպները երեք կողմից ողողվել են Արաքսի ջրերով, իսկ 4-րդ կողմից այն պաշտպանված է եղել պատվարով ու խրամով: Հին աշխարհում ընդունված սովորության համաձայն Արտաշատը բնակեցնելու նպատակով այնտեղ է տեղափոխվել նախկին մայրաքաղաք Երվանդաշատի բնակչության մի մասը: Փաստորեն հին քաղաքների բնակչության հաշվին նորաստեղծ քաղաքների բնակեցումը Հայաստանում սկսվում է կիրառվել Արտաշեսի ժամանակներից:

Արտաշես I-ը զբաղվում է նաև երկրի ներքին կյանքի հարցերով: Նա իրականացնում է մի շարք բարենորոգումներ, որոնք մեծապես նպաստում են Մեծ Հայքի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի զարգացմանը: Արտաշես I-ի ձեռնարկած ամենախոշոր միջոցառումը հողային բարեփոխումը էր: Նրա օրոք ամրապնդված մասնավոր հողատիրական տնտեսությունները՝ ագարակներն ու դաստակերտները, սկսում են ընդարձակվել գյուղական համայնքի հողերի հաշվին: Այդ պատճառով առաջանում են հողային լուրջ վեճեր, որոնց խորացումը վտանգավոր էր երկրի ներքին կյանքի համար: Ավագանու, այսինք հողի մասնավոր տնտեսատերերի կողմից գյուղացի-համայնականների հողերի բռնազավթումները կանխելու և հողի սեփականության խնդիրները լուծելու համար հայոց թագավորը որոշում է գյուղերի և ագարակների սահմանները՝ նրանց վրա դնելով հողաբաժան սահմանաքարեր: Դրանք՝ վրաները պսակաձև փոսեր ունեցող քառակուսի քարեր էին, որոնք տնկում էին հողի մեջ, իսկ դրանց վրա կանգնեցնում երկրի մակերևույթից փոքր բարձրություն

ունեցող քառակուսի սյուներ: Մինչև այժմ գտնվել են Արտաշես I-ի թողած շուրջ մեկ տասնյակ սահմանաքարեր արամերեն արձանագրություններով:

Արտաշեսը կատարում է նաև այլ բարեփոխումներ: Նա սահմանում է թագավորական տան նախնիների պաշտանմունքը: Նա նորաստեղծ մայրաքաղաք Արտաշատում տաճար է կառուցում, որի մեջ դրվում է Հայոց աշխարհի հովանավոր աստվածուհի Անահիտի արձանը, իսկ նրա կողքին դրվում են Արտաշեսի նախնիների՝ Երվանդական և Աքեմենյան թագավորների քանդակները, որոնց ժողովուրդը պետք է երկրպագեր որպես աստվածների և զոհեր մատուցել նախնիների աստվածացումը բարձրացնում էր նրա իշխանության հեղինակությունը ժողովրդի աչքում:

Արտաշեսի օրոք վերակառուցվում են երկրի զինված ուժերը: Ստեղծվում են 4 զորավարություններ: Ըստ արշավանքների 4 ուղղությունների, զորքը բաժանվում է 4 մասի՝ հարավային, հյուսիսային, արևմտյան և արևելյան, որոնք ունեին ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական նպատակներ: Արտաշես I-ը արևելյան զորավարության ղեկավար է նշանակում իր որդի Արտավազդին: Արևմտյան զորավարությունը տալիս է մյուս որդուն՝ Տիրանին, հյուսիսայինը՝ Զարեհին, հարավայինը՝ իր դայակ Սմբատ Բագրատունուն: Պետության կառավարումը հեշտացնելու նպատակով հայոց թագավոր Արտաշեսը կատարում է նաև վարչական բարեփոխում: Նա թագավորության ամբողջ տարածքը բաժանվում է 120 գավառների, որոնք այն ժամանակ կոչվում էին ստրատեգիաներ: Այդ ստրատեգիաները կառավարում էին թագավորի կողմից նշանակված կառավարիչները՝ ստրատեգոսները: Արտաշեսի օրոք փոփոխվում է նաև տոմարը և օրացույցը: Ճշտվում են ամիսները, շաբաթները, տարվա ժամանակները՝ գարնանամուտը,ամառնամուտը և այլն: Հայաստանի լճերի վրա կազմակերպվում է նավագնացության, իսկ գետերը վերածվում են ջրային ուղիների:

Արտաշեսի թագավորության տարիներին Հայաստանն աննախադեպ հզորանում է, շենանում ու դառնում բարեկեցիկ: Մ. Խորենացին վկայում է, որ « . . . հայոց աշխարհում անմշակ հող չէր մնացել ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան էր շենացել երկիրը»: Իր բարի գործերի համար հայոց թագավորը ստանում է «Բարեպաշտ» մականունը և արժանանում ժողովրդի սիրուն ու հարգանքին: Արտաշեսը մահանում է Ք.ա. 160թ.: Նրա մահը ողբում է ողջ հայ ժողովուրդը:

**Բ) Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության զարգացումը (1 ժամ):** Արտաշես I-ը իր հաջորդներին թողել է տնտեսապես բարգավաճ, հարուստ և ռազմապես հզոր երկիր: Արտաշես I-ից հետո Մեծ Հայքում իշխեց նրա ավագ որդի Արտավազդ I-ը (Ք. ա. մոտ 160-115 թթ.), որի օրոք Մեծ Հայքի թագավորությունը հարկադրված ընդունում է օրեցօր հզորացող Պարթևստանի գերիշխանությունը: Արտավազդը, որն արու զավակ չուներ ստիպված իր եղբոր որդուն՝ Տիգրանին, իբրև պատանդ հանձնել պարթևներին: Արտավազդ I- ից հետո՝ մոտ Ք. ա. 115 թ., գահ բարձրացավ նրա եղբայր Տիգրան I-ը, որն իշխեց մինչև Ք. ա. 95 թվականը: Տիգրան I-ի մահից հետո պարթևների արքան 70 հովիտների դիմաց թույլ է տալիս Տիգրանին վերադառնալ հայրենիք և բազմել հայոց գահին: Հայոց արքա Տիգրան II-ը (Ք.ա. 95-55թթ.) խոշոր պետական և ռազմական գործիչ էր, խելոք դիվանագետ: Նրա մասին պատմում են Մ. Խորենացին ու հունա-հռոմեական պատմիչները: Տիգրան Մեծը գահ բարձրանալով շարունակում է իր պապի՝ Արտաշես I-ի, կիսատ թողած հայկական հողերի միավորման գործը: Նա հայկական զորքի գլուխն անցած իր թագավորության երկրորդ տարում մտնում է Ծոփք: Այնտեղ իշխող Զարեհի թոռը հրաժարվում է գահից: Այսպես առանց մեծ դժվարության Տիգրանը գրավում է Ծոփքն ու միացնում Մեծ Հայքին՝ավարտելով հայկական հողերի միավորումը մեկ միասնական պետության մեջ: Այնուհետև Տիգրան Մեծն ակտիվացնում է իր արտաքին քաղաքականությունը, որը կապված էր հզոր տերություններ Հռոմի և Պարթևստանի նվաճողական նկրտումների հետ:

Պարթևական թագավորությունը գրավելով Միջագետքն ու Ատրպատականը՝հարավից սպառնալիքի տակ էր առել Հայաստանը: Մեծ էր նաև Հռոմից եկող վտանգը, որը ծավալվելով Փոքր

Ասիայում, արևմուտքից էր սպառնում Հայաստանին ու Սև ծովի հարավային ափերի արևելյան մասում գտնվող Պոնտական թագավորությանը, որի թագավորն էր հին աշխարհի նշանավոր գործիչ, Հռոմի երդվյալ թշնամի, հռչակավոր Միհրդատ VI-ը, որը պայքարում էր Փոքր Ասիայից հռոմեացիներին դուրս քշելու համար: Հայաստանին և Պոնտոսին սպառնացող վտանգը մերձեցնում է այդ երկու երկրներին: Ք.ա. 94 թ. Արտաշատ են ժամանում պոնտական բանագնացները: Կնքվում է հայ-պոնտական
պայմանագիր, որի համաձայն՝

1. Հայաստանը գործողությունների ազատություն էր ստանում հյուսիսում, հարավում և արևելքում, իսկ Պոնտոսը՝ արևմուտքում:
2. Կողմերը միացյալ ուժերով գրավելու էին Կապադովկիայի վրա, որի տարածքը պետք է անցներ Պոնտոսը, իսկ շարժական գույքը և բնակչությունը՝ Հայաստանը:
3. Դաշինքն ամրապնդվում է Տիգրան Մեծի և Միհրդատ Պոնտացու դստեր Կլեոպատրայի ամուսնությամբ:

Հավատարիմ հայ-պոնտական դաշինքին՝ Ք.ա. 93 թ. հայկական զորքերը ներխուժեցին Կապադովկիա և ռազմակալեցին այն: Ճիշտ է, Հռոմի զինված միջամտությամբ հաջողվեց վերականգնել Կապադովկիայի թագավորությունը, սակայն վերջինս մեծապես թուլացավ, իսկ Հայոց թագավորությունը ձեռք բերեց հսկայական ավար և մեծ թվով գերիներ:

Կապադովկիայում կրած անհաջողությունը չի ընկճում ոչ հայոց թագավորին ոչ էլ Պոնտոսի թագավոր Միհրդատ VI-ին: Շուտով պատերազմ է սկսվում Հռոմի և Պոնտոսի միջև: Սկզբում հաջողությունն ուղեկցում էր Միհրդատ Եվպատորին: Նա գրավում է ամբողջ Փոքր Ասիան և ներխուժում է Հունաստան: Միհրդատի այս հաջողությունները ոգևորում է Տիգրանին և նա որոշում է իրագործել իր վաղեմի երազանքները, որին խանգարում էին առաջին հերթին Հայաստանի արևելյան հարևան Պարթևստանը: Պարթևական պետությունը Սելևկյաններից գրավել էր Ատրպատական-Մեդիան և Հյուսիսային Միջագետքը: Տիգրանը ձգտում էր պարթևներից ոչ միայն ետ խլել հայկական հողերը, այլև գրավել Ատրպատական-Մեդիան, Հյուսիսային Միջագետքը և վերջ տալ Պարթևական թագավորության հզորությանը: Բայց քանի դեռ կենդանի էր պարթևական թագավորը, որը ամուսնացած էր Տիգրան Մեծի դստեր հետ, հայոց թագավորը խուսափում էր պարթևների հետ բախվելուց: Օգտագործելով հարմար պահը՝ իր հզոր փեսայի՝ Միհրդատ II-ի մահը, Տիգրանը Ք.ա. 87թ. Հարձակվում է Պարթևստանի վրա: Սկսվում է հայ-պարթևական պատերազմը: Հայկական զորքերը նախ մտնում են Ատրպատական-Մեդիա, որից հետո Պարթևստան: Չհանդիպելով լուրջ դիմադրության՝ հայկական զորքերը հասնում են մինչև պարթևական արքայի ամառային նստավայր Էկբատան քաղաքը և պաշարում այն: Էկբատանի պաշարման ժամանակ հրի է մատնվում պարիսպներից դուրս գտնվող արքայական դղյակը: Ահաբեկված պարթևական նոր թագավորը ստիպված հաշտություն է կնքում Տիգրանի հետ: Այդ պայմանագրի համաձայն՝

1. Պարթևստանը վերադարձնում էր Հայաստանից խլված «70 հովիտները»:
2. Հօգուտ Հայաստանի պարթևները հրաժարվում էին Մարաստանից և Հյուսիսային Միջագետքից:
3. Պարթևների արքան կորցնում էր «արքայից արքա» տիտղոսը, որն այսուհետև կրելու էին Տիգրանն ու նրա հաջորդները: Այս տիտղոսը սկսվում է գրվել նրա դիմանկարը կրող դրամների վրա:

Այս պայմանագրով պարթևները փաստորեն ճանաչում էին Հայաստանի գերիշխանությունը:

Տիգրանը հաջորդ արշավանքն ուղղում է դեպի հարավ: Այստեղ նա գրավում է Տմորիքին կից Կորդուքը և Ադիաբենեն: Այնուհետև անցնելով Տիգրիս գետը, հայկական զորքերը դուրս են գալիս Հյուսիսային Միջագետք և գրավում Միկդոնիան և Օսրոենեն՝ Մծբին և Եդեսիա քաղաքներով: Այպես

հաղթական արշավանքներով Տիգրան Մեծը հասնում է Եփրատ գետը և մոտենում Սելևկյան պետության սահմաններին: Այդ ժամանակվանից սկսվում է Տիգրանի արտաքին նվաճումների հաջորդ փուլը, որը անցնում է անարյուն: Նրա զորքերը անցնում են դեպի արևմուտք և գրավում Կոմմագենեն և սպառնում Սելևկյաններին: Սելևկյան թուլացող պետության թագավորները այլևս ուժ չունեին ապահովելու իրենց երկրի կայունությունը, սահմանների և բնակչության անվտանգությունը, որի համար ժողովուրդը դժգոհում է նրանցից և նոր տիրակալ փնտրում: Գահի թեկնածուներ էին Միհրդատ VI-ը, Եգիպտոսի Պտղոմեոս թագավորը և Տիգրան Մեծը: Ընտրությունը ընկնում է Տիգրան Մեծի վրա, քանի որ նա ուներ սեփական ռազմական ուժերը և պարթևների դաշնակիցն էր, որին էլ սելևկյան ժողովուրդը հրավիրում է զբաղեցնելու պետության գահը: Ընդունելով հրավերը, Ք.ա. 83թ. Տիգրանը մտնում է Անտիոք մայրաքաղաք և բազմում սելևկյան գահին: Տիգրանը նվաճում է նաև Կիլիկիան, որով դառնում է Հռոմի գրավված երկրների անմիջական հարևանը: Այնուհետև Տիգրանը հայոց զորքով շարժվում է Միջերկրական ծովի ափով դեպի հարավ, գրավում Փյունիկիան (Լիբանանը) է հասնում Պաղեստինի սահմաններին:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Ու՞մ գլխավորությամբ սելևկյան զորքերը ներխուժեցին Մեծ Հայք և Ծոփք:
2. Ո՞վ էր Երվանդունի վերջին թագավորը, ի՞նչ գիտենք նրա մասին:
3. Ձեր կարծիքով ինչու՞ Արտաշեսը Երվանդ IV թագավորի թաղեց մեծ շուքով: Հիմնավորեք ձեր պատասխանը:
4. Ի՞նչ պայմաններում Արտաշեսը և Զարեհը իրենց հռչակեցին անկախ թագավորներ:
5. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Արտաշես I-ը հայկական հողերի միավորման համար:
6. Ձեր կարծիքով ինչու՞ Արտաշեսը միավորեց հայկական բոլոր հողերը, բացի Ծոփքից:
7. Ի՞նչ նպատակով Արտաշես I-ը անցկացրեց հողային բարեփոխումը:
8. Ինչու՞ Արտաշեսը երկրի կարևոր պաշտոնները տվեց իր որդիներին: Հիմնավորեք ձեր տեսակետը:
9. Ի՞նչ ազդեցություն ունեցավ Արտաշեսի բարենորոգումները երկրի պաշտպանության և տնտեսության համար:
10. Ինչու՞ Արտաշես I-ը կառուցեց Արտաշատ մայրաքաղաքը: Ձեր կարծիքով ինչի՞ մասին է վկայում նոր մայրաքաղաքի կառուցումը:
11. Արժևորե՛ք և գնահատե՛ք Արտաշես I-ի գործունեությունը:
12. Փորձե՛ք վերհիշել ինչպիսի՞ պատմություններ են հյուսվել Արտաշես I-ի մասին:
13. Ի՞նչ իրադարձություններ են տեղի ունեցել Արտաշես I-ին հաջորդած Արտավազդ I-ի և Տիգրան I-ի օրոք:
14. Ովքե՞ր են կառավարել Արտաշես I-ից միչև Տրգրան Մեծ ընկած ժանանակաշրջանում և ի՞նչ իրադարձություններ են տեղի ունեցել նրանց օրոք:
15. Ինչպե՞ս հայտնվեց Տիգրանը պարթևական պատանդության մեջ:
16. Ինչու՞ Տիգրանը պարթևներին զիջեց «70 հովիտներ» կոչվող տարածքը:
17. Որո՞նք էին Տիգրան Մեծի և Միհրդատ Պոնտացու մերձեցման պատճառները: Ներկայացրե՛ք հայ-պոնտական պայմանագրի բովանդակությունը:
18. Ի՞նչ նշանակություն ունեցավ հայ-պոնտական դշինքի կնքումը: Ձեր կարծիքով ինչու՞ այն ամրապնդվեց Տիգարանի և Կլոպատրայի ամուսնությամբ:
19. Ծոփքի նվաճումով՝ ու՞մ սկսած գործը ավարտին հասցրեց Տիգարան Մեծը:
20. Ըստ հայ-պարթևական պայմանագրի, ո՞ր տարածքներն էին անցնելու Մեծ Հայքի թագավորությանը:
21. Ինչու՞ Տիգրանը առանց պատերազմի բազմեց Սելևկյան գահին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Լրացրե՛ք «Արտաշես I-ի արշավանքների և Հայկական հողերի միավորումը ու ռազմական բարեփոխումը» աղյուսակը.**

| Արշավանքի ուղղությունը | Նվաճած տարածքները | Նշանակված զորավարը |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ե՞րբ է գահակալել Արտաշես I-ը:**

1) Ք. ա. 201-մոտ 189 թթ.: 2) Ք. ա. 189-մոտ 160 թթ:
3) Ք. ա. 160-115 թթ.: 4) Ք. ա. 220-մոտ 190 թթ.:

**2. Ե՞րբ է գահակալել Տիգրան I-ը:**

1) Ք. ա. 95-55 թթ.: 2) Ք. ա. 189-160 թթ.:
3) Ք. ա. 160-115 թթ.: 4) Ք. ա. 115-95 թթ.:

**3. Ե՞րբ է գահակալել Արտավազդ I-ը:**

1) Ք. ա. 220-201 թթ.: 2) Ք. ա. 115-95 թթ.:
3) Ք. ա. 160-115 թթ.: 4) Ք. ա. 55-34 թթ.:

**4.Ովքե՞ր էին Մեծ Հայք և Ծոփք ներխուժած Սելևկյան զորքերի հայազգի զորավարները:**

1) Արտաշես և Սամոս: 2) Սամսոն և Զարեհ:
3) Զարեհ և Արտաշես: 4) Արտաշես և Քսերքսես:

**5. Քանի՞ զորավարությունների բաժանեց Մեծ Հայքը Արտաշես I-ը:**

1) 6: 2) 8: 3) 2: 4) 4:

**6. Ինչպե՞ս են կոչվում Արտաշեսի կանգնեցրած քառակուսի քարե սյուները:**

1) Հուշարձան-կոթողներ: 2) Սահմանային սյունաշար:
3) Հողային նշանաքար: 4) Հողաբաժան սահմանաքարեր:

**7. Ի՞նչ նպատակով Արտաշես I-ը երկիրը բաժանեց 120 գավառների:**

1) Գյուղական կյանքը կարգավորելու:
2) Պետական կառավարումը հեշտացնելու:
3) Ժողովրդի աչքում իր հեղինակությունը բարձրացնելու:
4) Երկրի պաշտպանունակությունը ուժեղացնելու:

**8. Արտաշատն այնքան մեծ էր, որ հռոմեացիները այն անվանում էին «_____»:**

**9. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցերին:**

«… հայոց աշխարհում անմշակ հող չմնաց՝ ոչ լեռնային և ոչ դաշտային, այնքան էր շենացել երկիրը»:

**ա) Հայոց ո՞ր արքայի կառավարման շրջանին է վերաբերվում հետևյալ մեջբերումը.**

1)Տիգրան Մեծի: 2) Տրդատ Ի-ի:
3)Արտաշես Ի-ի: 4) ԵրվանդՍակավակյացի:

**բ) Ո՞վ է վերը նշված խոսքերի հեղինակը:**

1)Մովսես Խորենացին: 2) Ստրաբոնը:
3) Դիոն Կասսիոսը: 4) Քսենեփոնը:

**10. Կատարել համապատասխանեցում:**

| | |
|---|---|
| 1) Արտաշատ մայրաքաղաքի հիմնումը<br>2) Հայ-պոնտական դաշինքի կնքումը<br>3) Տիգրան Մեծի բազմելը սելևկյան գահին<br>4) Կապադովկիայի ռազմակալելը հայ-պոնտական զորքերի կողմից | ա) Ք. ա. 83թ.:<br>բ) Ք. ա. 87թ.:<br>գ) Ք. ա. 93թ.:<br>դ) Ք. ա. 185թ.:<br>ե) Ք. ա. 94թ.: |

## 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ.ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՏԱՐԱԾՔԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԲԱՆԱԿԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ: (2 ԺԱՄ)

**Ա) Հայկական աշխարհակալ տերությունը. սահմանները, տարածքը, բնակչությունը (1 ժամ):** ՏիգրանII-ի ստեղծած տերությունն ընդգրկում էր Առաջավոր Ասիայի մի խոշոր մասը: Այն տարածված էր Միջերկրական ծովից ու Եգիպտոսից մինչև Կասպից ծովը և Կուր գետից մինչև Միջագետք:

Տիգրանի նվաճած երկրներից տնտեսության ու մշակույթի տեսակետից ամենից զարգացածը Ասորիքն (Սիրիան) էր, Սելևկյանների երբեմնի ընդարձակ տերության կորիզը: Այստեղ էր գտնվում Սելևկյանների գլխավոր ռազմական ճամբարը, կարևորագույն նավահանգիստները և հռչակավոր մայրաքաղաք Անտիոքը: Վերջինս, որն այն ժամանակվար աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկն էր, դարձավ նորաստեղծ հայկական տերության հարավային կենտրոն: Միջերկրական ծովի արևելյան ափի երկայնքով մեկ ձգվում էին Փյունիկիայի (Լիբանանի) քաղաքները, այդ թվում՝ Բեյրութը: Նրանք պահպանում էին իրենց վաղեմի նշանակությունը Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող առևտրի մեջ: Կիլիկիան ևս հարուստ էր քաղաքներով՝ Տարսոն, Անարզաբա, Ադանա և ուրիշները, որոնք հետագայում, միջնադարում, պիտի դառնային հայկական քաղաքներ: Սելևկյաններից նվաճած երկրների վրա վերակացու նշանակվեց Տիգրանի մերձավորներից Բագարատը՝ Բագրատունիների նախարարական տոհմի նախնին, որի նստավայրը դարձավ Անտիոքը:

Հայաստանին սահմանակից Հյուսիսային Միջագետքի ամենաբարեբեր շրջաններում, իրենց հարուստ և ծաղկուն Եդեսիա և Մծբին քաղաքներով հանդերձ, վերակացու էր կարգված թագավորի Գուրաս եղբայրը, որը նստում էր Մծբինում:

Տիգրիսի ձախ ափին ընկած էր Կորդուքը: Այստեղ իշխանության գլուխ էր թողնվել նրա նախկին թագավորը: Տիգրիսի հոսանքով ներքև ձգված էր Ադիաբենե երկիրը, որն ընդգրկում էր պատմական բուն Ասորեստանի մեծ մասը և հատկապես նրա հռչակավոր Նինվե մայրաքաղաքը:

Վերջապես, այդ երկրներից արևելք ու մինչև Կասպից ծով տարածվում էր Ատրպատական-Մեդիան (ներկայիս Իրանական Ադրբեջանը): Երկիրը նոսր էր բնակեցված, ու բնակչությունը գտնվում էր զարգացման դեռևս բավական ցածր մակարդակի վրա: Այստեղ ևս նախկին թագավորը, այժմ Տիգրանի փեսան, թողնվել էր իշխանության գլուխ: Այսպիսով, նորաստեղծ տերությունն իր բնույթով նման էր նրան նախորդած Սելևկյանների, Ալեքսանդր Մակեդոնացու և Աքեմենյանների տերությունների:

Հայկական տերությունը բազմազգ երկիր էր: Տիգրան II-ի տերության մեջ խոսում էին 15-ից ավելի լեզուներով: Այն կազմված էր երեք կարգի հատվածներից: Առաջինը բուն հայկական հողերն էին (Մեծ Հայք, Կոմմագենե)՝ շուրջ 360 հազ. քառ. կմ տարածքով: Երկրորդը հպատակ թագավորություններն էին՝ Վիրք, Աղվանք, Մարաստան, Ադիաբենե, Օսրոյենե, Պալմիրա, Փյունիկիա, Ասորիք, Կիլիկիա շուրջ 400 հազ. քառ. կմ տարածքով: Երրորդը Հայաստանի քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող երկրներն էին՝ Պարթևստան, Նաբաթեա, Հրեաստան, Ամուդարյայի ստորին ավազանի սկյութական ցեղերը, Պարսից ծոցի և Կարմիր ծովի ափերին բնակվող արաբները շուրջ 2 մլն քառ. կմ տարածքով: Այսպիսով՝ Տիգրան II-ը դարձավ Առաջավոր Ասիայի մեծագույն մասի տիրակալը: Հայոց տերության տարածքը, ենթակա երկրներով հանդերձ, կազմում էր շուրջ 3 մլն քառ. կմ որը գերազանցում էր Մեծ Հայքի տարածքը տասն անգամ:

Նվաճված երկրները պարտավոր էին զորք տրամադրել Հայաստանին: Այդպիսի պարտավորություններ ունեին նաև տերության մեջ չմտնող, բայց նրա ազդեցության տակ գտնվող երկրները: Այսպես, Տիգրան Մեծի զորքը բաղկացած էր, բացի հայերից, նաև Ատրպատականի մեդացիներից, ադիաբենցիներից, կորդվացիներից, արաբներից, վրացիներից, աղվաններից և այլ ժողովուրդների ներկայացուցիչներից: Սրանք բոլորը տնտեսական ու լեզվական կապերով չամրապնդված ռազմաքաղաքական միավորումներ էին, կազմված զարգացման տարբեր մակարդակի վրա գտնվող երկրներից ու ժողովուրդներից:

**Բ) Տիգրանակերտ մայրաքաղաքի կառուցումը (1 ժամ):** Տիգրան Մեծի լայնածավալ տերությունը կարիք ուներ նոր մայրաքաղաքի: Հայաստանի հին մայրաքաղաքը՝ Արտաշատը, մնացել էր տերության հյուսիսային ծայրամասում, իսկ նոր մայրաքաղաքը՝ Անտիոքը, գտնվում էր բուն Հայաստանից դուրս: Անհրաժեշտ էր ստեղծել նոր մայրաքաղաք, որը գտնվեր ամբողջ պետության կենտրոնում, միաժամանակ լիներ Հայաստանի մեջ: Եվ ահա Տիգրանը Տիգրիս գետի վերին հոսանքի շրջանում, Աղձնիք նահանգում կառուցում է Տիգրանակերտ քաղաքը: Հույն պատմիչ Ապպիանոսի վկայությամբ քաղաքը կառուցվում է ճիշտ այնտեղ, որտեղ Ք.ա. 95թ. Տիգրանը թագադրվել էր: Նշանակում է այդ վայրը նպաստավոր դիրք է ունեցել, կամ նախապես եղել է բնակավայր: Բացի տեղի բնակիչներից և շրջակայքումապրողներից, Տիգրանը ստիպում է նորակառույց քաղաք տեղափոխվել նաև շատ հայ իշխանների: Այնուհետև նա Կապադովկիայի մայրաքաղաքի ողջ բնակչությանը, Կիլիկիայի 12 քաղաքների բնակիչներին, ինչպես նաև մեծ թվով հրեաների, (բոլորը միասին մոտ 500 հազար մարդ) տեղափոխում է Հայաստան և բնակեցնում ոչ միայն Տիգրանակերտում, այլև Արտաշատում, Արմավիրում, Երվանդաշատում և այլ հին քաղաքներում: Նորակերտ Տիգրանակերտը շուտով դառնում է առևտրաարհեստագործական նշանավոր կենտրոն, հարուստ ու շքեղ քաղաք՝ իր թատրոնով, պալատներով, թագավորական դղյակներով ու պարտեզներով: Տիգրանակերտը ուներ 25 մետր բարձրությամբ պարիսպներ, որոնք այնքան լայն էին, որ նրա մեջ ներսից ձիերի ախոռներ ու պահեստներ էին կառուցվել: Տիգրան Մեծի օրոք նրա անունով քաղաքներ են կառուցվում նաև Հայաստանի այլ մասերում՝ Արցախում, Ուտիքում (Տիգրանակերտ) և Գողթնում(Տիգրանավան):

Հայկական քաղաքներում այդ ժամանակ ապրում էին շատ օտարերկրացիներ՝հույներ, հրեաներ, որոնք հմուտ արհեստավորներ և առևտրականներ էին: Նրանք ժամանակի ընթացքում մոռանում են իրենց լեզուն և միաձուլվում հայերի հետ:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ տարածքներ էր ընդգրկում Տիգրան Մեծի տերությունը, մինչև ու՞ր էին տարածվում նրա տերության ազդեցության սահմանները:
2. Ո՞վ էր նշանակվել սելևկյաններից նվաճած երկրների վրա վերակացու, ո՞րն էր նրա նստավայրը:
3. Ո՞վ էր կարգվել վերակացու Հայուսիսային Միջագետքում և ո՞րն էր նրա նստավայրը:
4. Ինչու՞ որոշ երկրներում Տիգրան Մեծը իշխանությունը թողեց նախկին թագավորներին: Հիմնավորեք ձեր պատասխանը
5. Որքա՞ն էր կազմում Հայոց տերության տարածքը, ենթակա երկրներով հանդերձ:
6. Ինչու Տիգրանակերտն ու Անտիոքն այլևս չէր բավարարում պետության մայրաքաղաք լինելու պայմաններին:
7. Ե՞րբ և որտե՞ղ կառուցեց Տիգրան Մեծն իր նոր մայրաքաղաքը: Նկարագրեք մայրաքաղաք Տիգրանակերտը:
8. Որտե՞ղ են կառուցվել Տիգրանակերտ անունով քաղաքներ:
9. Ձեր կարծիքով՝որո՞նքէին այն նախադրյալները, որոնք օգնեցին Տիգրան Մեծին կատարել իր հսկայածավալ նվաճումները և ստեղծել աշխարհակալ տերություն: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Համեմատե՛ք Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնադրումը Արտաշատ մայրաքաղաքի կառուցման հետ:**



ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ո՞րն էր նորաստեղծ հայկական տերության հարավային կենտրոնը:**

1) Արտաշատը: 2) Երվանդաշատը:
3) Անտիոքը: 4) Բագարանը:

**2. Հյուսիսային Միջագետքի կառավարչի նստավայրն էր.**

1) Մծբինը: 2) Նինվեն:
3) Եդեսիան: 4) Անտիքոը:

**3. Տիգրան Մեծի տերության մեջ խոսում էին.**

1) Մոտ 32 լեզուներով: 2) 15-ից ավելի լեզուներով:
3) Ավելի քան 40 լեզուներով: 4) Շուրջ 24 լեզուներով:

**4. Տիգրան II-ի տերությունը քանի՞ կարգի հատվածներից էր կազմվա:.**

1) 2: 2) 5: 3) 3: 4) 6:

**5. Որքա՞ն էր կազմում բուն հայկական հողերը Տիգրան Մեծի օրոք:**

1) Շուրջ 360 հազ.քառ.կմ: 2) Մոտ 420 հազ.քառ.կմ:
3) Մոտ 400 հազ.քառ.կմ: 4) Շուրջ 500 հազ.քառ.կմ:

**6. Որքա՞ն էր կազմում Հայոց տերության տարածքը՝ ենթակա երկրներով հանդերձ:**

1) Շուրջ 3 մլն.քառ.կմ: 2) Ավելի քան 5,2 մլն.քառ.կմ:
3) Մոտ 4 մլն.քառ.կմ: 4) Ոչ պակաս 6 մլն.քառ.կմ:

**7. Ի՞նչ էին պարտավոր նվաճված երկրները:**

1) Պաշտել հայերի հելլենիստական դիցարանի աստվածներին:
2) Զորք տրամադրել:
3) Ընդունել հայերի կարգերն ու բարքերը:
4) Հրաժավել սեփական կրոնից ու մշակույթից:

**8. Ո՞ր գետի վերին հոսանքի շրջանում է Տիգրանը կառուցում նոր մայրաքաղաքը:**

1) Արաքս: 2) Տիգրիս:
3) Հրազդան: 4) Եփրատ:

**9. Ո՞ր նահանգում է Տիգրանը կառուցում նոր մայրաքաղաքը:**

1) Այրարատ: 2) Գուգարք:
3) Աղձնիք: 4) Տայք:

**10. Նշվածներից ընտրել այն վայրերը, որտեղ կառուցվել են Տիգրանակերտ անունով քաղաքներ:**

ա) Եկեղիք: բ) Ուտիք:
գ) Արցախ: դ) Կապադովկիա:
ե) Ծոփք: զ) Գողթն:

## 3. ՀԱՅ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ: ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (1 ԺԱՄ)

**Ա) Հայ-հռոմեական պատերազմը:** Հռոմը չէր կարող հանդուրժել Արևելքում նոր, հզոր ախոյանների՝ հայկական և պոնտական տերությունների երևան գալը և հարմար պահի էր սպասում բախվելու նրանց հետ:

Մինչ Հայոց թագավոր Տիգրան Մեծը զբաղված էր Հայոց պետության սահմանների ընդարձակմամբ ու լայնածավալ տերության ներքին գործերի կարգավորմամբ, Պոնտոսի թագավոր Միհրդատ Պոնտացին պատերազմի է դուրս գալիս Հռոմի դեմ: Պոնտոսն արդեն 3 անգամ պատերազմ էր մղել Հռոմի դեմ: Սկզբում պոնտական թագավորը պարտության է մատնում հռոմեացիներին: Նա տիրում է գրեթե ողջ Փոքր Ասիային: Սակայն ի վերջո, հռոմեական զորավար Լուկուլլոսին հաջողվում է ծանր պարտության մատնել Պոնտոսին: Միհրդատն իր փոքրաթիվ թիկանապահ զորքով փախչում է Հայաստան իր դաշնակից Տիգրան Մեծի մոտ: Հռոմեական զորավար Լուկուլլոսը դեսպան է ուղարկում Հայաստան՝ պահանջելով Միհրդատին հանձնել իրեն, բայց Տիգրանը կտրականապես մերժում է: Պատերազմի առիթն արդեն պատրաստ էր: Հռոմեական դեսպանը նախքան Տիգրանի հետ հանդիպելը, լրտեսական շրջագայություն էր կատարել Հայաստանում: Նրան հաջողվել էր կաշառելով Հռոմի կողմը գրավել Տիգրանին հպատակ որոշ նահանգապետերի: Անկախ դեսպանի բերած պատասխանից՝ հռոմեացիները փաստորեն պատրաստվում էին պատերազմի: Օգտագործելով չհանձնելու առիթը՝ Լուկուլլոսը Ք.ա. 69թ. գարնանը, երբ Տիգրանը գտնվում էր իր լայնածավալ տերության հարավային ծայրամասում, անցնում է հայ-հռոմեական սահմանը և արագորեն շարժվում դեպի Հայաստանի խորքերը: Հայոց արքան անսպասելիորեն իմանալով հռոմեացիների ներխուժման մասին՝ նրանց առաջխաղացումը կասեցնելու նպատակով, Լուկուլլոսի դեմ է ուղարկում 3 հազարանոց հեծելազոր՝ Մեհրուժան զորավարի գլխավորությամբ: Երկար ճանապարհ անցած հայոց այրուձին, առանց հանգստանալու, անհավասար մարտի մեջ է մտնում հռոմեացիների հետ և պարտություն կրում: Կռվում զոհվում է նաև խիզախ զորավար Մեհրուժանը: Իր 6 հազարանոց թիկնապահ գնդի հետ Տիգրանը շտապ վերադառնում է Հայաստան՝ հրամայելով մնացած զորքին հետևել իրեն: Գալով Հայաստան՝ Տիգրանն արդեն պաշարված է տեսնում Տիգրանակերտը: Մի մութ գիշեր Տիգրանի թիկնապահ գնդին հաջողվում է սրընթաց ճեղքել հռոմեացիների պաշարման օղակը, մտնել քաղաք և այնտեղից դուրս բերել արքայի ընտանիքին ու գանձերը: Այնուհետև հապճեպորեն հավաքելով իր զորքը՝ Տիգրան Մեծը Ք.ա. 69թ. հոկտեմբերի 6-ին Տիգրանակերտի մոտ ճակատամարտ է տալիս հռոմեացիների դեմ: Սակայն թշնամուն հաջողվում է խախտել հայկական զորքի մարտական կարգը և ստիպել նրան նահանջել: Այդ հաղթանակից հետո հռոմեացիները, որոնց նպատակը Տիգրանակերտի գրավումն էր, վերսկսում են հայոց մայրաքաղաքի մինչ այդ մի քանի ամիս տևած պաշարումը: Բայց այս անգամ Տիգրանին ծառայող հույն վարձկանները, որոնք պիտի պաշտպանեին մայրաքաղաքը, տեսնելով նրա պարտությունը, դավաճանում են և, քաղաքի օտարերկրացի բնակչության հետ բացելով քաղաքի դարպասը, ներս են թողնում հռոմեացիներին: Հռոմեական բանակը կողոպտում և քարուքանդ է անում Տիգրանակերտը: Ոգևորված իր հաջողությամբ՝ Լուկուլլոսը որոշում է գրավել նաև Հայաստանի մյուս մայրաքաղաքը՝ Արտաշատը: Սակայն քանի որ մոտենում էր ձմեռը Լուկուլլոսը իր բանակը տանում է Կորդուք՝ անցկացնելու Ք.ա. 69-68թթ. ձմեռը: Այդ նույն ժամանակ Տիգրանն ու Միհրդատը նոր զորք են հավաքում ու մարզում: Ք.ա. 68թ. գարնանը Լուկուլլոսը իր բանակով Տիգրանակերտի մոտից շարժվում է դեպի Արտաշատ: Տիգրանն ու Միհրդատն այս անգամ ընտրում են նոր մարտավարություն: Խուսափելով կանոնավոր ճակատամարտից՝ հայկական բանակը, մանր կռիվներով, առանձին խմբեր ոչնչացնելով, պարենավորումն արգելափակելով, ջլատում են թշնամու ուժերը:

Նույն ժամանակ Լուկուլլոսն իր հոգնած լեգեոններին ոգևորում էր «Հայկական Կարթագենի» (Արտաշատի) հարստություններին տիրանալու հույսերով: Արտաշատին սպառնացող վտանգը ստիպում է Տիգրանին նոր ճակատամարտ տալ: Այն տեղի է ունենում Ք.ա. 68թ. սեպտեմբերի 22-ին Արածանի գետի ափին: Այս անգամ հռոմեացիների դեմ կանգնած էր առավել կազմակերպված, մարզված ու մարտունակ բանակ: Արածանիի ճակատամարտում հռոմեացիները ծանր պարտություն են կրում, որն ընդունում են նաև հռոմեացի պատմիչները: Դիոն Կասիոսի վկայությամբ հռոմեական հեծելազորի ծանր դրության մեջ ընկնելը, շատերի վիրավորվելն ու մահանալը, պարենամթերքի պակասը, ստիպում է Լուկուլլոսին նահանջել՝ թողնելով Հայաստանի սահմանները: Հայերը հռոմեացիներից մաքրում են նաև տերության հարավային սահմանները՝ Միջագետքը: Մինչ այդ Միհրդատը հայկական օգնական մի զորամասով մտնում է Պոնտոս և սկսում է իր թագավորության վերանվաճումը: Հուսալքված հռոմեական զինվորները, ինչպես Տիգրանի դեմ, այնպես էլ այստեղ հրաժարվում են ճակատամարտ տալուց: Սակայն հայ-պոնտական համատեղ ուժերը՝ Միհրդատի գլխավորությամբ, ստիպում են հռոմեացիներին մարտի մեջ մտնել և ծանր պարտություն կրել: Թվում էր, թե հանգամանքները նպաստավոր են վերականգնելու Տիգրանի տերության նախկին տարածքը: Սակայն դրան խանգարում են Հայաստանում ծագած ներքին պառակտումները: Տիգրան Մեծի որդի Տիգրան Կրտսերը Հայոց գահին տիրանալու համար ապստամբում է հոր դեմ: Պարտություն կրելով՝ նա փախչում ու պատսպարվում է պարթևների մոտ: Պարթև թագավոր Հրահատ III-ը ոչ միայն ընդունում է նրան, այլև ամուսնացնում իր դստեր հետ և հարմար առիթի սպասում նստեցնելու Հայոց գահին:

Հռոմեական հզոր հանրապետությունը, որը չէր կարող հաշտվել Պոնտոսում և Հայաստանում կրած պարտության հետ, դժգոհ Լուկուլլոսից, ազատում է նրան Արևելքի զորավարի պաշտոնից և նրա փոխարեն, Ք.ա. 66թ. Արևելք է ուղարկում նշանավոր զորավար Գնեոս Պոմպեոսին: Այստեղ Պոմպեսոը կարգի է բերում իր ռազմական ուժերը, ստեղծում ուժեղ և մարտունակ բանակ: Մինչև ռազմական գործողությունների սկսելը, իր թիկունքն ամրապնդելու նպատակով, Պոմպեոսը դաշինք է կնքում պարթևական թագավոր Հրահատ III-ի հետ: Այնուհետև ներխուժում է Պոնտոս և պարտության մատնում Միհրդատին: Վերջինս փախչում է իր որդու մոտ՝ Բոսպորի թագավորություն, որտեղ էլ ինքնասպանությամբ վերջ է տալիս իր խռովահույզ ու փոթորկալից կյանքին: Պոնտոսին հաղթելուց հետո Պոմպեոսը զենքը ուղղում է Հայաստանի դեմ: Հայաստանում ծագած ապստամբությունը շատ նպաստավոր էր նրա համար: Տրգրան Կրտսերի ուղեկցությամբ՝ Պոմպեոսը ներխուժում է Հայաստան և շարժվում դեպի Արտաշատ:

**Բ) Արտաշատի պայմանագիրը:** Հայաստանը կանգնում է նոր ավելի ծանր փորձության առջև: Նրան սպառնում էր անկախության կորուստը: 75-ամյա Տիգրան Մեծը, կորստաբեր պատերազմից խուսա-փելու համար գնում է բանակցությունների: Նա հանդիսավոր հանդերձանքով, սպիտակ երիվարը հեծած, մենակ ու անզեն ներկայանում է Պոմպեոսի ճամբար: Այս արարքը մտածված դիվանագի-տական քայլ էր և պսակվում է հաջողությամբ: Ք.ա. 66 թ. սեպտեմբերին Արտաշատում Պոմպեոսի և Տիգրան Մեծի միջև կնքվում է պայմանագիր, ըստ որի՝

1. Հայաստանը հօգուտ Հռոմի հրաժարվում է Ասորիքից, Փյունիկիայից, Պաղեստինից և Կիլիկիայից, այսինքն՝ Միջերկրական ծովի ափերից:

2. Հայոց տերությունը սակայն պահպանում է տերության միջուկը կազմող Մեծ Հայքի տարածքը:

3. Ծոփքն անջատվում է Մեծ Հայքից և դառնում է առանձին պետություն: Այստեղ թագավոր է հաստատվում Տիգրան Կրտսերը՝ պայմանով, որ Տիգրան II-ի մահից հետո Մեծ Հայքն ու Ծոփքը դարձյալ միավորվելու էին մեկ պետության մեջ՝ Տիգրան Կրտսերի գահակալության ներքո:

4. Հայաստանը Հռոմին պետք է վճարեր 6 հազար տաղանդ ռազմատուգանք, մոտավորապես այդքան էլ արշավանքին մասնակցած զինվորներին և սպաներին: Հատկանշական է, որ ռազմա-

տուգանքի գումարը վճարվելու էր Ծոփքի արքայական գանձարաններից: Այս հանգամանքը դժգոհություն է առաջացնում Տիգրան Կրտսերի մոտ, նա ընդվզում է Պոմպեոսի դեմ, վերջինս Տիգրան Կրտսերին ձերբակալում և աքսորում է Հռոմ:

5. Հայաստանը հայտարարվում էր «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»: Արտաշատի հաշտությամբ վերականգնվում է Տիգրան Մեծի «արքայից արքա», որից դժգոհ մնացին պարթևները:

Արտաշատի պայմանագրից հետո Տիգրան Մեծն ապրում է ևս մեկ տասնամյակ: Այդ ընթացքում երկիրը զերծ է մնում պատերազմներից և վայելում խաղաղություն:

Տիգրան Մեծը մահացել է Ք.ա. 55թ. 85 տարեկանում՝ մնալով ժողովրդի հիշողության որպես նրա դարավոր երազանքների մարմնացում:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին հայ-հռոմեական պատերազմի պատճառները և առիթը:
2. Արդյո՞ք անխուսափելի էր ռազմական բախումը Հայաստանի և Հռոմի միջև: Հնարավո՞ր էր խուսափել պատերազմից, եթե Տիգրանը Հռոմին հանձներ Միհրդատ Եվպատորին: Հիմնավորեք ձեր պատասխանը:
3. Ե՞րբ է տեղի ունեցել Տիգրանակերտի ճակատամարտը: Ինչո՞ւ հայոց բանակը պարտություն կրեց Տիգրանակերտի ճակատամարտում:
4. Ի՞նչ մարտավարություն ընտրեցին Տիգրանն ու Միհրդատը Լուկուլլոսի դեմ պայքարելու համար:
5. Ե՞րբ է տեղի ունեցել Արածանիի ճակատամարտը: Համեմատե՛ք Տիգրանակերտի և Արածանիի ճակատամարտերը:
6. Ինչպե՞ս ավարտվեց Լուկուլլոսի արշավանքը Հայաստան:
7. Ո՞վ փոխարինեց Լոլկուլյոսին, և ի՞նչ քայլեր նա ձեռնարկեց արշավանքը սկսելուց առաջ:
8. Ի՞նչ ավարտ ունեցավ Միհրդատ Եվպատորի պայքարը:
9. Ներքաղաքական ի՞նչ իրավիճակ էր Հայաստանում:
10. Ինչու՞ Տիգրանը Մեծը չշարունակեց պայքարը, այլ պայմանագիր կնքեց Պոմպեոսի հետ: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
11. Ինչո՞վ էր պայմանավորված Տիգրան Կրտսերի ելույթը Տիգրան Մեծի դեմ:
12. Ինչու Հռոմը պաշտպանեց Տիգրան Մեծին:
13. Գնահատե՛ք Արտաշատի պայմանագիրը:
14. Ձեր կարծիքով՝ ինչու՞ երկար չգոյատևեց Տիգրան Մեծի աշխարհակալ տերությունը

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Համեմատե՛ք հայ-պոնտական և հայ-հռոմեական պայմանագրերը: Տետրում լրացրե՛ք նմանությունները և տարբերությունները:**

| Նմանություններ | Տարբերություններ |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ե՞րբ է տեղի ունեցել Տիգրանակերտի ճակատամարտը:**

1) Ք. ա. 68 թ. սեպտեմբերին: 2) Ք. ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին:
3) Ք. ա. 93 թ.: 4) Ք. ա. 87 թ.:

**2. Ե՞րբ է տեղի ունեցել Արածանիի ճակատամարտը:**

1) Ք. ա. 66 թ. մայիսին: 2) Ք. ա. 71 թ. հունիսին:
3) Ք. ա. 68 թ. սեպտեմբերին: 4) Ք. ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին:

**3. Ե՞րբ է Հռոմը Արևելք ուղարկել նշանավոր զորավար Պոմպեոսին:**

1) Ք. ա. 53 թ.: 2) Ք. ա. 66 թ.:
3) Ք. ա. 68 թ.: 4) Ք. ա. 71 թ.:

**4. Ե՞րբ է կնքվել Արտաշատի հաշտության պայմանագիրը:**

1) Ք. ա. 66 թ.: 2) Ք. ա. 73 թ.:
3) Ք. ա. 69 թ.: 4) Ք. ա. 55 թ.:

**5.Ո՞վ էր Ք. ա. 69 թ. Հայաստան ներխուժած հռոմեական զորքերի հրամանատարը:**

1) Անտոնիոսը: 2) Կրասոսը:
3) Լուկուլլոսը: 4) Պոմպեոսը:

**6. Ո՞վ էր Հռոմի դեմ երեք պատերազմ մղած Պոնտոսի թագավորը:**

1) Բակուրը: 2) Արտավազդը:
3) Մեհրուժանը: 4) Միհրդատը:

**7. Ո՞ւմ գլխավորությամբ հռոմեական զորքերը ներխուժեցին Հայաստան և սկսվեց հայ-հռոմեական պատերազմը:**

1) Պոմպեոսի: 2) Լուկուլլոսի:
3) Կրասոսի: 4) Անտոնիոսի:

**8. Ո՞վ էր Լուկուլլոսի դեմ ուղարկված հայկական երեք հազարանոց հեծելազորի հրամանատարը:**

1) Բազարատը: 2) Գուրասը:
3) Մեհրուժանը: 4) Արտավազդը:

**9. Ու՞մ գլխավորությամբ հռոմեական զորքերը ներխուժեցին Հայաստան, երբ Տիգրան Մեծը գտնվում էր իր տերության հարավային ծայրամասում:**

1) Անտոնիոսի: 2) Օկտավիանոսի:
3) Լուկուլլոսի: 4) Պոմպեոսի:

**10. Ք. ա. 66 թ. ու՞մ միջև է կնքվել Արտաշատի պայմանագիրը:**

1) Միհրդատ Պոնտացու և Տիգրան Մեծի: 2) Տիգրան Մեծի և Լուկուլլոսի:
3) Արտաշես I-ի և Միհրդատ Պոնտացու: 4) Պոմպեոսի և Տիգրան Մեծի:

**11. Որքա՞ն էր Մեհրուժան զորավարի գլխավորած հեծելազորի թիվը:**

1) 6000: 2) 6600: 3) 3000: 4) 10000:

**12. Ինչո՞վ է ավարտվել Արարծանիի ճակատամարտը:**

1) Հայկական զորքերի հաղթանակով: 2) Հռոմեացիների հաղթանակով:
3) Պարթևական զորքերի հաղթանակով: 4) Անտիոքոս III-ի պարտությամբ:

**13. Ի՞նչ էր պահանջում Լուկուլլոսի դեսպանը Տիգրան Մեծից:**

1) Ընդունել Հռոմի գերիշխանությունը:
2) Հրաժարվել սելևկյան գահից:
3) Զորք տրամադրել պարթևների դեմ արշավելու համար:
4) Հռոմին հանձնել Միհրդատ Պոնտացուն:

**14. Ինչո՞վ է ավարտվել Լուկուլլոսի զորքերի ներխուժումը Հայաստան:**

1) Հայ-հռոմեական հաշտությամբ:
2) Հռոմեական զորքերի պարտությամբ:
3) Արտաշատ մայրաքաղաքի գրավմամբ:
4) Տիգրան Մեծի ընտանիքի գերեվարմամբ:

**15. Ո՞ր պայմանագրով է ավարտվել հայ-հռոմեական պատերազմը:**

1) Տիգրանակերտի:
2) Հռանդեայի:
3) Արտաշատի:
4) Մծբինի:

**16. Տիգրանակերտի ճակատամարտից հետո Տիգրան Մեծը.**

1) հավաքագրում է նոր զորք և մարզում:
2) դիմում է Լուկուլլոսին հաշտության խնդրանքով:
3) դաշինք է կնքում պարթևների հետ:
4) հռոմեացիներին է հանձնում Միհրդատ Պոնտացուն:

**17. Ի՞նչ էր հայտարարվում Հայաստանը Արտաշատի պայմանագրով:**

1) Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից:
2) Հռոմի բարեկամ և դաշնակից:
3) Հռոմեական հանրապետության դաշնակից:
4) Հռոմեական սենատի բարեկամ ու դաշնակից:

**18. Տիգրան Կրտսերը ձերբակալվեց և աքսորվեց Հռոմ, որովհետև.**

1) մահափորձ էր կազմակերպել Տիգրան Մեծի դեմ:
2) Տիգրանակերտը հանձնել էր պարթևներին:
3) բռնությամբ տիրացել էր Ծոփքի գահին:
4) ըմբոստացել էր Պոմպեոսի դեմ:

**19. Բերված իրադարձություններից ընտրել երեքը, որոնք տեղի են ունեցել հայ-հռոմեական պատերազմի ժամանակ:**

ա) Ծոփքի միացումը Մեծ Հայքի թագավորությանը:
բ) Տիգրանակերտը պաշտպանող հույն վարձկանների դավաճանությունը:
գ) Լուկուլլոսի ազատումը Արևելքի զորավարի պաշտոնից:
դ) Տիգրան Մեծի ընտանիքի և գանձերի դուրս բերումը Տիգրանակերտից:
ե) Տիգրան Մեծի բազմելը Սելևկյան գահին:
զ) Տիգրան Մեծի և Կլեոպատրայի ամուսնությունը:

**20. Համապատասխանեցնել իրադարձությունները և տարեթվերը:**

1) Արտաշատի հաշտության պայմանագիրը
2) Արածանիի ճակատամարտը
3) Տիգրանակերտի ճակատամարտը
4) Հայ-հռոմեական պատերազմի սկիզբը

| |
|---|
| ա) Ք. ա. 69 թ. հոկտեմբեր 6 |
| բ) Ք. ա. 69 թ. գարուն |
| գ) Ք. ա. 55 թ. |
| դ) Ք.ա. 68թ. սեպտեմբերի 22 |
| ե) Ք. ա. 66 թ. |

## 4. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ: (2 ԺԱՄ)

**Ա) Արտաշեսյան թագավորության թուլացումը (1 ժամ):** Տիգրան Մեծի մահից հետո գահ է բարձրանում նրա որդին՝ նշանավոր պետական գործիչ Արտավազդ II (Ք.ա. 55-34թթ.): Նա չափազանց զարգացած մարդ էր, ստացել էր փայլուն հելլենիստական կրթություն, տիրապետում էր հունարեն լեզվին և հույն պատմիչների վկայությամբ հունարեն լեզվով գրում էր պատմական երկեր, ճառեր ու ողբերգություններ «թատերախաղեր»: Նրա գահակալության ժամանակ փոխվել էր քաղաքական իրադրությունը Արևելքում: Եթե մինչ այդ, Հայաստանը պաշտպանվում էր միայն մեկ հզոր հարևանից (Ասորեստան, Աքեմենյաններ, Սելևկյաններ), ապա այժմ նա ստիպված էր պայքարել երկու հզոր ուժերի՝ Հռոմի և Պարթևստանի դեմ, որոնց միջև բախումը գնալով դառնում էր անխուսափելի: Հռոմն արդեն գրավել էր Փոքր Ասիայի զգալի մասը և Միջերկրական ծովի արևելյան ափը, իսկ Պարթևստանը դուրս էր եկել Տիգրան Մեծի կողմից պարտադրված ծանր վիճակից: Այս երկու զորեղ ախոյանների համար Հայաստանն ուներ առաջնակարգ ռազմական դիրք և տնտեսական կարևորություն: Այն իր բարձր լեռներով ու խոր կիրճերով իսկական բնական ամրոց էր: Հայաստանին տիրելը՝ կնշանակեր իշխող դիրք ունենալ հարևան երկրների նկատմամբ: Բացի այդ, տնտեսական առումով, Հայաստանը Արևելքը Արևմուտքի հետ կապող միջազգային առևտրի կենտրոն էր: Ընկած լինելով Հռոմի և Պարթևստանի արանքում, Հայաստանը դառնում էր կռվախնձոր և ռազմական գործողությունների թատերաբեմ, որի հետևանքով հայտնվում է չափազանց ծանր կացության մեջ: Որպես հեռատես ու խելոք թագավոր՝ Արտավազդ II-ը հասկանում էր, որ այդ վիճակում հայոց պետության անվտան-գությունը և անկախությունը կարելի է պահպանել միայն չեզոք դիրք գրավելով: Սակայն չեզոքությունը չէր բավարարում ոչ Հռոմին և ոչ էլ Պարթևստանին: Նրանք հայոց թագավորից պահանջում էին դառնալ դաշնակից և մասնակցել իրենց արշավանքներին: Նկատի ունենալով ստեղծված բարդ և ծանր դրությունը, ինչպես նաև ուժերի իրական փոխհարաբերությունը՝ Արտավազդ II-ը ստիպված անցնում էր մերթ Հռոմի և մերթ էլ Պարթևստանի կողմը: Այս վիճակը տևում է երկար-երկար դարեր: Հզոր հարևանները փոխվում էին, բայց նրանց միջև գտնվող Հայաստանի դժվարին վիճակը մնում էր անփոփոխ:

Արտավազդ II-ի թագավորության տարիները, ինչպես արդեն ասվեց, համընկնում են դեպի Արևելք Հռոմի ծավալման ժամանակաշրջանի հետ: Արևելքին տիրելու համար Ասորիք է ժամանում հռոմեական դաժան ու ագահ զորավար Մարկոս Կրասոսը, որը արյան մեջ էր ճնշել Սպարտակի ապստամբությունը: Նա երազում էր հարստանալ ինչպես Լուկուլլոսը և փառք ձեռք բերել ինչպես Պոմպեոսը: Կրասոսը Արևելքի նվաճումը փորձում էր սկսել պարթևների երկրից Արտավազդ II-ը, որպես «հռոմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից», իր 6 հազարանոց հեծյալ թիկնապահ գնդի ուղեկցությամբ գալիս է նրա մոտ: Հայոց թագավորը Կրասոսին առաջարկում է 10 հազար հեծյալ զորք և 30 հազար հետևակ, պայմանով, որ նա պարթևների դեմ արշավի Հայաստանի հարավային լեռնոտ շրջաններով: Այստեղ պարթևների գլխավոր ուժ համարվող հեծելազորը չէր կարող այնպիսի հաջողությամբ գործել, ինչպես տափաստաններում: Արտավազդը, այսպիսով, հույս ուներ հռոմեացիների օգնությամբ փրկեր նաև իր երկիրը պարթևների ներխուժումից: Սակայն Կրասոսը գերադասում է կարճ ճանապարհը տափաստանով և մերժում է Արտավազդի առաջարկը: Հայոց թագավորը վերադառնում է Հայաստանը: Շուտով պարթևները ներխուժում են Հայոց երկիր: Արտավազդը օգնության խնդրանքով դիմում է Կրասոսին, բայց վերջինս անպատասխան է թողնում հայոց արքայի խնդրանքը: Երկիրը ավերելուց փրկելու համար Արտավազդին մնում էր մի ելք՝

դաշինք կնքել պարթևների հետ: Հաշտության դաշինքը կնքվում է Արտաշատում և ամրապնդվում Արտավազդի քրոջ հետ պարթևական թագաժառանգ Բակուրի ամուսնությամբ:

Կրասոսը՝ առանց որևէ տեղեկություն իմանալու պարթևների զինական ուժի մասին, իր զորքով անցնում է Եփրատ գետը և խորանում Միջագետքի տափաստաններում: Հասնելով Խառան քաղաքի շրջակայքը՝ հռոմեական զորքերը հանդիպում են պարթևական բանակին, որտեղ էլ Ք.ա. 53թ. մայիսի 6-ին տեղի է ունենում վճռական ճակատամարտը, որի մասին սարսափով են հիշում հռոմեացիների մի քանի սերունդներ: Պարթևները, իրենց հին սովորույթի համաձայն, ձևացնում են թե փախչում են, և ծուղակի մեջ գցելով թշնամում՝ ջախջախում են: Հռոմեացիների բանակը 20 հազար սպանված է տալիս, որոնց թվում էին Կրասոսն ու իր որդին: Ի նշան տարած հաղթության, պարթևների զորավար Սուրենը Կրասոսի գլուխն ուղարկում է պարթևների թագավորին, որն այդ ժամանակ գտնվում էր Հայաստանում՝ Արտավազդի մոտ: Սուրհանդակը Կրասոսի գլուխն Արտաշատ է հասցնում այն պահին, երբ երկու թագավորները և նրանց շրջապատը դիտում էին հույն Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը: Դերասաններից մեկը՝ Յասոն Տրալլացին, հռոմեական զորավարի գլուխը նետում է թագավորների ոտքերի տակ: Հետագայում զարգացնելով իրենց հաջողությունները՝ պարթևներն իրենք են արշավանք կազմակերպում Հռոմի դեմ: Ք.ա. 40թ. պարթևական զորքերը դաշնակից հայկական մի զորամասի մասնակցությամբ, ներխուժում են Հռոմի տիրապետության տակ գտնվող երկրներ: Ասորիքի և Փյունուկիայի քաղաքները, դժգոհ լինելով Հռոմի ծանր լծից, սիրով են ընդունում նրանց: Այստեղից պարթևահայկական զորքերը մտնում են Պաղեստին և գերեվարում մեծ թվով հրեաների, որոնց մի մասը բերվում ու բնակեցվում են Հայաստանում:

Չնայած Կրասոսի անփառունակ վախճանին, Հռոմը չի հաշտվում ստեղծված իրադրության հետ և չի հրաժարվում Պարթևստանն ու ողջ Արևելքը գրավելու իր մտադրությունից: Այս անգամ պարթևների երկրի վրա արշավելու համար Արևելք է գալիս զորավար Մարկոս Անտոնիոսը: Նա որոշում է պարթևների դեմ արշավել Հայաստանի վրայով: Անտոնիոսը դեսպան է ուղարկում Արտավազդի մոտ և սպառնալիքներով տիպում հայոց արքային օգնական զորք տալ իրեն: Քանի որ Անտոնիոսի արշավանքը կատարվում էր Հայաստանի վրայով, ուստի Արտավազդը հարկադրված հռոմեական զորավարին է տրամադրում շատ փոքրաքանակ մի զորք: Պարթևների դեմ արշավանքը սկսվում է Ք.ա. 36թ.: Հռոմեական 100 հազարանոց զորքին ուղեկցում էին քաղաքների գրավման համար նախատեսված պաշարողական մեքենաներ, որոնց տեղաշարժն առաջացնում էր դժվարություններ: Քանի որ Անտոնիոսը շատ էր շտապում, ուստի փոքրաթիվ ուժեր թողնելով պաշարողական մեքենաների հսկողության համար՝ ինքն առաջ է անցնում: Պարթևները օգտվելով դրանից, հարձակվում և ոչնչաց-նում են պաշարողական մեքենաները: Արտավազդը, տեսնելով, որ հռոմեացիների արշավանքն անհաջողության է մատնված, ետ է քաշում իր տրամադրած զորքը: Եվ իսկապես, շուտով Անտոնիոսի բանակը պարտություն է կրում՝ այս անգամ կորցնելով մոտ 35 հազար զինվոր: Հռոմեացիների մնացած մասը փրկվում է՝ անցնելով Արաքս գետը և մտնելով Հայաստանի հողը: Հայոց արքան նրանց ապահովում է ուտելիքով և փրկում վերջնական ջախջախումից: Վերադառնալով Եգիպտոս՝ Կլեոպատրա թագուհու մոտ, որի հետ ամուսնացած էր, Անտոնիոսը Հռոմի սենատի առաջ արդարանալու համար, իր պարտության մեղքը բարդում է հայոց արքայի վրա և առիթներ է որոնում նրան պատժելու ու Հայաստանը նվաճելու համար:, Ք.ա. 34թ. Անտոնիոսը մի նոր զորքի գլուխ անցած, արշավում է Հայաստան և մոտենում է Արտաշատին: Երկիրն ու մայրաքաղաքն ավերածությունից փրկելու համար Արտավազդը ներկայանում է Անտոնիոսին: Նենգ Անտոնիոսը ձերբակալում է նրան, թալանում հայոց արքաների գանձերը, տաճարները և երկրի ողջ հարստությունը, և ապա զորք թողնելով Հայաստանի բերդերում, վերադառնում է Եգիպտոս՝ իր հետ տանելով Արտավազդին ու նրա ընտանիքը: Զայրացած Անտոնիոսի դավադիր արարքից՝ ժաղավուրդը և հայկական զորքի մի մասը համախմբվում է Արտավազդ II-ի ավագ որդի Արտաշեսի շուրջ և

պատերազմ սկսում հռոմեացիների դեմ: Սակայն ճակատամարտում պարտություն կրելով՝ Արտաշեսը ստիպված է լինում ապաստանել պարթևների մոտ: Հռոմեական սովորության համաձայն իր «հաղթանակի» կապակցությամբ Ալեքսանդրիայում հաղթահանդես է կազմակերպում: Անտոնիոսը ոսկե շղթաներով շղթայված Արտավազդին և նրա ընտանիքի անդամներին հանդիսավոր կերպով հանձնում է Կլեոպատրա թագուհուն: Գերիներին ազատություն են խոստանում, եթե նրանք հաղթահանդեսի ժամանակ մեծարանքի խոսքեր ասեն Եգիպտական թագուհուն և ներում հայցեն նրանից: Սակայն հայոց թագավորը և նրա ընտանիքը լռում են ցույց տալով իրենց հոգու վեհությունը: Արտավազդն անցնում է գլուխը բարձր՝ թագավորին վայել հպարտությամբ: Կլեոպատրան չի ներում Արտավազդին և նրան բանտ է նետում, իսկ մի քանի տարի անց՝ մահապատժի ենթարկում: Դա մի կորուստ էր հայ ժողովրդի համար: Բայց երկար չեն ապրում նաև Անտոնիոսը և Կլեոպատրան: Ք.ա. 31թ. Ակցիումի ծովային ճակատամարտում նրանք ջախջախիչ պարտություն են կրում Օկտավիանոսից և նրա ձեռքը չնկնելու համար ինքնասպան են լինում:

Օգտվելով դրանից՝ Անտոնիոսի դաշնակից Ատրպատականի թագավորը որոշում է զավթել Հայաստանը:

**Բ) Արտաշեսյան թագավորության անկումը (1 ժամ):** Արտավազդ II-ի որդի Արտաշեսը, որը հոր ձերբակալությունից հետո հեռացել էր պարթևների մոտ, նրանց օգնությամբ հարձակվում է Հայաստան մտած Ատրպատականի զորքերի վրա, պարտության մատնում նրանց և գերի վերցնում թագավորին: Այսպես Արտաշեսը հաստատվում է հայոց գահին: Անտոնիոսի նենգությունները և հայոց թագավորի սպանությունը մեծ զարյուր է առաջացնում երկրում: Այդ էր պատճառը, որ Արտաշեսի Հայաստան գալուց հետո հռոմեացիների դեմ պայքարը ստանում է համաժողովրդական բնույթ: Նա հոր վրեժը առնելու համար հրամայում է ոչնչացնել երկրում գտնվող հռոմեական բոլոր կայազորները՝ այսպես հայտարարելով իր անկախության մասին: Արտաշես II-ի թագավորության տարիները (Ք.ա 30-20թթ) անցնում են խաղաղ, պատերազմներից հեռու: Նրա իշխանությունը տարածվում է նաև Ատրպատա-կան-Մեդիայի վրա: Արտաշես II-ը վարում է ինքնուրույն և անկախ քաղաքականություն և պահպա-նում «արքայից-արքա» տիտղոսը, որը դրոշմված էր նրա դրամի վրա: Հռոմեացիները չէին կարող երկար հանդուրժել այդ վիճակը: Արտաշեսն իզուր էր ջանում Հայաստան վերադարձնել Եգիպտոսից Հռոմ տարված իր եղբայրներին: Նրանք պետք էին Հռոմին: Օգտավիանոս կայսրը որոշում է Հայաստանը կրկին ենթարկել իրեն և այնտեղ գահ բարձրացնել Հռոմին ցանկալի մեկին: Նա մի մեծ զորաբանակ է ուղարկում Հայաստան, որը որպես հայոց թագավոր իր հետ բերում է Արտաշես II-ի եղբորը՝ Հռոմում 14 ապրած և դաստիարակված Տիգրանին: Մինչ այդ հռոմեական կայսրը Հայաստանում դավադրություն է կազմակերպում Արտաշես II-ի դեմ և սպանել տալիս նրան: Երկիրը զրկվում է իր գործունյա և ուժեղ թագավորից, որը Արտաշեսյան դինաստիայի վերջին ուժեղ ներկայա-ցուցիչն էր: Նրա մեջ վառ էին երկրի հզորության և անկախության ավանդները: Գահն անցնում է Տիգրան III-ին (Ք.ա 20-8թթ.): Նրա գահակալության և հետագա տարիները Արտաշեսյան դինաստիայի աստիճանական անկման ժամանակաշրջանն էին: Տիգրան III-ը, որի գահակալումը և Արտաշեսի սպանությունը խանդավառություն էր առաջացրել հռոմեացիների մոտ, սկզբում հավատարիմ էր Հռոմին, բայց մի քանի տարի հետո Հայաստանում իշխող մթնոլորտի ազդեցությամբ փոխում է իր կողմնորոշումը և երես թեքում հռոմեացիներից: Իր մահվան պահին, Հռոմի կամքին հակառակ, նա հայոց գահը կտակում է որդուն՝ Տիգրան IV-ին, որը գահակալում է իր քույր Էրատոյի հետ միասին (Ք.ա. 8-5թթ.): Տիգրան IV-ը կրում է «արքայից-արքա» տիտղոսը և իրեն Հռոմից անկախ է հայտարարում:

Հռոմեացիները չէին հաշտվում Հայաստանում իրենց ազդեցության կորստի հետ և Ք. ա. 5 թ. ուժով գահ բարձրացրին Արտավազդ III-ին (Ք.ա. 5-2թթ.): Նա Արտավազդ II-ի՝ պատանդության մեջ գտնվող մյուս որդին էր: Նա 29 տարի ապրել էր հռոմեական միջավայրում և դարձել էր խիստ

հռոմեասեր գործիչ: Այդ պատճառով հայերը Ք. ա. 2 թ. գահընկեց արին Արտավազդ III- ին և կրկին գահ բարձրացրին Տիգրան IV- ին և նրա քույր Էրատոյին (Ք.ա. 2-1թթ.): Սակայն Տիգրան IV-ին վիճակված չէր երկար թագավորել: Շուտով նա սպանվում է հյուսիսից Հայաստան ներխուժած ցեղերի դեմ մղած պատերազմում: Նրա քույր Էրատոն հրաժարվում է գահից: Այսպիսով 1թ. ընհատվում է Արտաշեսյան դինաստիան:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Ե՞րբ և ինչպե՞ս էր փոխվել ուժերի հարաբերակցությունը Առաջավոր Ասիայում: Ի՞նչ քաղաքականություն էր վարում Հայաստանը:
2. Ե՞րբ է գահակալել Արտավազդ II-ը: Բնութագրե՛ք նրան:
3. Ներկայացրե՛ք Կրասոսի պարթևական արշավանքը: Ի՞նչ դիրքորոշում ուներ Արտավազդ II-ը: Ի՞նչ ավարտ ունեցավ արշավանքը:
4. Ե՞րբ է կնքվել և ինչո՞վ է ամրապնդվել հայ-պարթևական դաշինքը: Ձեր կարծիքով ճիշտ էր դաշինքի կնքումը պարթևների հետ: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
5. Ե՞րբ են տեղի ունեցել Անտոնիոսի պարթևական և հայկական արշավանքները, ի՞նչ ընթացքը և հետևանքներ են ունեցել դրանք:
6. Ի՞նչ վեհանձն արարքով աչքի ընկավ Արտավազդ II-ը և նրա ընտանիքը գերության մեջ:
7. Ո՞վ է հաջորդում Արտավազդ II-ին և ի՞նչ քաղաքականություն էր նա վարում:
8. Ո՞վ է հաջորդում Արտաշես II-ին և ի՞նչ քաղաքականություն էր նա վարում:
9. Ու՞մ գահ բարձրացրեցին հռոմեացիները Արտաշես II-ի սպանությունից հետո:
10. ի ՞նչ քաղաքական նպատակներ էր հետապնդում Հռոմը՝ հայկական գահ բարձրացնելով ծագումով Արտաշիսյան իր դրածոներին:
11. Ներկայացրե՛ք Մեծ Հայքի գահին իշխած Արտաշեսյան վերջին արքաներին:
12. Ինչո՞վ եք բացատրում Արտաշեսյան արքայատոհմի անկումը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Համեմատե՛ք Կրասոսի և Անտոնիոսի պարթևական աշավանքները: Տետրում լրացրե՛ք նմանությունները և տարբերությունները:**



ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ե՞րբ է գահակալել Տիգրան III-ը:**

1) Ք. ա. 55-34 թթ.: 2) Ք. ա. 30-20 թթ.: 3) Ք. ա. 115-95 թթ.: 4) Ք. ա. 20-9 թթ.:

**2. Ո՞վ էր հյուսիսից Հայաստան ներխուժած ցեղերի դեմ պատերազմում զոհված հայոց թագավորը:**

1) Տիգրան IV-ը: 2) Արտաշես II-ը: 3) Տիգրան III-ը: 4) Արտավազդ II-ը:

**3. Ո՞վ էր Հռոմում դաստիարակություն ստացած հայոց թագավորը:**

1) Տիգրան III-ը: 2) Տիգրան IV-ը: 3) Արտաշես II-ը: 4) Արտավազդ I-ը:

**4. Ու՞մ հետ միասին է գահակալել Տիգրան IV-ը:**

1) Սաթենիկի: 2) Կլեոպատրայի: 3) Էրատոյի: 4) Սելենեի:

**5. Որքա՞ն զորք խոստացավ Կրասոսին Արտավազդ II-ը:**

1) 8 հազար հեծյալ և 40 հազար հետևակ: 2) 35 հազար հետևակ և 10 հազար հեծյալ:
3) 40 հազար հետևակ և 20 հազար հեծյալ: 4) 10 հազար հեծյալ և 30 հազար հետևակ:

**6. Ինչպե՞ս վարվեց Արտավազդ II-ը պարթևներից փրկված և Հայաստան մտած Անտոնիոսի զորքերի հետ:**

1) Ծուղակի մեջ գցեց նրանց և գլխովին ջախջախեց:
2) Հետապնդեց և երկրից դուրս քշեց նրանց:
3) Ապահովեց ուտելիքով և փրկեց վերջնական ջախջախումից:
4) Արգելափակեց և հսկայական փրկագին պահանջեց Հռոմից:

**7. Արտավազդ II-ը Կրասոսին առաջարկում պարթևների դեմ արշավել Հայաստանի հարավային լեռնոտ շրջաններով, որովհետև.**

1) հույս ուներ հռոմեացիների օգնությամբ երկիրը փրկել պարթևների ներխուժումից:
2) փորձում էր ճնշել Հայաստանի հարավում ծավալված ապստամբությունը:
3) ցանկանում էր հռոմեացիներին գցել նախապես պատրաստած ծուղակը:
4) որոշել էր Կրասոսին ցույց տալ Պարթևստան տանող ամենակարճ ճանապարհը:

**8. Ինչու՞ Արտավազդ II-ը չէր կարող խուսափել Անտոնիոսի պարթևական արշավանքին մասնակցելուց:**

1) Նրա երկու որդիները պատանդ էին Հռոմում:
2) Անտոնիոսը որոշել էլ պարթևների դեմ արշավել Հայաստանի վրայով:
3) Հռոմեացիներին խոստացել էր պաշարողական մեքենաներ տրամադրել:
4) Հայաստանը վասալական կախման մեջ էր Հռոմից:

**9. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա) Արտավազդ II-ի գերեվարումը:
բ) Խառանի ճակատամարտը:
գ) Հռոմեացիների կազմակերպած դավադրությունը Արտաշես II-րդի դեմ:
դ) Անտոնիոսի պարթևական արշավանքը:
ե) Տիգրան IV-ի մահը:
զ) Արտավազդ III-ի գահ բարձրանալը:

**10. Կատարել համապատասխանեցում:**

| | |
|---|---|
| 1) Արտաշես II | ա) Ք.ա. 8-5թթ. |
| 2) Տիգրան III | բ) Ք.ա. 55-34թթ. |
| 3) Տիգրան IV | գ) Ք.ա. 5-2թթ. |
| 4) Արտավազդ III | դ) Ք.ա. 30-20թթ. |
| | ե) Ք.ա. 20-8թթ. |

## 5. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԲԱՆԱԿԸ: (1 ԺԱՄ)

**Ա) Կառավարման համակարգը:** Հին Հայաստանն արևելյան տիպի միապետություն էր թագավորի անսահմանափակ իշխանությամբ: Պետության գլուխ կանգնած միապետ-թագավորն, ինքն էր վճռում բոլոր հարցերը՝ պատերազմ հայտարարում, հաշտություն կնքում, քաղաքներ ու ամրոցներ հիմնադրում, դրամներ հատում: Նա էր զորքերի գերագույն հրամանատարը: Հայոց թագավորի իշխանությունը ժառանգական էր՝ անցնում էր հորից ավագ որդուն: Հայոց թագավորներն կոչվում էին Մեծ թագավոր կամ արքայից-արքա, այսինքն թագավորների թագավոր: Հայոց թագավորներց մի քանիսն ունեցել են «Աստված» կոչումը: Սա նշանակում է, որ այդպիսի թագավորը դեռևս իր կենդանության օրոք հայտարարվել է Աստված: Դա թագավորական իշխանության փառաբանման միջոց էր: Երկրի կառավարման գործում շատ կարևոր նշանակություն ուներ թագավորի անմիջական շրջապատը՝ արքունիքը: Այստեղ հավաքված էին թագավորի հարազատները՝ որդիներն ու եղբայրները, պետական պաշտոնյաները, խոշոր հողատեր իշխանները, որոնցից թագավորն ընտրում էր ղեկավար պաշտոնյաներ: Հայոց թագավորներն երկիրը կառավարում էին արքունի գործակալությունների միջոցով: Այդ գործակալություններից ամենամեծը հազարապետությունն էր, այն տնօրինում էր երկրի տնտեսությունը, պետական շինարարությունը (քաղաքների հիմնադրում, բերդերի, ճանապարհների, ջրանցքների կառուցման և այլ գործեր) և հարկային համակարգը:

Պատերազմի ժամանակ նա էր կազմակերպում զորքի ռազմամթերքի և պարենի մատակարարումը: Դրամահատությամբ նույնպես զբաղվում էր հազարապետություն գործակալությունը:

«Սպարապետություն» գործակալությունը զբաղվում էր երկրի զինված ուժերի կազմակերպմամբ՝ խաղաղ ժամանակ, և ղեկավարմամբ՝ պատերազմների ժամանակ:

«Թագադիր ասպետություն» գործակալությունը, բացի արքային թագով պսակելը, վերահսկում էր արքունիքի գործերը, հետևում պալատական կոնանադրության պահպանմանը, կատարում թագավորի հատուկ հանձնարարությունները և այլն:

«Մարդպետություն» գործակալությունը, որ նաև «հայրություն» էր կոչվում, վերահսկում էր արքայական տիրույթներն ու այն բերդերը, որոնցում պահվում էր պետական գանձը:

«Մաղխազություն» գործակալության պարտականությունն էր թագավորի անձի ու արքունիքի պաշտապանությունը:

«Սենեկապետություն» գործակալությունը վարում էր պետական գրասենյակի և դիվանի (արխիվի) գործերը, մշակում հունարեն ու արամեերեն գրվող թագավորական արձանագրությունների տեքստերը:

«Մեծ դատավարություն» գործակալությունը զբաղվում էր իրավունքի ու դատարանի խնդիրներով և այլն: Մեծ նշանակություն ուներ քրմապետի պաշտոնը: Նա հեթանոսների առաջնորդն ու թագավորի առաջին խորհրդատուն էր: Նրան էին ենթարկվում դատական գործը և երկրի տաճարների կալվածքներն ու հարստությունները:

Արքունիքում կարևոր դեր ուներ թագավորի ընտիր թիկնապահ հեծելազորը, որը պահպանում էր թագավորի և արքունի անվտանգությունը: Շուրջ 6000 մարտիկներից բաղկացած թիկնապահ այս գունդը թագավորի հետ մասնակցում էր պատերազմներին:

**Բ) Բանակը:** Հայոց պետության կարևոր մասն էր կազմում բանակը: Տիգրան Մեծի օրոք այն հասնում էր շուրջ 300 հազարի, որից միայն 100 հազարն էր կազմում բուն հայկական բանակը, իսկ մյուս մասը՝ նվաճված և ենթակա երկրների բնակչությունից: Նվաճված երկրները պարտավոր էին զորք տրամադրել Հայաստանին: Այդպիսի պարտավորություններ ունեին նաև տերության մեջ

չմտնող, բայց նրա ազդեցության տակ գտնվող երկրները: Այսպես, Տիգրան Մեծի զորքը բաղկացած էր, բացի հայերից, նաև Ատրպատականի մեդացիներից, ադիաբենցիներից, կորդվացիներից, արաբներից, վրացիներից, աղվաններից և այլ ժողովուրդների ներկայացուցիչներից: Բանակը բաղկացած էր հեծելազորից ու հետևակից:

Հեծելազորն իր հերթին կազմված էր զրահավորված և թեթևազեն հեծելազորներից: Հեծյալն ու ձին մի ամբողջություն էին կազմում և կոչվում էին այրուձի: Զրահով պատված էին թե հեծյալի և թե ձիու առավել խոցելի մասերը: Հայկական զորքի մեծ մասը կազմում էր հետևակը, որի մեջ մտնում էին զրահավորված նիզակակիրները և անզրահ նետաձիգները: Բանակի սպառազինությունը կազմում էին սրերը, դաշույները, նետ ու աղեղը, կարճ ու երկար նիզակները, տեգերը, երկսայր տապարները: Որպես պաշտպանական միջոց ծառայում էին մեծ և փոքր վահանները, երկաթե կամ պղնձե լարերով հուսված սաղավարտները, զրահները և այլն:

Պատերազմի ժամանակ բանակը համալրվում էր ժողովրդից մարդկանց հավաքագրելով, որը կոչվում էր աշխարհազոր: Սովորաբար աշխարհազորն առաջնորդում էին գավառների կառավարիչները՝ ստրատեգոսները:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ պետություն էր Հին Հայաստանը:
2. Ո՞վ էր կանգնած պետության գլուխ:
3. Ինչպիսի՞ հարցեր էր վճռում միապետ-թագավորը:
4. Ովքե՞ր էին ընդգրկված արքունիքի կազմում:
5. Ինչպիսի՞ գործառույթներ էր իրականացնում թագավորի թիկնապահ գունդը:
6. Որքա՞ն էր Տիգրան Մեծի բանակի թիվը, դրանից որքա՞ն էր կազմում բուն հայկական բանակի թիվը:
7. Ի՞նչ մասերից էր բաղկացած բանակը:
8. Ինչո՞վ էր սպառազինված բանակը:
9. Որպես պաշտպանական միջոց ի՞նչ էին օգտագործում բանակում:
10. Ինչպե՞ս էր կազմավորվում աշխարհազորը, ովքե՞ր էին առաջնորդում այն:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Տետրում լրացրե՛ք գործակալությունները և դրանց գործառույթները:**

| Գործակալության անվանումը | Գործառույթները |
|---|---|
| «Հազարապետություն» | |
| «Սպարապետություն» | |
| «Թագադիր ասպետություն» | |
| «Մարդպետություն» | |
| «Մաղխազություն» | |
| «Սենեկապետություն» | |
| «Մեծ դատավարություն» | |

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ու՞մ էր ենթարկվում դատական գործը հին Հայաստանում:**

1) Քրմապետին: 2) Սատրապին:
3) Հազարապետին: 4) Թագավորին:

**2. Ո՞վ էր հեթանոսների առաջնորդը հին Հայաստանում:**

1) Քրմապետը: 2) Մոգպետը:
3) Հայրապետը: 4) Վարդապետը:

**3. Քանի՞ հոգուց էր բաղկացած հայոց թագավորների թիկնապահ հեծյալ գունդը:**

1) 8000: 2) 6000: 3) 3000: 4) 5500:

**4. Որքա՞ն էր բուն հայկական բանակը Տիգրան Մեծի օրոք:**

1) 100 հազար: 2) 300 հազար: 3) 120 հզար: 4) 150 հազար:

**5. Հայոց արքաներից մի քանիսի Աստված տիտղոսը նշանակում էր, որ.**

1) նրանք մահվանից հետո աստվածացվել են և դասվել սրբերի շարքը:
2) նրանց աստվածային իշխանությունը տարածվել է բազմաթիվ երկրների ու ժողովուրդների վրա:
3) նրանք իրենց կենդանության օրոք հայտարարվել են աստված:
4) նրանք ունեցել են անվանական տաճարներ և պաշտվել որպես գլխավոր Աստված:

**6. Ինչպե՞ս էր կոչվում թագավորի անմիջական շրջապատը:**

1) Արքունիք: 2) Սենատ:
3) Ատյան: 4) Պալատ:

**7. Ո՞ր գործակալության պարտականությունն էր թագավորի անձի ու արքունիքի պաշտապանությունը:**

1) Մարդպետություն: 2) Սենեկապետություն:
3) Սպարապետություն: 4) Մաղխազություն:

**8. Ինչպե՞ս էր կոչվում պատերազմի ժամանակ ժողովրդից մարդկանց հավաքագրումը:**

1) Աշխարհազոր: 2) Զորանամակ:
3) Հետևազոր: 4) Պահեստազոր:

**9. Հայոց զորքի գլխավոր հարվածող ուժն էր՝**

1) Հեծելազորը: 2)Սակրավորները:
3) Հետևակը: 4) Մարտակառքը:

**10. Բերված շարքից ընտրել այն գործառույթները, որոնք իրականացնում էր հազարապետության գործակալությունը հին Հայաստանում:**

ա) Քաղաքների հիմնադրման աշխատանքների ղեկավարում:
բ) Արքունիքի անվտանգության ապահովում:
գ) Դատական գործերի կառավարում:
դ) Արքունի գործակալությունների համար պաշտոնյաների ընտրում:
ե) Բնակչությունից հարկերի գանձում:
զ) Զորքի ռազմամթերքի և պարենի մատակարարման կազմակերպում:

## 6. ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: (1 ԺԱՄ)

**Ա) Գյուղատնտեսություն, արհեստագործություն, առևտուր:** Հին Հայաստանը տնտեսապես զարգացած ու հարուստ երկիր էր: Նրա տարածքը լայն հնարավորություններ էր տալիս երկրագործության և անասնապահության զարգացման համար: Շիրակի, Մշո, Բագրևանդի դաշտերում, Վանա լճի շրջակայքում և այլ հովիտներում մեծ վերելք էր ապրում հացաբույսերի մշակումը, այգեգործությունը: Երկրի ընդհարձակ և հարուստ ալպյան արոտավայրերն ու մարգագետինները լավագույն պայմաններն էին ստեղծում անասնապահության համար: Հայաստանը տեսած հույն պատմիչ Քսենոփոնը պատմում է, որ հայերի տները լի էր տարբեր տեսակի մթերքներով: «Չկար մի տուն, որտեղ սեղանի վրա չդնեին գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս՝ ցորենի ու գարու հացի հետ»: Նա պատմում է նաև ընտիր գինիների ու գարեջրի մասին, որոնք խմում էին գետնի մեջ թաղված կարասներից՝ եղեգնի փողի օգնությամբ:

Հնուց ի վեր Հայաստանը հայտնի էր երկաթի, պղնձի, ոսկու հանածոներով, շինանյութերի հարուստ պաշարներով, որոնք լայն չափով նպաստում էին նաև արհեստների զարգացմանը: Արհեստներից հայտնի էին դարբնությունը, գինագործությունը, մանածագործությունը, կաշեգործությունը, կավագործությունը, ոսկերչությունը և այլն: Այդ մասին են վկայում հին քաղաքների ու բնակավայրերի պեղումներից գտնված բազմազան իրեր՝ զենքեր, զարդեր, աշխատանքի գործիքներ, կենցաղային առարկաներ՝ անոթներ, կարասներ և այլն:

Հայաստանում գյուղատնտեսական և արհեստագործական արտադրանքի աճին զուգընթաց ծավալվում է ներքին և արտաքին առևտուրը: Հայոց թագավորներ (առանձնապես Արտաշես I, Տիգրան Մեծ, Արտավազդ II և այլն) խթանում էին առևտրի զարգացմանը: Հոգ էին տանում առևտրական ճանապարհները բարեկարգ և անվտանգ պահելու համար: Հատկապես նշանավոր էր «Հայոց արքունի պողոտան», որն իրար էր կապում երկու մայրաքաղաքները՝ Արտաշատը և Տիգրանակերտը: Օրավուր աճող առևտրի պահանջմունքները հոգալու համար Տիգրան II Մեծը, Արտավազդ II-ը և նրանց հաջորդները դրամներ հատեցին, որոնց հետ զուգահեռ օգտագործվում էին պարթևական և հռոմեական դրամները: Դրամ հատում էին ոչ մի այն արքունի դրամահատարանները, այլև առանձին քաղաքներ:

Քանի որ Հայաստանի վրայով էին անցնում Արևելքը Արևմուտքի հետ կապող առևտրական միջազգային կարևոր ուղիները, ուստի մեր երկիրը մասնակցում էր միջազգային տարանցիկ առևտրին: Շատանում էին Հայաստանից արտահանվող և Հայաստան ներմուծվող ապրանքների քանակն ու տեսականին: Ներմուծվում էին մետաքս, բամբակ, արևելյան համեմունքներ, թանկարժեք քարեր, պերճանքի առարկաներ, գործվածքներ, ապակե անոթներ և այլն: Արտահանվում էին ձիեր, ջորիներ, ներկեր (հատկապես «որդան կարմիր»), գինիներ, չորացրած մրգեր, կաշի, բուրդ և այլն: Հետաքրքիր էր Հայաստանի և Միջագետքի (Բաբելոնի) միջև կատարվող առևտրի մասին հույն պատմահայր Հերոդոտոսի թողած տեղեկությունները: Կաշվե ծալված նավերով էշերի քարավանները գալիս էին Հայաստան: Այստեղ կաշիները ձգում էին ուռենու ճյուղերի վրա, լողացող նավեր դարձնում, ապա բեռնավորվում գինու տակառներով ու էշերով և Եփրատի հոսանքով իջնում Բաբելոն:

Արհեստներն ու առևտուրը հիմնականում զարգանում էին քաղաքներում: Հելլենիզմի դարաշրջանն աչքի ընկավ քաղաքային կյանքի բուռն զարգացմամբ: Ծնունդ առան և բարգավաճեցին մի

շարք մեծ ու փոքր քաղաքներ՝ դառնալով առևտրի ու արհեստագործության կենտրոններ: Նոր քաղաքների մեջ հիշատակության արժանի են Արտաշատը և Տիգրանակերտը: Քաղաքները կառուցվում էին ճանապարհների խաչմերուկներում և ռազմավարական նշանակություն ունեցող վայրերում: Քաղաքային բնակչությունը կազմում էր քաղաքային համայնքներ, որոնք պետությունից լայն ինքնավարություն էին ստանում: Քաղաքային բնակչությունը կազմված էր իշխանավորներից, արհեստավոր-ներից, առևտրականներից և քաղաքային ռամիկներից: Քաղաքային բնակիչներն ազատված էին որոշ հարկերից: Քաղաքացիներն օգտվում էին ավելի լայն իրավունքներից, քան գյուղական համայնքների անդամները: Առևտրի և արհեստների վերելքի շնորհիվ քաղաքները դարձան ոչ միայն դրամական շրջանառության կենտրոններ, այլև արքունիքի տնտեսական հիմքը: Քաղաքում իշխող դիրք ուներ միջնաբերդը, որի շուրջը տարածվում էր պարսպապատ բուն քաղաքը կամ շահաստանը: Այնտեղ կենտրոնացած էր առևտրական և արհեստավորական բնակչությունը: Քաղաքում կառուցվում էր նրա հովանավոր համարվող աստծո տաճարը: Արտաշատի հովանավոր աստվածուհին Անահիտն էր, որի շքեղ տաճարը վեր էր խոյանում:

**Բ) Գյուղեր, դաստակերտներ, ագարակներ:** Հայաստանի տնտեսական հիմքը կազմում էին գյուղի բնակիչներից բաղկացած գյուղական համայնքը, որը գոյություն ուներ երկար դարեր: Գյուղական համայնքը ղեկավարելու համար ընտրվում էր գյուղի ավագ՝ գեղջավագ: Համայնքի բոլոր կարևոր հարցերը լուծում էր համայնքի անդամների ընդհանուր ժողովը: Գյուղական համայնքի անդամները սկզբում ունեին հավասար իրավունքներ: Գյուղի հողեր բաժանվում էին բոլորի հավասար: Հարկերը գանձվում էին նույնպես հավասար: Համայնքի անդամ գյուղացիները գյուղին պատկանող արոտավայրերից և անտառներից ևս օգտվում էին հավասար կերպով: Հետագայում համայնքը շերտավորվում է: Լավագույն հողերը յուրացնում են ավելի ուժեղ ընտանիքները, իսկ թույլերը բավարարվում են անորակ հողերով: Նրանք ստիպված էին լինում հաճախ պարտք վերցնել հարուստներից՝ իրենց գոյությունը պահպանելու համար: Սակայն գյուղական համայնքը չէր քայքայվում, որովհետև՝

1. Այն ժամանակվա տեխնիկայի պայմաններում անհատ գյուղացին միայնակ չէր կարող ապահովել հողի մշակումը և ոռոգումը: Դրա համար անհրաժեշտ էր ամբողջ գյուղի միասնական աշխատանքը: Իզուր չէին ասում. «Գյուղ կանգնի գերան կկոտրի»:
2. Գյուղի համայնքային կառուցվածքը պահանջում էր տնտեսական աշխատանքներն սկսել ու ավարտել միաժամանակ:
3. Գյուղական համայնքը պետական հարկագանձման հիմնական օղակն էր և տալիս էր զորքի ճնշող մասը: Այդ պատճառով էլ պետությունը պահպանում և ամրապնդում էր համայնքը, նույնիսկ թույլ չէր տալիս նրա անդամներին լքել գյուղը և ուրիշ տեղ տեղափոխվել:

Գյուղական համայնքի կողքին հին Հայաստանում գոյություն ունեին մասնավոր տնտեսություններ, որոնք կոչվում էին դաստակերտ կամ ագարակ: Այտեղ մեծ մասամբ աշխատում էին ստրուկներ: Խոշոր դաստակերտները պատկանում էին թագավորին, նրա հարազատներին, արքունի անդամներին, զորահրամանատարներին, տաճարներին: Փոքր ագարակների տերերն էին ծառայողները և զինվորները, որոնք ստանում էին հողամասեր, որպես ծառայության վարձ: Դաստակերտներում և ագարակներում արտադրվում էին հացահատիկ, պտուղ և այլն: Կային նաև մասնավոր անասնապահական տնտեսություններ: Մասնավոր տնտեսությունների տերերը փորձում էին խլել գյուղական համայնքի պատկանող հողերի մի մասը: Այդ վնասակար երևույթը կանխելու համար Արտաշես I-ը կատարում է 1-ին հողային բարեփոխումը և ամբողջ երկրով մեկ կանգնեցնում է հողաբաժան սահմանաքարեր՝ հստակորեն բաժանելով համայնքների (գյուղերի) և մասնավոր տնտեսությունների հողերը: Այսպիսով պաշտպանելով համայնքներին, որոնք պետությանը հարկ ու զորք էին տալիս:

Հիմնական աշխատանքային ուժը Հին Հայաստանում համայնքի անդամ ազատ գյուղացին էր: Սակայն նրանց կողքին կային նաև ստրուկներ, որոնց մի մասն աշխատում էին հիմնականում մասնավոր տնտեսություններում և ճանապարհների, ջրանցքների ու ամրոցների շինարարության մեջ: Ստրուկների մի մասն էլ տեղավորվում էին հին ու նոր քաղաքներում: Ստրուկներ էին դարձվում պատերազմների ժամանակ նվաճված երկրներից հայոց թագավորների՝ Արտաշես I-ի, (Մ. Խորենացին վկայում է, որ Արտաշես I-ը բազմաթիվ ազգեր բերելով բնակեցնում է լեռներում, դաշտերում և հովիտներում), Տիգրան Մեծի, Արտավազդ II-ի կողմից բերված գերիները, ինչպես նաև պարտքերը չվճարած գյուղացիները և ոճրագործները:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տնտեսության ո՞ր ճյուղերն էին զարգացած հին Հայաստանում:
2. Որո՞նք էին հին Հայաստանի տնտեսության զարգացման պատճառները:
3. Ինչ փաստեր կարող եք բերել հին Հայաստանի գյուղատնտեսության զարգացած լինելու մասին:
4. Ովքե՞ր էին զբաղվում արհեստագործությամբ: Թվարկե՛ք Հայաստանում զարգացած արհեստների տեսակները:
5. Ի՞նչ դեր ուներ ներքին և արտաքին առևտուրը երկրի կյանքում:
6. Ի՞նչ էր գյուղական համայնքը:

*Արտաշատ մայրաքաղաքի վերակազմությունը*

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Փորձե՛ք հին Հայաստանի տնտեսությունը ներկայացնել սխեմատիկ պատկերով:**

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ինչպե՞ս էր կոչվում գյուղացիներից կազմված կոլեկտիվը հին Հայաստանում:**

1) Ագարակ: 2) Տոհմ:
3) Համայնք: 4) Երդ:

**2. Ինչպե՞ս էր կոչվում մասնավոր տնտեսությունը հին Հայաստանում:**

1) Դաստակերտ: 2) Ստրատեգիա:
3) Քուստակ: 4) Շահաստան:

**3. Ինչպե՞ս էր կոչվում գյուղական համայնքի ղեկավարը:**

1) Ցեղապետ: 2) Տոհմավագ:
3) Գեղջավագ: 4) Նահապետ:

**4. Ինչպե՞ս էր կոչվում Արտաշատը Տիգրանակերտին կապող առևտրական ճանապարհը:**

1) «Մետաքսի ճանապարհ»: 2) «Առևտրական գլխավոր ճանապարհ»:
3) «Գլխավոր պողոտա»: 4) «Հայոց արքունի պողոտա»:

**5. Հույն ո՞ր պատմիչն է մեզ տեղեկություններ հաղորդում Հայաստանի և Միջագետքի (Բաբելոնի) միջև կատարվող առևտրի մասին:**

1) Ստրաբոնը: 2) Հերոդոտոսը:
3) Ապպիանոսը: 4) Քսենոփոնը:

**6. Մեծ մասամբ ստրուկներ որտե՞ղ էին աշխատում:**

1) Ագարակներում: 2) Քաղաքներում:
3) Գյուղական համայնքներում: 4) Արքունիքում:

**7. Ո՞վ էր Արտաշատ մայրաքաղաքի հովանավոր աստվածուհին:**

1) Աստղիկը: 2) Անահիտը:
3) Ծովինարը: 4) Խուբբան:

**8. Ի՞նչ է Դաստակերտը:**

1) Պետական տնտեսություն: 2) Մասնավոր տնտեսություն:
3) Հանրային տնտեսություն: 4) Անասնապահական տնտեսություն:

**9. Նշվածներից ընտրել այն ապրանքները, որոնք ներմուծվում էին հին Հայաստան:**

ա) Բամբակ: բ) Կաշի:
գ) Ձիեր: դ) Ջորիներ:
ե) Մետաքս: զ) Ապակյա անոթներ:
է) Գինիներ: ը) Ներկեր:
թ) Թանկարժեք քարեր: ժ) Համեմունքներ:

**10. Ո՞վ է ստորև բերված խոսքերի հեղինակը:**

«Չկար մի տուն, որտեղ սեղանին չդնեին գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս՝ ցորենի ու գարու հացի հետ»:

1) Ամմիանոսը: 2) Հերոդոտոսը:
3) Ապպիանոսը: 4) Քսենոփոնը:

## 7. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ: (1 ԺԱՄ)

**Ա) Նյութական մշակույթ:** Հայաստանում Արտաշեսյան արքայատոհմի հաստատումով՝ երկիրը թևակոխում է խաղաղ զարգացման ժամանակաշրջան: Զարգացում է ապրում ոչ միայն տանտեսական այլև մշակութային կյանքը:

Հայաստանում Արտաշեսյանների օրոք ևս կառուցվել են տասնյակ նոր քաղաքներ: Օտար պատմիչները հիացմունքով են խոսում Հայաստանի մայրաքաղաքներ Տիգրտնակերտի և Արտաշատի մասին: Այսպես, նրանք նշում են, որ Արտաշատի կառուցումից առաջ Արտաշես I արքայի պատվերով նախապես կազմրվել է նրա հատակագիծը, ու նոր միայն սկսվել քաղաքի շինարարությունը: Կառուցվել է մեծ և ճոխ մայրաքաղաք, որը հռոմեացիներն անվանում էին «Հայկական Կարթագեն»: Արտաշատի տեղում կատարվող հնագիտական պեղումները հաստատում են այդ տվյալները: Հողի տակից պեղումներով հայտնաբերված են հզոր պաշտպանական շինություններ՝ ինը հարևան բլուրներ ընդգրկող պարսիպներով: Հայտնաբերված բազմաթիվ իրերից, մարմարյա և կավե արձաններից, զենք ու զրահից, աշխատանքային գործիքներով, ոսկուց ու արծաթից և թանկարժեք քարերից պատրաստված բազմատեսակ զարդերից կարելի է պատկերացնել, թե ինչպես էին ապրում և ինչ էին հագնում քաղաքացիները:

Արտաշատում պեղումների ժամանակ հայտնաբերվել են մարմարե արձաններ, բարձրաքանդակներ, զարդեր: Հայաստանի այլ վայրերում գտնվել են քարե գլուխներ: Հատկապես գեղեցիկ են Արտաշատում գտնված դիցուհու մարմարյա արձանը և Արևմտյան Հայաստանում՝ աշխարհահռչակ բրոնզե գլուխը, որը պատկերում է Անահիտ դիցուհուն: Դրանք արվեստի հոյակապն մուշներ են: Անահիտի գլուխը պահվում է Լոնդոնում՝ Բրիտանական թանգարանում:

Արտաշատում գտնված բազմաթիվ կավե արձանիկները պատկերում են երաժիշտ-երաժշտուհիների, ձիավորների, մոր և մանկան և այլ կերպարներ: Դրանց մեջ միախառնված են հունական և հայկական արվեստի գծերը: Այդ արձանիկները զարդարում էին քաղաքացիների բնակարանները: Գտնվել են նաև շատ զարդեր, թանկարժեք մետաղներից և ակներից պատրաստած վզնոցներ, մատանիներ՝ մարդկանց, կենդանիների, թռչունների փորագիր պատկերներով:

Վառ գույներով են նկարագրվում նաև Տիգրանակերտի պարիսպների հզորությունը, շքեղ հասարակական շենքերն ու պալատները, թատրոնը, պարիսպներից դուրս գտնվող թագավորական դղյակն ու պարտեզը:

Շատ գեղեցիկ են Արտաշեսյան թագավորների հատած դրամները: Իրենց քանակով ու գեղեցկությամբ առանձնապես աչքի են ընկնում Տիգրան Մեծի և Արտավազդ II-ի դրամները, որոնք հատվում էին Հայաստանում և Ասորիքում (Սիրիայում): Դրամների վրա մեծ վարպետությամբ պատկերված են թագավորների դիմանկարները, որոնք կենդանի պատկերացում են տալիս նրանց դիմագծերի առանձնահատկությունների, նրանց բնավորությունների, պատկերման ժամանակ ունեցած տարիքի մասին: Դրամների հակառակ կողմերին պաակերված են աստվածներ, կենդանիներ:

**Բ) Հոգևոր մշակույթ:** Նյութական մշակույթին զուգահեռ զարգացում ապրեց նաև հոգևոր մշակույթը: Ինչպես աշխարհի շատ ժողովուրդներ, այնպես էլ հին հայերը եղել են հեթանոսներ և պաշտել են բազմաթիվ աստվածների: Դրա մասին են վկայում աստվածներին նվիրված տարբեր

տաճարները, նրանց մասին ստեղծված տարբեր դիցաբանական ավանդազրույցները: Արտաշես I-ը ի թիվս այլ բարեփոխումների, անցկացրեց նաև կրոնական բարեփոխում: Նա սահմանում է թագավորական տան նախնիների պաշտանմունքը: Նա նորաստեղծ մայրաքաղաք Արտաշատում տաճար է կառուցում, որի մեջ դրվում է Հայոց աշխարհի հովանավոր աստվածուհի Անահիտի արձանը, իսկ նրա կողքին դրվում են Արտաշեսի նախնիների՝ Երվանդական և Աքեմենյան թագավորների քանդակները, որոնց ժողովուրդը պետք է երկրպագեր որպես աստվածների և զոհեր մատուցել նախնիների աստվածա-ցումը բարձրացնում էր նրա իշխանության հեղինակությունը ժողովրդի աչքում:

Հայկական դիցարանի գլխավոր աստվածը Արամազդն էր՝ աստվածների հայրը: Շատ սիրելի է եղել մեր ժողովրդին Անահիտ դիցուհին: Նա համարվել է Հայոց աշխարհի հովանավոր դիցուհի: Անահիտն անվանվել է «մեր ազգի փառք և կեցուցիչ, ամենայն բարեմասնությունների մայր, բոլոր մարդ կանց բարերար»: Վահագնը եղել է պատերազմի, կայծակի և որոտի աստված: Նա պայքարել է չար վիշապների դեմ և հաղթել նրանց: Նրա մասին ժողովուրդը բազմաթիվ առասպելներ ու բանաստեղծություններ է հյուսել, որոնցուն նկարագրվում էին նաև Վահագնի բազմաթիվ սխրագործությունները: Միհր եղել արևի, իսկ Տիր իմաստության և դպրության (գրչության, արվեստի ) աստվածներ: Պաշտվել են և ուրիշ առավածներ ու դիցուհիներ:

Բացի դիցաբանական ավանդազրույցներից, հին Հայաստանում լայն տարածում են ունեցել նաև վիպական զրույցները, որոնք հյուսվել են պատմական երևելի անձնավորությունների՝ Արտաշես, Արտավազդ, Տիգրան Մեծ արքաների և ուրիշների շուրջ: Սրանցից ևս Մովսես Խորենացին մի շարք նմուշներ է պահպանել:

Հայոց լեզուն ունի հազարամյակների պատմություն: Սակայն մեր հայկական տառերը ստեղծվել են միայն V դարում: Դրանից առաջ գոյություն ունեցած նշանագրերը կիրառվել են միայն քրմության նեղ շրջանակներում և հայերեն գրելու փորձերը տաճարների պարիսպներից դարս չեն եկել: Այսպիսով, հին Հայաստանում, թեև խոսել են հայերեն, բայց գրել են ժամանակի միջազգային լեզուներով՝ հունարենով և արամեերենով: Մեզ հասել են տարբեր բովանդակության մի քանի վիմագիր (այսինքն վեմի՝ քարի վրա դրված) արձանագրություններ: Դրանք վկայում են, որ հունրենն ու արամեերենը կիրառվել են կյանքի տարբեր բնագավառներում, հատկապես երկրի վարչական գործերը վարելու նպատակով, օրինակ Տիգրանակերտի ավերակներում գտնված է հայոց թագավորներից մեկի հունարեն գրված ծավալուն հրովարտակը: Հայաստանում գտնված արամեերեն վիմագիր արձանագրությունները մեծ մասամբ պատկանում են Արտաշես I-ի ժամանակին և հիշատակում են նրա անունը: Սրանք գրված են հողաբաժան այն սահմանաքարերի վրա, որոնց մասին արդեն խոսվել է Արտաշեսի իրականացրած հողաբաժանումների կապակցությամբ: Բոլոր պաշտոնական գրությունների պատճենները պահվում էին արքունի գրասենյակում՝ մայրաքաղաք Արտաշատում: Դրանք դրված էին մագաղաթի (հորթի կաշվից պատրաստված թղթի) վրա:

Հին Հայաստանում հունարեն էին գրվում նաև պատմությունները: Նրանք գրվում էին արքունիքում և հեթանոսական տաճարներում: Այսպես, Տիգրան II-ի արքունիքում հույն հեղինակ Մետրոդորոսը գրել է Տիգրան Մեծի պատմությունը, որը մեզ, ցավոք, չի հասել: Հայոց պատմություն է գրել նաև Արտավազդ II թագավորը, իր ժամանակի գիտուն մարդկանցից մեկը: Հույն մի հեղինակ հաղորդում է, որ Արտավազդը գրել է ոչ միա յն պատմական երկեր, այլև ճառեր, ողբերգություններ:

Հետագա դարերում պատմագրությունը շարունակվել է։ Մեզ հայտնի է Մար-Աբաս Կատինա պատմիչը, որը նկարագրել է Հայաստանի պատմության հնագույն շրջանը։ Հայտնի է նաև Օղյումպ պատմիչը, Արամազդ աստծու տաճարի քրմապետը, որը գրել է Արտաշես I-ի մանրամասն պատմությունը։ Երկուսի գործերն էլ լայնորեն օգտագործել է Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն»-ը գրելիս։

Հայկական հեթանոսական տաճարներում, բացի պատմագրությունից, զբաղվել են նաև աստղաբաշխությամբ, մաթեմատիկայով, բժշկությամբ և այլն։

Դեռևս 2 հազար տարի առաջ, Հայաստանում գոյություն է ունեցել թատրոն։ Հայտնի է, որ Տիգրան II-ը Տիգրանակերտում մեծ թատերական շենք է (ամֆիթատրոն) կառուցել և այնտեղ ներկայացումներ տալու համար Հայաստան հրավիրել հույն անվանի դերասանների։ Տիգրանակերտի թատրոնը երկար կյանք չի ունեցել, այն ավերել են հռոմեացիները։ Հայտնի է (ինչպես արդեն ասվել է), որ Արտաշատի արքունի պալատում ներկայացումներ են տրվել, դարձյալ հույն դերասանների կատարմամբ։ Մեզ է հասել այդ դերասաններից մեկի՝ Յասոն Տրալլացու անունը և բեմադրված ողբերգությունը՝ Եվրիպի-դեսի «Բաքոսուհիները»։ Բացի այդ, Արտաշատում գոյություն է ունեցել քաղաքային թատրոն, որտեղ բեմադրվել են և՛ հույն հեղինակների, և՛ Արտավազդ II-ի ողբերգությունները հունարեն լեզվով։

Այսպիսով, հին Հայաստանի թե՛ նյութական, և թե՛ հոգևոր մշակույթը հասել էր բարձր մակարդակի և հանդիսացել այն հիմքը, որի վրա հաջորդ դարաշրջանում պետք է ծաղկեր հայկական միջնադարյան ազգային հարուստ մշակույթը։

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչը նպաստեց հին Հայաստանում մշակույթի զարգացմանը։
2. Մշակույթի ո՞ր ճյուղերն էին զարգացած Արտաշեսյան Հայաստանում։
3. Որո՞նք են նյութական մշակույթի ուղղությունները։ Բերե՛ք օրինակներ։
4. Ինչի՞ մասին է վկայում Արտաշես I-ի կրոնական բարեփոխումը։
5. Փորձե՛ք ներկայացնել հայկական դիցարանի աստվածներին։ Համացանցից դուրս բերե՛ք հետաքրքիր տեղեկություններ նրանց մասին։
6. Ու՞մ են նվիրված եղել ավանդազրույցները։ Դասարանում ընթերցեք Արտաշեսին, Արտավազդին, Տիգրան Մեծին նվիրված ավանդազրույցներ։
7. Ի՞նչ լեզվով են խոսել հին հայերը և ի՞նչ լեզուներով են գրել։
8. Ի՞նչ է վիմագիր արձանագրությունը։
9. Ի՞նչ է մագաղաթը։
10. Ի՞նչն է վկայում պատմագրության զարգացման մասին։
11. Բացի պատմագրությունից գիտության ո՞ր ուղղություններն են զարգացած եղել հին Հայաստանում։

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Փորձե՛ք հին Հայաստանի մշակույթը ներկայացնել սխեմատիկ պատկերով։**

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ու՞մ դրամներն էին առանձնապես աչքի ընկնում իրենց քանդակով ու գեղեցկությամբ:**

1) Արտաշեսի և Զարեհի:
2) Զարեհի և Տիգրան Մեծի:
3) Տիգրան Մեծի և Արտավազդ II-ի:
4) Արտավազդ II-ի և Արտաշես II-ի:

**2. Ո՞վ է եղել Հայոց աշխարհի հովանավոր աստվածը:**

1) Աստղիկը: 2) Արամազդը:
3) Վահագնը: 4) Անահիտը:

**3. Ո՞վ է գրել Արտաշես I-ի մանրամասն պատմությունը:**

1) Օղյումպ պատմիչը: 2) Մար-Աբաս Կատինա Մծուրնացի:
3) Մետրոդորոսը: 4) Արտավազդ II-ը:

**4. Ո՞վ է գրել Տիգրան Մեծի պատմությունը, որը սակայն չի պահպանվել:**

1) Հերոդոտոսը: 2) Քսենոփոնը:
3) Մետրոդորոսը: 4) Ստրաբոնը:

**5. Հայոց արքաներից ո՞վ է գրել ողբերգություններ:**

1) Արտաշես I-ը: 2) Արտավազդ I-ը:
3) Արտավազդ II-ը: 4) Տիգրան Մեծը:

**6. Հեթանոսական կրոնը ուրիշ ի՞նչ անունով էր հայտնի:**

1) Կրակապաշտություն: 2) Բազմաստվածություն:
3) Միաստվածություն: 4) Բնապաշտություն:

**7. Ինչպե՞ս է կոչվում քարի վրա գրված արձանագրությունը:**

1) Վիմագիր: 2) Նկարագիր:
3) Պատկերագիր: 4) Հնչյունագիր:

**8. Ի՞նչ է մագաղաթը:**

1) Կավից պատրաստված գրատախտակ:
2) Պապիրուսից պատրաստված թուղթ:
3) Մոմապատ փայտյա գրատախտակ:
4) Հորթի մշակված կաշվից պատրաստված թուղթ:

**9. Հռոմեացիները «Հայկական Կարթագեն» են անվանել.**

1) Վանը: 2) Երվանդաշատը:
3) Արտաշատը: 4) Տիգրանակերտը:

**10. Բերված շարքից ընտրել այն քաղաքները, որտեղ թատրոններ են եղել:**

ա) Վան: բ) Արտաշատ:
գ) Արտաշատ: դ) Արմավիր:
ե) Երվանդաշատ: զ) Էրեբունի:

## 8. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՓՈՔՐ ՀԱՅՔ, ԾՈՓՔ, ԿՈՄՄԱԳԵՆԵ): (1 ԺԱՄ)

Ինչպես գիտենք, Ք.ա. III դարի վերջին կար հայկական չորս թագավորություններ՝ Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծոփք և Կոմմագենե, որոնք թուլացած լինելով, այլևս ի վիճակի չէին դիմադրել Սելևկյանների հզոր պետության ոտնձգություններին: Ք.ա. 201թ. Սելևկյան թագավորի զորքերը հայազգի զորավարներ Արտաշեսի և Զարեհի գլխավորությամբ ներխուժում են Մեծ Հայք և Ծոփք: Մեծ Հայքը և Ծոփքը վերածվում են սելևկյան նահանգների՝ ստրատեգիաների, որտեղ որպես նահանգապետեր, կառավարում են Արտաշեսը և Զարեհը: Սելևկյանների ազդեցության տակ են ընկնում նաև Փոքր Հայքը և Կոմմագենեն: Այս վիճակը տևում է ընդամենը 10 տարի: Ք.ա 190թ. Փոքր Ասիայի արևմուտքում՝ Մագնեսիա քաղաքի մոտակայքում տեղի է ունենում ճակատամարտ, որն ավարտվում է Սելևկյան Անտիոքոս III թագավորի պարտությամբ, որից հետո նրա տերությունը սկսում է քայքայվել: Օգտվելով դրանից Մեծ Հայքի և Ծոփքի ստրատեգոսներ Արտաշեսը և Զարեհը իրենց անկախ թագավորներ են հայտարարում՝ Արտաշեսը՝ Մեծ Հայքում, Զարեհը՝ Ծոփքում:

**Ա) Փոքր Հայքի թագավորությունը:** Ք.ա. III դ. Փոքր Հայք վերականգնում է անկախությունը և իր սահմանները հյուսիսում ընդարձակում մինչև Սև ծով:

Ք.ա. III դ. կեսերից ուժեղացած Պոնտական թագավորությունն աստիճանաբար տիրում է Սև ծովի հարավարևելյան ափերին: Ք.ա. III դ. վերջին Սելևկյանները գրավում են Փոքր Հայքի թագավորությունը և ստեղծում առանձին սատրապություն, որի սատրապ էր նշանակվում մի հայ մեծատոհմիկի և սելևկյան թագավոր Անտիոքոս III-ի քրոջ որդի Միհրդատը: Ք.ա. 190թ. Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոս III-ի՝ Հռոմից կրած պարտությունից հետո Փոքր Հայք վերականգնում է անկախությունը, սակայն շուտով թարկվում է Պոնտական թագավորությանը: Մեծ Հայքի թագավոր Արտաշես I-ը, որ հավանաբար ծրագրել էր միավորել Փոքր Հայքը, նպաստել է նրա քաղաքական անկախության վերականգնմանը և սահմանների ընդարձակմանը: Ք.ա. II դ. վերջին Փոքր Հայքի թագավորը որդեգրում էր Պոնտոսից փախած Միհրդատ VI Եվպատորին և նրան ժառանգում իր թագավորությունը: Միհրդատ VI Փոքր Հայքում հիմնում և նորոգում է 75 ամրոց, որոնցում պահվում են նրա գանձերի մեծ մասը:

Միհրդատյան երրորդ պատերազմի ժամանակ հռոմեական զորավար Լուկուլլոսի զորքերը ռազմակալում և ավերում են Փոքր Հայքը: Ք.ա. 68թ. հայկական զորքերով Միհրդատ VI ազատագրում է այն: Սակայն Ք.ա. 66թ. հռոմեական զորավար Գնեոս Պոմպեոսը նվաճում է Պոնտական թագավորությունը և Փոքր Հայքով հանդերձ միացնում Հռոմին: Արտաշատի հաշտության պայմանագրով Փոքր Հայքին պատկանող Ճորոխի ավազանը միացվում է Մեծ Հայքի թագավորությանը: Փոքր Հայք, որոշ ընդհատումներով, մինչև Ք.հ. 72թ. գոյատևում է որպես Հռոմի ենթակա թագավորություն:

**Բ) Ծոփքի թագավորությունը:** Ք. ա. III դ. I կեսին ստեղծվում է Ծոփքի և Կոմմագենեի միացյալ պետությունը, որտեղ թագավորում են Երվանդունի Սամոսն ու Արշամը: Ք.ա. III դ. վերջին Անտիոքոս III Մեծը նվաճում է Ծոփքը և դարձնում Սելևկյան պետության նահանգ՝ այնտեղ ստրատեգոս կարգելով Զարեհին: Ք.ա. 190թ. Հռոմի դեմ Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոս III Մեծի պարտությունից հետո Զարեհը Ծոփքը հռչակում է կրկին անկախ թագավորություն: Արտաքին քաղաքականության հարցերում Զարեհը դաշնակցում է Մեծ Հայքի թագավորին՝ միևնույն արքայատան գահակալ Արտաշես I-ին: Զարեհին հաջորդում է Արկաթիոսը, որը հիմնում է նոր մայրաքաղաք՝ Արկաթիակերտը: Արկաթիոսը սպանվում է Սելևկյան Անտիոքոս IV թագավորի դեմ կռվում: Ծոփքի գահն անցնում է Արկաթիոսի եղբորը՝ Կապադովկիա ապաստանած Մեհրուժանին, իսկ նրանից հետո՝ Արտանեսին: Ք. ա. 94թ. Տիգրան II Մեծը Ծոփքը վերամիավորում է Մեծ Հայքին: Ք. ա. 66թ. Տիգրան II Մեծի հետ Արտաշատում կնքած պայմանագրով՝ Հռոմի Պոմպեոս զորավարը Ծոփքն առժամանակ հանձնում է Տիգրան II-ի խոռովարար որդուն՝ Տիգրան Կրտսերին: Սակայն վերջինիս բանտարկությունից հետո Եփրատից արևելք գտնվող Ծոփքի հողերն անցնում են Մեծ Հայքին, արևմուտք ընկած հողերը՝ Հռոմին:

**Գ) Կոմմագենեի թագավորությունը:** Ք. ա. III դ. I կեսին ստեղծվում է Ծոփքի և Կոմմագենեի միացյալ պետությունը, որտեղ թագավորում են Երվանդունի Սամոսն ու Արշամը: Ք. ա. III դ. վերջին Կոմմագենեն անջատվում է Ծոփքից և ենթարկվում Սելևկյաններին: Կոմմագենեի կառավարիչ Պտղոմեոսի օրոք Կոմմագենեն վերականգնում է իր անկախությունը: Տիգրան Մեծի և Արտավազդ II–ի օրոք Կոմմագենե մտնում է հայկական պետության կազմի մեջ: Ք. ա. I դ. II-րդ կեսին Կոմմագենեում հաստատվում է Հռոմի գերիշխանությունը:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Հայկական քանի՞ թագավորություն կար Ք. ա. III դ. վերջին:
2. Ե՞րբ և ու՞մ գլխավորությամբ են սելևկյան զորքերը ներխուժում Մեծ Հայք և Ծոփք:
3. Ի՞նչ իրադարձությունից հետո է սկսում քայքայվել Անտիոքոս III տերությունը:
4. Ե՞րբ են սելևկյանները գրավում Փոքր Հայքի թագավորությունը, ի՞նչ վարչական միավորի են այն վերածում: Ո՞վ է նշանակվում Փոքր Հայքի կառավարիչ:
5. Ու՞մ է որդեգրում Փոքր Հայք թագավորը և նրան ժառանգում իր թագավորությունը:
6. Միհրդատ VI-ը քանի՞ ամրոց է հիմնել և վերանորոգել Փոքր Հայքում և ի՞նչ է պահել այդ ամրոցներում:
7. Ո՞վ և ե՞րբ նվաճել Պոնտական թագավորությունը՝ Փոքր Հայով հանդերձ:
8. Ո՞ր պայմանագրով է Փոքր Հայքին պատկանող Ճորոխի ավազանը միացվել Մեծ Հայքի թագավորությանը:
9. Մինչև Ե՞րբ և ի՞նչ կարգավիճակով է գոյատևել Փոքր Հայքի թագավորությունը:
10. Ե՞րբ է ստեղծվել Ծոփքի և Կոմմագենեի միացյալ թագավորությունը և ովքե՞ր են այնտեղ կառավարել:
11. Ո՞վ է Ք. ա. III դ. վերջին նվաճել Ծոփքը և ու՞մ է կարգել ստրատեգոս:
12. Ո՞վ է Ծոփքը հռչակում անկախ թագավորություն:
13. Ովե՞ր են հաջորդաբար կառավարել Ծոփքի թագավորությունում և ի՞նչ գործեր են կատարել:
14. Ե՞րբ և ո՞վ է Ծոփքի թագավորությունը միավորել Մեծ Հայքի թագավորությանը:
15. Արտաշատի պայմանագրով ո՞վ է նշանակվել Ծոփքի կառավարիչ:
16. Ե՞րբ է Կոմմագենեն անջատվել Ծոփքից:
17. Ու՞մ օրոք է Կոմմագենեն վերականգնել իր անկախությունը:
18. Հայոց ո՞ր արքաների կառավարման շրջանում է Կոմմագենեն մտել հայկական պետության կազմի մեջ:
19. Ե՞րբ և ո՞ր երկրի գերիշխանությունն է հաստատվել Կոմմագենում:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Համեմատե՛ք Փոքր Հայքի, Ծոփքի և Կոմմագենեի թագավորությունները:**



ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Որքա՞ն են մնացել Հայկական թագավորությունները Սելևկյան պետության իշխանության տակ:**

1) Ընդամենը 10 տարի: 2) Մոտ 15 տարի:
3) Ավելի քան 5 տարի: 4) Շուրջ 20 տարի:

**2. Մագնեսիայի ճակատամարտում պարտություն կրեց՝**

1) Երվանդ IV Վերջինը: 2) Հաննիբալը:
3) Դարեհ III-ը: 4) Անտիոքոս III-ը:

**3. Ո՞վ էր իրեն անկախ թագավոր հայտարարել Ծոփքում Մագնեսիայի ճակատամարտից հետո:**

1) Սամոսը: 2) Արշամը:
3) Զարեհը: 4) Քսերքսեսը:

**4. Ք. ա. 190 թ. ո՞ր քաղաքի մոտ է տեղի ունեցել ճակատամարտ սելևկյանների և Հռոմի միջև:**

1) Անտիոք: 2) Խառան:
3) Գավգամելա: 4) Մագնեսիա:

**5. Ու՞մ է որդեգրել Փոքր Հայքի թագավորը:**

1) Արտաշեսին: 2) Միհրդատ Եվպատորին:
3) Զարեհին: 4) Արշամին:

**6. Միչև ե՞րբ է գոյատևել Փոքր Հայքի թագավորությունը:**

1) Ք. ա. 68 թ.: 2) Ք. ա. 66 թ.:
3) Ք. հ. 72 թ.: 4) Ք. ա. 55 թ.:

**7. Ո՞վ հիմնել Արկաթիակերտ մայրաքաղաքը:**

1) Արկաթիոսը: 2) Արշամը:
3) Սամոսը: 4) Մեհրուժանը:

**8. Ու՞մ է քրոջ որդին էր Փոքր Հայքի սատրապ Միհրդատը:**

1) Անտիոքոս III-ի: 2) Արտանեսի:
3) Զարեհի: 4) Արշամի:

**9. Ծոփքի արքաներին դասավորել ըստ կառավարման ժամանակագրական հաջորդականության:**

ա) Արկաթիոս: բ) Արտանես:
գ) Զարեհ: դ) Արշամ:
ե) Մեհրուժան: զ) Սամոս:

**10. Կատարել համապատասխանեցում:**

| | |
|---|---|
| 1) Միհրդատ VI | ա) Ծոփքի թագավորություն |
| 2) Անտիոքոս IV | բ) Կոմմագենեի թագավորություն |
| 3) Զարեհ | գ) Փոքր Հայքի թագավորություն |
| 4) Պտղոմեոս | դ) Մեծ Հայքի թագավորություն |
| | ե) Սելևկյան թագավորություն |

## Թեմային վերաբերող տեսանյութեր համացանցից

| | |
|---|---|
| https://www.youtube.com/watch?v=xa1yDqk2ClQ&list=PLiyk7kuWOFDLBxA-lB23-NyXPccuNPv55&index=20&t=83s | Ովքեր են Արտաշեսյանները |
| https://www.youtube.com/watch?v=100YwlsfxUU&list=PLiyk7kuWOFDLBxA-lB23-NyXPccuNPv55&index=23&t=134s | Հայորդիներ/ Արտաշես Ա |
| https://www.youtube.com/watch?v=qdap6AVRshY&list=PLiyk7kuWOFDLBxA-lB23-NyXPccuNPv55&index=8 | Տիգրան Մեծ |
| https://www.youtube.com/watch?v=sKqbKpqmgeY&list=PLiyk7kuWOFDLBxA-lB23-NyXPccuNPv55&index=13 | Տիգրան Մեծ |
| https://www.youtube.com/watch?v=2eIJowPYhOs&list=PLiyk7kuWOFDLBxA-lB23-NyXPccuNPv55&index=26&t=12s | Հայ-հռոմեական պատերազմներ մաս 1 |
| https://www.youtube.com/watch?v=2vXYk2nkT3s&list=PLiyk7kuWOFDLBxA-lB23-NyXPccuNPv55&index=27 | Հայ-հռոմեական պատերազմներ մաս 2 |
| https://www.youtube.com/watch?v=_kKOBY06jaE&list=PLiyk7kuWOFDLBxA-lB23-NyXPccuNPv55&index=28 | Հայ-հռոմեական պատերազմներ մաս 3 |
| https://www.youtube.com/watch?v=uXgJ4TKz3ns&list=PLiyk7kuWOFDLBxA-lB23-NyXPccuNPv55&index=9 | Արտավազդ Բ |

## ԹԵՄԱ 4. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (14 ԺԱՄ)

### 1.Աշխարհաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում: Հայկական պետությունը դրածո արքաների օրոք: (2 ժամ)

Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո հայոց պետականությունը թուլանում է, որը կապված էր երկու հզոր հարևան տերությունների՝ Հռոմի և Պարթևստանի ճնշման հետ: Չնայած կենտրոնական իշխանության թուլացմանը՝ Հայաստանը պահպանում էր իր ռազմական և տնտեսական հզորությունը: Հռոմեական պատմիչի խոսքերով՝ Հայաստանը մնում էր 3-րդը հին աշխարհի պետությունների շարքում՝ Հռոմից և Պարթևստանից հետո: Օգտվելով Հայաստանի ժամանակավոր թուլացումից՝ I դարի I կեսին հայոց գահի շուրջ պայքար են մղում Ատրպատականի և Վրաստանի թագավորները, որոնց աջակցում էին Հռոմն ու Պարթևստանը:

Տիգրան IV-ից հետո Հռոմը Հայաստանում գահ էր բարձրացնում Արտաշեսյան արքայա տոհմի հետ հեռավոր արյունակցական կապ ունեցող անձանց: Նրանց տրվում էին «Արտաշես» կամ «Տիգրան» դինաստիական անուններ, ե նրանք հավատարմության երդում էին տալիս իրենց հովանավոր կայսրին: Հռոմի հեռագնա ծրագրի համաձայն՝ Հայաստանի թագավոր է նշանակվում Ատրպատականի արքա **Արիոբարզանեսը**, որը մայրական կողմից ուներ Արտաշեսյան ծագում: Այդ քայլով Հռոմը, ընդդեմ իր մշտական ախոյան Պարթևստանի, Արևելքում ձեռք էր բերում Հայաստան-Ատրպատակտն միացյալ և ուժեղ թագավորություն: Սակայն Արիոբարզանեսի թագավոր նշանակվելը Հայաստանում տեղիք տվեց բուռն ելույթների, որոնք 2 թ. վերածվեցին հակահռոմեական հուժկու ապստամբության: Այն ճնշելու համար Հայաստան ժամանեց հռոմեական զորքը: Հերոսական ու համառ դիմադրությամբ հատկա պես աչքի ընկավ Արտագերս ամրոցը: Իսկ այն բանից հետո, երբ վերջապես հսկայական զոհերի գնով ամրոցը գրավվեց, և կողմերի միջև բանակցություններ սկսվեցին, բերդապահ Ադդոնը անսպասելիորեն դաշունահարեց հռոմեացի զորավարին, իսկ ինքը ինքնասպան եղավ: Ճնշելով ապստամբությունը՝ հռոմեացիները Հայաստանում թագավոր հռչակեցին նախ՝ **Արիոբարզանեսին (2-4 թթ.),** ապա՝ նրա որդուն՝ **Արտավազդ IV-ին (4-6 թթ.)**: Սակայն սրանք զոհ գնացին հայերի կազմակերպած դավադրություններին: Այս անգամ դարձյալ Հռոմեական կայսեր հանձնարարությամբ Հայաստան ժամանեց հայկական գահի նոր թեկնածու՝ Հրեաստանի թագավորի թոռը՝ Տիգրան V-ը, որը մայրական կողմով Արտաշեսյան շառավիղ էր: Հայոց այս «նոր թագավորը» գահակալեց ընդա-մենը մի քանի ամիս և գահընկեց եղավ հայերի ապստամ բության հետևանքով: Ընդդիմանալով Հռոմի կողմից Հա յաստանում թագավոր նշանակվելու կարգին՝ հայերը գահ բարձրացրին Տիգրան IV-ի քրոջը՝ **Էրատոյին (6-12 թթ.)**, իսկ այնուհետև՝ Պարթևստանի երբեմնի



թագավոր **Վոնոն Արշակունուն (12-16 թթ.)**: Ինչպես Էրատոն, այնպես էլ Վոնոնը չճանաչվեցին Հռոմի կողմից: 18 թ. հայերի համաձայնությամբ և Հռոմի օժանդակությամբ պոնտական արքայազն **Զենոնը (18-34 թթ.)** Արտաշատում թագադրվեց Մեծ Հայքի թագավոր: Նոր թագավորը լայն ժողովրդականություն էր վայելում հայ ավագանու շրջանում: Նա մեծացել և դաստիարակվել էր հայերի մեջ, ուստի ոչ միայն յուրացրել էր տեղի լեզուն և սովորույթները, այլև վարում էր Հայաստանի պետական շահերից բխող քաղաքականություն: Եվ պատահական չէ, որ հայերը նրան տվել են դինաստիական Արտաշես անունը: Տակիտոսի պատկերավոր նկարագրությամբ՝ «Արտաշատ քաղաքում հայոց մեծամեծների հավանությամբ և շուրջը հավաքված բազմության ներկայությամբ նրա գլխին դրվեց թագավորական զարդանշանը: Մնացածները, հարգանք մատուցելով թագավորին, ողջունում էին՝ Արտաշես անվանելով»: Զենոն-Արտաշեսը միակն է առաջին դարի սկզբներին Հայաստանում գահակալած

թագավորներից, որը գահընկեց չեղավ հայերի կողմից և մահացավ իր բնական մահով: Հայոց **Արշակ I թագավորի (34-35 թթ.)** կարճատև տիրապետությունից հետո Հռոմը գահը հանձնեց վրաց արքայազն **Միհրդատ Իբերացուն (35-37 թթ.)**: Նրա գահակալումը Հայասաանում նշանավորվեց սպարապետ Գիսակ Դիմաքսյանի գլխավորած հակահռոմեական հուժկու ապստամբությամբ, որի շնորհիվ Միհրդատը դուրս վռնդվեց, իսկ երկիրն էլ մինչև 43 թ. լիովին վերականգնեց իր անկախությունը: Հայ ժողովրդի շարունակական ու հերոսական պայքարը Հռոմի դեմ, նրա ազատատենչ ոգին արտահայտվել են հռոմեական նշանավոր բանաստեղծ Վերգիլիոսի հետևյալ դիպուկ այլաբանության մեջ՝ **«կամուրջներ չհանդուրժող Արաքս»**, այսինքն՝ օտար տիրապետությունը չհանդուրժող Հայաստան: Բայց Հռոմը շարունակեց նույն քաղաքականությունը: Շուտով Հռոմի համաձայնությամբ Հայաստանում կրկին թագավոր նշանակվեց Միհրդատը: 51 թ. հայոց գահը բռնազավթեց վերջինիս եղբորորդին՝ Հռադամիզդը նախապես սպանելով հորեղբորը և նրա ամբողջ ընտանիքին: Նման դաժան իրականությունը ստիպեց հայերին փնտրել այլընտրանքային դաշնակցություն: Այդ ժամանակ է, որ Պարթևստանը սկսեց ձեռք բերել իր նախկին հզորությունը: Հայաստանը կանգնած էր երկընտրանքի առջև՝ Հռոմ, թե Պարթևստան:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ իրավիճակ էր Հայաստանում Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո:
2. Ի՞նչ համակնություններ ունեին Հռոմը և Պարթևստանը Հայաստանի նկատմամբ:
3. Հայաստանի հարևորն ո՞ր երկրներն էին ձգտում նվաճել Հայոց գահը:
4. Ինչպե՞ս էին վերաբերում դրածո արքաներին հայ ժողովուրդը:
5. Ինչպիսի՞ դինաստիական անուններ էին տալիս հայ ժողովուրդը իրենց կողմից սիրված դրածո արքաներին: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
6. Փորձե՛ք գնահատել դրածո արքաների կառավարման ժամանակաշրջանը:
7. Վերլուծե՛ք և գնահատե՛ք Վերգիլիոսի «կամուրջներ չհանդուրժող Արաքս» այլաբանությունը:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Լրացրե՛ք «Մեծ Հայքի դրածո արքաները» աղյուսակը**

| Արքայի անունը | Գահակալության տարիները | Նրանց օրոք կատարված իրադարձությունները |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Արտաշեսյան տոհմի ընդհատումից հետո՝ ովքե՞ր էին Հռոմի կողմից Հայաստանում գահ բարձրացվում:**

1) Հռոմեական պետական բարձրաստիճան պաշտոնյաները:
2) Արտաշեսյանների հետ հեռավոր արյունակցական կապ ունեցող անձինք:
3) Հռոմի հետ սերտ կապեր հաստատած հայ ավագանու ներկայացուցիչները:
4) Հռոմեացիներին հպատակություն հայտնած քոչվորական ցեղերի առաջնորդները:

**2. Ի՞նչ դինաստիական անուններ էին տրվում Հռոմի դրածո թագավորներին:**

1) «Տիգրան» կամ «Երվանդ»: 2) «Երվանդ» կամ «Արտաշես»:
3) «Արտաշես» կամ «Տիգրան»: 4) «Տիգրան» կամ «Արտավազդ»:

**3. Ու՞մ էին երդում տալիս Հայաստանի դրածո թագավորները:**

1) Իրենց հովանավոր կայսրին: 2) Հայ ավագանուն:
3) Պարթև արքային: 4) Արևելքի հռոմեական զորավարին:

**4. Ե՞րբ է Հայաստանում սկսվել հակահռոմեական հուժկու ապստամբություն:**

1) 2թ.: 2) 4թ.: 3) 3թ.: 4) 5թ.:

**5. Ինչու՞ են Հայաստանում կարճ իշխել Հռոմի կողմից նշանակված Ատրպատականի գահակալները:**

1) Մահացել են հիվանդություններից:
2) Զոհ են գնացել հայերի դավադրություններին:
3) Գահազրկվել են Հռոմին չհնազանդվելու համար:
4) Գահը զիջել են իրենց հայ ազգականներին:

**7. Որո՞նք են հայ ավագանու շրջանում Զենոնի լայն ժողովրդականության պատճառները:**

1) Հայերի մեջ մեծացած ու դաստիարակված լինելը:
2) Իրեն Արտաշեսյան տոհմից սերված համարելը:
3) Հայոց լեզուն և սովորույթները յուրացնելը:
4) Պոնտոսը Հայաստանին միացնելու մտադրությունը:
5) Հայաստանի պետական շահերից բխող քաղաքականություն վարելը:
6) Հայ ավագանուն ընդարձակ կալվածքներ նվիրելը:

**8. Զենոնը I դարի սկզբներին Հայաստանում գահակալած միակ թագավորն էր, որ՝**

1) մահացել էր իր բնական մահով:
2) դավադրության զոհ է դարձել:
3) գահընկեց է արվել:
4) հրաժարվել է գահից:

**9. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցերին:**

«Արտաշատ քաղաքում հայոց մեծամեծների հավանու թյամբ և շուրջը հավաքված բազմության ներկայությամբ նրա գլխին դրվեց թագավորական զարդանշանը: Մնացածները, հարգանք մատուցելով թագավորին, ողջունում էին՝ Արտաշես անվանելով»:

**ա) Ո՞վ է վերը նշված խոսքերի հեղինակը:**

1) Վերգիլիոսը: 2) Ստրաբոնը:
3) Տակիտոս: 4) Քսենեփոնը:

**բ) Ու՞մ թագադրության մասին է վերը նշված խոսքերը:**

1) Արիոբարզանեսի: 2) Միհրդատ Իբերացու:
3) Զենոնի: 4) Արտավազդ IV-ի:

**10. Կատարել համապատասխանեցում:**

| | |
|---|---|
| 1) Էրատո | ա) 35- 37թթ.: |
| 2) Վոնոն Արշակունի | բ) 4- 6թթ.: |
| 3) Զենոն | գ) 2-4թթ.: |
| 4) Արիոբարզանես | դ) 6-12թթ.: |
| 5) Միհրդատ Իբերացի | ե) 34-35թթ.: |
| 6) Արտավազդ IV | զ) 12-16թթ.: |
| | է) 18-34թթ.: |

## 2. ՊԱՐԹԵՎԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ: ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ԳԱՀԱԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: (2 ԺԱՄ)

**Ա) Պարթևա-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը (1 ժամ)**: Հայաստանում հռոմեա-պարթևական մրցակցության հետևանքով քաղաքականապես անկայուն վիճակ էր ստեղծվել, ինչը սպառնում էր երկրի անվտանգությանը: Պարթև արքա Վաղարշ I-ը Հռոմի ագրեսիան կանխելու և նրան պարտության մատնելու նպատակով էլ ավելի է ամրապնդում դեռևս Արտավազդ II-ի ժամանակներից եկող հայ-պարթևական բարեկամությունը: Հայ ավագանու համաձայնությամբ հայոց գահին թեկնածու է առաջադրվում Վաղարշի եղբայր Տրդատը: 52թ. Վաղարշը և Տրդատը զորքով մտնում են Հայաստան, գրավում Արտաշատն ու Տիգրանակերտը: Տրդատը երկու տարի անց հայերի օժանդակությամբ գրավում է Հյասատանի գահը: Հայոց թագը զավթած վրաց արքայորդի Հռադամիստը դիմում է փախուստի, ճանապարհին դաշունահարելով ու գետը նետելով իր հղի կնոջը՝ Զենոբիային, որպեսզի նա չընկնի հայերի ձեռքը: Սակայն հայերը փրկում են Զենոբիային:

Տրդատ Արշակունու գահ բարձրանալուց հետո տասնամյա պատերազմ (54-64թթ) է սկսվում հռոմեացիների և պարթևա-հայկական զորքերի միջև, որը շատ դանդաղ է ընթանում: Միայն պատե-րազմի սկզբից 5 տարի հետո է ակտիվանում ռազմական գործողությունները: Հռոմեական զորավար Կորբուլոնը մեծաթիվ զորքով արշավանք է կազմակերպում Արտաշատի վրա: Տրդատը Արտաշատի մատույցներում պարտություն է կրում և քաշվում Ատրպատական: Կորբուլոնը գրավում է Արտաշատը և հիմնահատակ ավերում այն՝ պատճառաբանելով, որ այդքան զորք չունի այդ խոշոր քաղաքում կայազոր թողնելու համար: Հռոմը Տիգրանակերտում մի նոր դրածոյի է կարգու հայոց գահին: Վաղարշը կրկին մեծ զորքով շտապում է Հայաստան: Կորբուլոնը բանակցություններ է վարում և համաձայնության գալիս Վաղարշի հետ: Որոշվում է Հայաստանից դուրս բերել թե հռոմեական թե պարթևական զորքերը: Դրանից հետո Վաղարշ I-ը դեսպանություն է ուղարկում Հռոմ՝ Ներոն կայսրից (54-68թթ.) իր եղբայր Տրդատի համար Հայաստանի թագը խնդրելու: Ներոնը մերժում է Տրդատին հեռակա կարգով թագադրելու առաջարկը և պարծենկոտ և գոռոզ Պետոս զորավարի գլխավորությամբ մի նոր բանակ է ուղարկում Հայաստան: Պետոսն ակնկալում է հեշտ հաղթանակ: Նրա վստահությունն այնքան մեծ էր,որ հարկ չէր համարում բանակի շուրջ պահակներ կարգել: Ուստի 62թ Պետոսի բանակը Հայաստանում, Հռանդեա կոչված վայրում, դեռ ճակատամարտի մեջ չմտած, շրջապատվում է պարթևա-հայկական զորքերի կողմից և մի քանի օր անց ոչնչացման սպառնալիքի տակ անձնատուր լինում: Հաղթողները զինաթափում և ծաղրուծանակի են ենթարկում հռոմեական զորքին, ստիպում են նրանց ծնկաչոք անցնել երեք նիզակից պատրաստված «լծի» տակով, ինչը մեծագույն խայտառակություն էր հռոմեական անպարտելի համարվող բանակի համար:

Հռանդեայում կնքվում է համաձայնություն, ըստ որի հռոմեական զորքերը պետք է դուրս հանվեին Հայաստանից և Տրդատը ճանաչվեր հայոց թագավոր: Այս պարտությունից հետո էլ Ներոնը շարունա-կում էր համառել, պահանջելով, որ Տրդատը հայոց թագը ստանալու համար գա Հռոմ և այն անմիջա-կանորեն ստանա իր ձեռքից: Դրանով Ներոնը ուզում էր ցույց տալ, որ ոչ թե իր կրած պարտության պատճառով այլ հանդես բերած մտահոգության շնորհիվ է Տրդատը դառնում հայոց թագավոր: Ի վերջո 64թ նույն Հռանդեայում, ուր անձնատուր էին եղել հռոմեական լեգեոնները, հաշտության պայմանագիր է կնքվում: Այդ պայմանագրի համաձայն Հայաստանը դառնում է

անկախ պետություն, պարթևական և հռոմեական զորքերը դուրս են բերվում Հայաստանից, վերականգնվում է նրա տարածքային ամբողջականությունը: Տրդատը ճանաչվում էր Հայաստանի թագավոր պայմանով, որ նա պետք է մեկներ Հռոմ և կայսեր ձեռքից ստանար թագը: Որոշվում է, որ այսուհետև պարթև Արշակունիները հայոց գահի համար իրենց տոհմից առաջարկլու էին նոր թեկնածու, որը կարող էր թագավորել Հռոմեական կայսրության հավանությանը արժանանալուց հետ միայն:

**Բ) Արշակունիների արքայատոհմի գահակալումը Հայաստանում: (1 ժամ)** Հռանդեայի պայմանագրի համաձայն՝ 65թ Տրդատը իր ընտանիքով և 3 հազարանոց շքախմբով մեկնում է Հռոմ: Ներոն կայսրը նրան փառահեղ ընդունելություն է ցույց տալիս: Նա թագադրում է Տրդատին, նրա պատվին կազմակերպում կրկեսային ներկայացումներ ու զանազան հանդեսներ: Արտաշատ մայրաքաղաքը վերականգնելու համար Ներոնը Տրդատին նվիրում է մեծ գումարներ և տալիս արհեստավորներ: 66թ Տրդատը վերադառնում է Հայաստան և նստում հայոց գահին, որպես օրինավոր թագավոր: Այսպես Հայաստանում հիմք է դրվում Արշակունյաց դինաստիային,որը գոյություն է ունենում մինչև 428թ.: Տրդատի ժամանակի և գործունեության մասին մեր ունեցած տեղեկությունները քիչ են: Իր գահակալության տարիներին Տրդատ I-ը (66-88թթ) մի շարք պատերազմներ է վարում հյուսիսից Հայաստան ներխուժած ալանական ցեղերի (օսերի) դեմ: Կռիվներից մեկի ժամանակ Տրդատը մահացու վտանգի է ենթարկվում, երբ թշնամու նետած օղապարանը փաթաթվում է նրա վզին: Բայց Տրդատն իրեն չի կորցնում իրեն և սրով կտրելով պարանը՝ հաղթական ավարտին է հասցնում ճակատամարտը: Տրդատի ժամանակ կատարվում է զգալի շինարարական աշխատանքներ: Վերականգնվում է Կորբուլոնի կողմից ավերված Արտաշատ մայրաքաղաքը: Իր թագավորության 11-րդ տարում՝ 76թ., ինչպես վկայում է Գառնիում նրա թողած հունարեն արձանագրությունը, Տրդատ I-ը պայծառափայլ թագուհու համար կառուցում է Գառնիի ամրոցը, բարձրանում են ամրոցի հզոր պարիսպները և մյուս կառույցները: Այդ ժամանակ է կառուցվում նաև Գառնիի հրաշագեղ տաճարը, որը նվիրված էր արևի աստված Միհրին:

Տրդատը որպես պարթև Արշակունի, հետևելով Պարթևստանի թագավորների բարքերին, չէր կարող անհաղորդ մնալ Արտաշեյանների օրոք ստեղծված պետական ավանդույթներին: Շուտով Տրդատ I-ը հայանում է, ընդունում հայոց կյանքի բարքերը: Հայ ժողովուրդը ընդունել է Տրդատ I-ին որպես իր հարազատ թագավորի և դարձրել իր երգերի սիրելի հերոսներից մեկը:

88թ. Տրդատ I-ին հաջորդեց Սանատրուկ թագավորը (88-110թթ.): Նա Արածանիի ափին՝ Մշո դաշտում, որտեղով անցնում էր Տիգրանակերտի Արտաշատ գնացող առևտրական և ռազմական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհը, կառուցում է Մծուրք քաղաքը: Ավանդության համաձայն՝ այս թագավորի օրոք է, որ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները Մեծ Հայքում սկսեցին զբաղվել քրիստոնեության քարոզչությամբ: Սանատրուկին փոխարինեց Աշխադարը, որը փորձեց իր իշխանությունը դարձնել ժառանգական: Սակայն պարթևական արքունիքը նրան գահընկեց արեց և գահ բարձրացրեց Պարթամասիրին: Հռոմեական կայսր Տրայանոսը դա համարեց Հռանդեայի պայ-մանագրի խախտում և 114թ. արշավեց դեպի Մեծ Հայք ու Պարթևստան: Նա նպատակ ուներ Հայոց թագավորությունը վերածել հռոմեական պրովինցիայի, սակայն մահացավ և նպատակին չհասավ: Նրան հաջորդած Հադրիանոս կայսրը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:

117թ. հռոմեացիները ճանաչեցին Սանատրուկի որդի Վաղարշ I-ի (117-140թթ.) իշխանությունը: Նրա օրոք Հայաստանում հաստատվում է խաղաղություն: Երկիրը տնտեսապես զարգանում է ու բարգավաճում: Վարդգեսավան քաղաքը պարսպապատվեց ու վերածվեց պետության մայրաքաղաքի՝ թագավորի անունով ստանալով Վաղարշապատ անվանումը: Վաղարշն իր արքունիքը տեղափոխում է Վաղարշապատ: Նոր մայրաքաղաքի բնակիչներին թագավորը հատկացնում է

քաղաքամերձ տարածք, որը կոչվում էր «Քաղաքադաշտ»: Վաղարշապատը կոչվել է նաև Նոր քաղաք, որը հետագայում այնտեղ գտնվող վանքի անունով անվանվել է նաև Էջմիածին: Վաղարշ I-ից հետո, շատ չանցած, հռոմեացիները գահ են բարձրացնում հռոմեական ծերակույտի անդամ Սոհեմոսին, որը հայկական աղբյուրներում հայտնի է Տիգրան Վերջինանունով: Սոհեմոսի իշխանությունն ընդհատվեց 161թ., երբ հայերը Տրդատ իշխանի գլխավորությամբ նրան վտարեցին երկրից, իսկ հռոմեական զորքերը ծանր պարտություն կրեցին: Սակայն վերջիններս մի քանի տարի անց նրան վերահաստատեցին Հայոց գահին: Սոհեմոսը կրկին գահ բարձրացավ Վաղարշապատում: Տրդատը, որի խիզախությունը շարժում էր անգամ հռոմեացիների հիացմունքը, աքսորվեց հեռավոր Բրիտանիա: Արտաշատը կրկին ավերվեց, իսկ Մեծ Հայքում հաստատվեցին հռոմեական կայազորներ:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին Հայաստանում ստեղծված անկայուն իրավիճակի պատճառները:
2. Ի՞նչ իրադարձություններից հետո է սկսվում տասնամյա պատերազմը:
3. Ինչպե՞ս էր ընթանում տասնամյա պատերազմը: Ներկայացրե՛ք կարևոր իրադարձությունները:
4. Ո՞ր մայրաքաղաքն է հիմնահատակ ավերվում, ու՞մ կողմից և ի՞նչ պատճառաբանությամբ:
5. Ի՞նչ պահանջ էր առաջ քաշում Ներոնը Վաղարշ I-ի հետ բանակցություններում:
6. Ինչու՞ Պետոսի բանակը պարտություն կրեց:
7. Ինչպե՞ս ծաղրուծանակի ենթարկվեցին հռոմեական բանակի անպարտելի զինվորները Հռանդեայում:
8. Ի՞նչ էր նախատեսվում Հռանդեայի պայմանագրով:
9. Ինչու՞ Ներոնը Տրդատին մեծ գումարներ և արհեստավորներ տվեց:
10. Ներկայացրե՛ք Տրդատ I-ի գահակալման շրջանը:
11. Ո՞վ է հաջորդել Տրդատ I-ին և ի՞նչ իրադարձություններ են տեղի ունեցել նրա օրոք:
12. Ովքե՞ր են հաջորդել Սանատրուկին և ի՞նչ իրադարձություններ են տեղի ունեցել նրանց կառավարման ժամանակաշրջանում:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Լրացրե՛ք աղյուսակը**

| Արքայի անունը | Գահակալության տարիները | Նրանց օրոք կատարված իրադարձությունները |
|---|---|---|
| Տրդատ I | | |
| Սանատրուկ | | |
| Վաղարշ I | | |

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ե՞րբ են պարթևական զորքերը մտել Հայաստան:**

1) 52թ.: 2) 51թ.: 3) 43թ.: 4) 37թ.:

**2. Ու՞մ գլխավորությամբ են պարթևական զորքերը մտել Հայաստան:**

1) Տրդատի և Բակուրի: 2) Բակուրի և Վաղարշի:
3) Վաղարշի և Տրդատի: 4) Տրդատի և Միհրդատի:

**3. Ու՞մ է ուղարկել Արևելք Ներոն կայսրը:**

1) Պոմպեոսին: 2) Անտոնիոսին:
3) Կորբուլոնին: 4) Գայոս Կեսարին:

**4. Ե՞րբ է տեղի ունեցել հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմը:**

1) 44-54թթ.: 2) 37-47թթ.: 3) 34-44թթ.: 4) 54-64թթ.:

**5. Որտե՞ղ է գտնվում Մծուրք քաղաքը:**

1)Արաքսի ափին: 2) Մշո դաշտում:
3)Բագրևանդում: 4) Մասիսի ստորոտում:

**6. Ո՞վ է հիմնադրել Մծուրք քաղաքը:**

1) Տրդատ I-ը: 2) Վաղարշ I-ը:
3) Սանատրուկ II-ը: 4) Զենոն-Արտաշեսը:

**7. Առևտրական և ռազմական ի՞նչ կարևոր նշանակություն ունեցող ճանապարհ էր անցնում Մծուրքով:**

1) Էկբատանից Մծբին տանող:
2) Տիգրանակերտից Արտաշատ տանող:
3) Արտաշատից Երվանդաշատ տանող:
4) Երվանդաշատի վրայով Վան գնացող:

**8. Ո՞ր քաղաքն է կոչվել «Նոր քաղաք»:**

1) Արմավիրը: 2) Արտաշատը:
3) Վանը: 4) Վաղարշապատը:

**9. Ու՞մ կողմից է Սոհեմոսը նշանակվում Հայաստանի թագավոր:**

1) Հայ ավագանու: 2) Հռոմի:
3) Պարթև արքայի: 4) Ապստամբած ժողովրդի:

**10. Մինչև Հայաստանի թագավոր նշանակվելը Սոհեմոսը եղել է՝**

1) Հռոմի Ծերակույտի անդամ:
2) Արևելքի հռոմեական զորավար:
3) Մարաստանի փոխարքա:
4) Պարթևական զորքի հրամանատար:

## 3. ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ: (1 ԺԱՄ)

Չնայած Արշակունյաց արքայատոհմի հաստատմանը, մինչև II դարի վերջը հայկական գահը ժառանգաբար չէր անցնում Հայաստանի Արշակունի թագավորների որդիներին: Հռանդեայի պայմանագրի հիման վրա՝ յուրաքանչյուր թագավորի մահից հետո պարթև Արշակունիները հայոց գահի համար իրենց տոհմից առաջարկում էին նոր թեկնածու, որը կարող էր թագավորել Հռոմեական կայսրության հավանությանը արժանանալուց հետ միայն:

Սոհեմոս-Տիգրանի մահից հետո հայկական գահը գրավում է պարթ թագավորի եղբայր Վաղարշ II-ը (185-198թթ.): Հռոմեական կայսրությունը, որն այս ժամանակ ներքին խառնակ և անկայուն վիճակ էր ապրում, պարթների հետ ընդհարումներից խուսափելու նպատակով համաձայնվում է Հայաստանում տեղի ունեցած այս փոփոխության հետ: 193թ. է Հռոմում կայսր է հռչակվում Սեպտիմիոս Սևերոսը (193-211թթ.): Նա 194 թ. աշնանը, մեծ ուժերով գալով Արևելք, ցանկանում է ներխուժել նաև Հայաստան: Սակայն հայոց թագավոր Վաղարշ II-ը կանխում է ուղարկելով նրան փող, նվերներ ու պատանդներ, ինչպես և խոստանալով զինակցություն ու բարեկամություն:

197 թ. հռոմեացիները ոչ միայն վերանվաճում են Միջագետքը այլև գրավում են պարթեների մայրաքաղաք Տիզբոնը և Բաբելոնը: 199թ. պարթևները ստիպված են լինում հաշտության դաշնագիր կնքել Սևերոսի հետ: Այդ դաշնագրով Միջագետքը անցնում է Հռոմեական կայսրությանը: Հռոմեացիները գրավելով և պրովինցիայի վերածելով Միջագետքը, փաստորեն սեպ են խրում Հայաստանի ու Պարթեստանի միջև և այդ երկրները բաժանում իրարից: Հայ Արշակունիները, որոնք վաղուց ձգտում էին ազատվել պարթև Արշակունիների վերահսկողությունից և Հայաստանում հիմնել իրենց սեփական ժառանգական դինաստիան, աշխատում են դաշինք կնքել հաղթական Հռոմեական կայսրության հետ, մանավանդ, որ այժմ կայսրությունը այն չափով չէր սպառնում երկրի անկախությանն ու ինքնու-րույնությանը, որքան առաջ: Սեպսրիմիոս Սևերոսը հայերին սիրաշահելու, հայ-պարթևական հետագա հնարավոր դաշնակցությունը խափանելու նպատակով ընդառաջում է Վաղարշ II-ի ցան-կությանը և բարեկամական դաշնագիր է կնքում նրա հետ: Ըստ այդ դաշնագրի՝ հռոմեական կայազորները դուրս են բերվում Վաղարշապատից և Մեծ Հայքի այլ վայրերից, թույլ է տալիս մեծացնել հայկական հեծելազորի թիվը և ամեն տարի զգալի գումար տրամադրում նրա պահպանման համար. սակայն, պայմանով, որ այդ զորքը պետք է մասնակցեր հռոմեական արշավանքներին: Հռոմը, որ կամենում էր խուսափել հյուսիսային լեռնականների ավերիչ ասպատակություններից, փորձում էր իր սահմաններն ապահովագրել հայկական զինված ուժերի միջոցով:

Ինչպես արդեն նշվեց, մինչև Վաղարշ II-ը Հայոց թագավորները նշանակվում էին մեծ մասամբ պարթև Արշակունիների տոհմի ներկայացուցիչներից և հաստատվում Հռոմի կողմից: Հռոմը, որի համար Մեծ Հայքի դաշնակցությունը մեծ կարևորություն էր ձեռք բերում, ճանաչեց իշխող արքայատոհմի ժառանգական իշխանությունը: Հայաստանում հիմնվում է հայ Արշակունիների սեփական ժառանգական դինաստիան, որի հիմնադիրը դառնում է Վաղարշ II-ը: Դա դրական և կարևոր նշանակություն ունեցավ Հայոց թագա վորության հետագա զարգացման համար: 211թ. Վաղարշ II-ը զոհվեց կովկասյան լեռնականների դեմ պատերազմում: Նրան հաջորդեց որդին՝ Խոսրով I-ը (211-259թթ.), որը հունա-հռոմեական սկզբնաղբյուրներում հիշատակվում է նաև Տրդատ անունով:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վ է գահ բարձրանում Սոնեմոս-Տիգրանից հետ։
2. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Վաղարշ II-ը։
3. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Հռոմը Միջագետքը նվաճելով և պրովինցիայի վերածելով։
4. Ի՞նչ քայլեր էր ձեռնարկում Հռոմեական կայսրությունը հայ-պարթևական հետագա հնարավոր դաշնակցությունը խափանելու համար։
5. Ի՞նչ էր նախատեսվում հայ-հռոմեական դաշնագրով։
6. Արշակուն ո՞ր արքայից է սկվում հայ Արշակունիների ժառանգականությունը։ Ի՞նչն է վկայում դրա մասին։
7. Ձեր կարծիքով ինչու՞ էին հայ Արշակունիները կարևորում ժառանգական իշխանությունը։ Հիմնավորե՛ք ձեր պատասխանը։

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Լրացրե՛ք «Վաղարշ II գործունեության դրական և բացասական կողմերը» աղյուսակը**

| Դրական (+) | Բացասական (-) |
|---|---|
| | |

## ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ե՞րբ է գահակալել Վաղարշ II-ը։**

1) 66-88 թթ.։ 2) 88-110 թթ։
3) 185-198 թթ.։ 4) 193-211թթ.։

**2.Ու՞մ հաջորդել Վաղարշ II-ը։**

1) Տրդատ I-ին։ 2) Զենոն-Արտաշեսին։
3) Վաղարշ I-ին։ 4) Սոհեմոս-Տիգրանին։

**3.Ո՞վ է հաջորդել Վաղարշ II-ին։**

1) Տրդատ II-ը։ 2) Խոսրով I-ը։
3) Սոհեմոս-Տիգրանը։ 4) Տրդատ իշխանը։

**4.Ո՞ր տարածքն անցնում Հռոմին 199թ, պարթևների հետ կնքված պայմանագրով։**

1) Միջագետքը։ 2) Փոքր Հայքը։
3) Մեծ Հայքը։ 4) Կոմմագենեն։

**5.Ինչու՞ էին հայ Արշակունիները ձգտում Մեծ Հայքում ստեղծել իրենց ժառանգական դինաստիան։**

1) Հռոմի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար։
2) Ազատվելու պարթև Արշակունիների վերահսկողությունից։
3) Ազատորեն պայքարելու կովկասյան լեռնականների դեմ։
4) Ձերբազատվելու հռոմի և պարթևներին գերիշխանությունից։

**6.Ինչու՞ էր Հռոմեական կայսրը սիրաշահում հայերին:**

1) Արևելքում իր կատարած արշավանքներում հայկական զորքի օգնությունը ստանալու նպատակով:
2) Պարթևների դեմ պայքարում նոր հզոր դաշնակի ձեռք բերելու համար:
3) Հայերի օգնությամբ իր իշխանությունը ամրապնդելու համար:
4) Հայ-պարթևական հետագա հնարավոր դաշնակցությունը խափանելու նպատակով:

**7.Ինչու՞ Հռոմը նվաճեց Միջագետքը և այն վերածեց պրովինցիայի:**

1) Մեծ Հայքի հետ ընդհանուր սահման ունենալու նպատակով:
2) Արևելքում հենակետ ունենալու համար:
3) Հայաստանը ու Պարթեստանը իրարից բաժանելու նպատակով:
4) Արևելքում իր գերիշխանությունը հաստատելու համար:

**8.Ինչպե՞ս է կանխում Վաղարշ II-ը Հռոմի ներխուժումը Հայաստան:**

1) Հռոմեական կայսրին ուղարկում է փող, նվերներ ու պատանդներ:
2) Հռոմին է զիջում մի շարք հայկական տարածքներ:
3) Դաշինք է կնքում պարթևների հետ ընդդմ Հռոմի:
4) Սկսում է դաշնակցել հակահռոմեական ուժերի հետ:

**9.Բերված շարքից ընտրել այն կետերը, որոնք վերաբերում են հայ-հռոմեական դաշնագրին:**

1) Հռոմեական կայազորները դուրս են բերվում Վաղարշապատից և Մեծ Հայքի այլ վայրերից ։
2) Հայաստանը հօգուտ Հռոմի հրաժարվում է իր արտաքին նվաճումներից:
3) Հայաստանի թագավոր պետք է մեկներ Հռոմ և կայսեր ձեռքից ստանար թագը:
4) Թույլտարվում է մեծացնել հայկական հեծելազորի:
5) Հայկական զորքը պետք է մասնակցեր հռոմեական արշավանքներին:
6) Հայաստանը հայտարարվում էր «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»:

**10.Բերված շարքից ընտրել այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Վաղարշ II-ի օրոք:**

1) Վաղարշապատ մայրաքաղաքի հիմնադրումը:
2) 193թ. Սեպտիմիոս Սևերոսի Հռոմում կայսր է հռչակվելը:
3) Հռանդեայի հաշտության պայմանագրի կնքումը:
4) Արտաշատ մայրաքաղաքի ավերումը հռոմեացիների կողմից:
5) Մեծ Հայքում հայ Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը:
6) Միջագետքի վերանվաճումը հռոմեացիների կողմից:

## 4. ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ III-IV ԴԱՐՈՒՄ: (1 ԺԱՄ)

226թ. Պարսկաստանում տեղի ունեցան կարևոր իրադարձություններ, որոնք անմիջականորեն շոշափում էին նրա հարևանների շահերը: Պարսք աշխարհի արքայիկներից մեկը՝ Արտաշիր Սասանյանը, տապալում է պարթև Արշակունի Արտավան V-ի իշխանությունը, կործանում Պարթևական թագավորությունը և հիմնադրում Սասանյանների տերությունը: Արտաշիրը և նրա հաջորդները ձգտում էին վերականգնել Աքեմենյան Պարսկաստանի երբեմնի հզորությունն ու տիրույթները: Մեծ Հայքի թագավորությունը դրանով իսկ դառնում է Սասանյան Պարսկաստանի գլխավոր թշնամիներից մեկը: Պատճառն այն էր, որ այնտեղ շարունակում էր իշխել Արտաշիրի կողմից տապալված Արշակունիների արքայատոհմի հայկական ճյուղը: Հայոց թագավորությունն իր հերթին վճռական քայլեր ձեռնարկեց՝ վերականգնելու պարթև Արշակունիների իշխանությունը Պարսկաստանում: Խոսրով I-ը ապաստան տվեց ոչ միայն պարթև վերջին թագավորԱրտավան V-ի փախստական որդիներին ու հարազատներին, այլև մեծ թվով պարթև ազնվականների ու մեծատոհմիկների: Սրանք, ձգտելով վերականգնել իրենց իշխանությունը և կարիք ունենալով հայկական զինված ուժերի օգնության, Խոսրովին ճանաչեցին որպես Արշակունյաց տոհմի գլխավորի: Հայոց թագավորին օժանդակում էին վրացական և աղվանական զինված ուժերը: Իր հնարավորությունների շրջանակում Հայոց թագավորությանն օգնում էր նաև թուլացած Հռոմը:

Եթե նախկինում հայոց պետականությունը վտանգվում էր ուժեղ Հռոմի կողմից, ապա այժմ նրա անկախության համար անմիջական վտանգ էր ներկայացնում Սասանյան Պարսկաստանը: Ինչպես նախկինում պարթևները, այդպես էլ այժմ Հռոմն էր շահագրգռված, որ պահպանվի ուժեղ հայկական պետությունը՝ որպես հակակշիռ Սասանյան Պարսկաստանի: Նախկինում պարթևների հետ դաշնակցող հայերն այժմ արդեն հակասասանյան պայքարում դաշնակցում էին Հռոմի հետ՝ փորձելով երկրի անվտանգությունն ապահովել հռոմեական զինված ուժերի աջակցությամբ:

Հայ-հռոմեական ուժերի դեմ Արտաշիրի պայքարը ավարտվում է ծանր պարտություններով: Մեծ Հայքի թագավորությունը շուրջ երկու տասնամյակ զերծ է մնում պարսկական արշավանքներից: Վիճակը փոխվեց, երբ իշխանության գլուխ եկավ Շապուհ I Սասանյանը: Պարսից ռազմատենչ արքային 252թ. հաջողվում է ռազմակալել Հայոց թագավորության մեծ մասը: Խոսրով I-ը հեռանում է թագավորության արևմտյան շրջաններ:

256թ. մեծ բանակով Արևելք եկավ Վալերիանոս կայսրը: Հռոմեական օգնության շնորհիվ Խոսրովին հաջողվեց վերականգնել իր իշխանությունը թագավորության ամբողջ տարածքում: Սա խիստ անհանգստացրեց Շապուհ I-ին, որը Խոսրովին սպանելու առաջադրանքով Հայաստան ուղարկեց պարթև իշխան Անակին և նրա եղբորն իրենց ընտանիքներով, որոնք իբր փախել էին Սասանյանների հալածանքներից: Նրանք Հայաստանում գտնվելու երրորդ տարում՝ 259թ., սպանեցին Հայոց թագավորին: Թեև դավադիրները պատժվեցին, սակայն Անակի մանկահասակ որդուն՝ Գրիգորին մերձավորները փախցրեցին Մաժակ-Կեսարիա: Սասանյանները ռազմակալեցին Հայաստանը: Հավատարիմ մարդկանց ուղեկցությամբ մանկահասակ թագաժառանգ Տրդատը տեղափոխվեց Հռոմ:

Սասանյանները չփորձեցին վերացնել Մեծ Հայքի թագավորությունը՝ վախենալով հայ ժողովրդի դիմադրությունից: Նրանք, պարթև Արշակունիների նմանությամբ, Մեծ Հայքի թագավորությունը վերածեցին Սասանյանների երկրորդ թագավորության:Մեծ Հայքում հաջորդաբար իշխանության գլուխ բարձրացան երեք Սասանյաններ, որոնցից առաջինը Որմիզդ Արտաշիրն էր:

Թագաժառանգ Տրդատը Հռոմում չափահաս դարձավ, ստացավ զինվորական փայլուն կրթություն: Ցուցաբերած կարևոր ծառայությունների համար կայսրը նրան 274թ. թագադրեց և ուղարկեց

Հայաստան: Սակայն Հայոց գահին հաստատվելու առաջին փորձը հաջող չեղավ: Դիոկղետիանոս կայսրը 287թ. զորքեր ուղարկեց Մեծ Հայք, և Տրդատը հաստատվեց իր թագավորության արևմտյան տարածքում: Պարսից Ներսեհ թագավորը պատերազմ սկսեց Հռոմի դեմ: Սակայն սկզբնական որոշ հաջողություններից հետո նա 297թ. ջախջախիչ պարտություն կրեց Բասեն գավառի Ոսխա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Գերի ընկան շատ պարսիկ մեծամեծներ և թագավորի կանանոցը: Հայտնվելով անելանելի դրության մեջ՝ Ներսեհը Միջագետքի Մծբին քաղաքում 298թ. կնքեց 40-ամյա հաշտություն, որով պարսից արքունիքը ճանաչում էր Մեծ Հայքի թագավորության անկախությունը, իսկ Տրդատ III-ին էլ՝ Հայոց թագավոր (287/298-330թթ.): Շատ չանցած՝ Հռոմը Մծբինի պայմանագրով ստացած անդրտիգրիսյան երկրամասերը զիջեց Հայոց թագավորությանը: Արևելքում խաղաղություն հաստատվեց, և պատերազմներից հոգնած ժողովուրդներն ազատ շունչ քաշեցին:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Պարսկաստանում տեղի ունեցած քաղաքական ի՞նչ իրադարձություն բախտորոշ նշանակություն ունեցավ Մեծ Հայքի թագավորության համար:
2. Ինչու՞ սրվեցին հայ-պարթևական հարաբերությունները:
5. Ի՞նչ էր իրենից ներկայացնում Մեծ Հայքի թագավորությունը Սասանյան գահակալների օրոք:
6. Ինչու՞ էին պարթևները և հռոմեացիները շահագրգռված, որ պահպանվի ուժեղ հայկական պետությունը: Ձեր կարծիքով ինչի՞ մասին է դա վկայում: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
7. Սասանյաները ռազմակալելով Մեծ Հայքը ինչու՞ չվերացրեցին թագավորությունը: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
8. Ո՞րն էր Մծբինի հաշտության պայմանագրի նշանակությունը Մեծ Հայքի թագավորության հետագա ճակատագրի համար:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Համեմատե՛ք Հռոմի և Սասանյանների վարած քաղաքականությունը Մեծ Հայքի թագավորության նկատմամբ:**



ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ե՞րբ է Պարսից ռազմատենչ արքային հաջողվում ռազմակալել Հայոց թագավորության մեծ մասը:**

1) 252թ.: 2) 256թ.: 3) 287թ.: 4) 298թ.:

**2.Ո՞վ է եկել Հայաստան Խոսրովին սպանելու առաջադրանքով:**

1) Շապուհը: 2) Արտաշիրը: 3) Անակը: 4) Տրդատը:

**3. Ե՞րբ է Բասեն գավառի Ոսխա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտ:**

1) 256թ.: 2) 274թ.: 3) 297թ.: 4) 298թ.:

**4. Ե՞րբ է կնքվել Մծբինի հաշտության պայմանագիրը:**

1) 298թ.: 2) 256թ.: 3) 297թ.: 4) 274թ.:

**5. Քանի՞ տարով էր Ներսեհը կնքել խաղաղության պայմանագիր հռոմեացիների հետ:**

1) 50: 2) 40: 3) 60: 4) 30:

**6. Ի՞նչ է տեղի ունեցել Պարսկաստանում 226թ.:**

1) Պարսկաստանում հաստատվում է Արշակունիների արքայատոհմը:
2) Կործանում Պարթևական թագավորությունը և հիմնադրվում Սասանյանների տերությունը:
3) Պարթևները վերջնականապես երկրից դուրս են քշում հռոմեացիներին:
4) Քրիստոնեությունը հռչակվում է որպես պետական կրոն:

**7. Ինչու՞ է Մեծ Հայքի թագավորությունը դառնում Սասանյան Պարսկաստանի գլխավոր թշնամիներից մեկը:**

1) Մեծ Հայքում իշխում էր Արշակունիների արքայատոհմի հայկական ճյուղը:
2) Հայ Արշակունիները փոխշահավետ պայմանագիր էր կնքել Հռոմի հետ:
3) Հրաշարվել էր ընդունել Սասանյանների գերիշխանությունը:
4) Դաշինք էր կնքել կովկասյան լեռնականների հետ ընդդեմ Սասանյանների:

**8. Ու՞մ էր ապաստան տվել Խոսրով I-ը:**

1) Սասանյանների դեմ ապստամբած վրաց իշխանների:
2) Արտաշիր Սասանյանի դեմ ապստամբած նրա որդիներին:
3) Սասանյաններից պարտություն կրած և նահանջող հռոմեական հռոմեական զորքին:
4) Պարթև վերջին թագավորԱրտավան V-ի փախստական որդիներին ու հարազատներին:

**9. Ինչպե՞ս է վարձահատույց եղել հռոմեական կայսրը Տրդատին նրա մատուցած ծառայությունների համար:**

1) Ճանաչել է իրենից հետո երկրորդը Հռոմեական կայսրության մեջ:
2) Թագադրվել և ուղարկվել է Հայաստան:
3) Նշանակել է իր գահակիցը Արևելքում:
4) Ընդլայնել է Մեծ Հայքի սահմաններն ի հաշիվ Պոնտոսի:

**10. Որո՞նք էին պարսկա-հռոմեական խաղաղության պայմանագրի արդյունքները Հայաստանի համար:**

1) Ներսեհը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը:
2) Մեծ Հայքին միացվեց հսկայական տարածքներ Կապադովկիայում և Պոնտոսում:
3) Պարսիկները ընդունեցին Հայաստանի գերիշխանությունը:
4) Վերականգնվեց Մեծ Հայքի տարածքային ամբողջականությունը:
5) Տրդատը ճանաչվեց Հայոց թագավոր:
6) Տրդատը պարտավորվեց մասնակցել Արևմուտքում Հռոմի կողմից մղվող կռիվներին:

## 5. ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: (1 ԺԱՄ)

**Ավատատիրության ձևավորումը, աստիճանակարգությունը:** Հայաստանի ստրկատիրական հասարակությունը I-III դդ. սկսեց ճեղքեր տալ և վերափոխվել: Մշակ-ստրուկի աշխատանքը դարձել էր անարտադրողական, որն արգելակում էր արտադրողական ուժերի զարգացումը: Այն շահութաբեր դարձնելու նպատակով նրանց սկսեցին ամրացնել հողին: Դա ավատատիրական հարաբերությունների ծագման, զարգացման և հաղթանակի նախադրյալներ ստեղծեց: Ավատատիրությունը հաղթեց IV դ. սկզբներին, սակայն ոչ թե հեղափոխական տեղաշարժերի հետևանքով, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այլ խաղաղ զարգացման պայմաններում: Հակառակ Արևմտյան Եվրոպայի, որտեղ ավատատիրության հաստատումն ուղեկցվում էր քաղաքային կյանքի աննախընթաց անկումով, Հայաստանն ավատատիրության կամ միջնադարի դարաշրջան թևակոխեց՝ ունենալով խոշոր և բազմամարդ քաղաքներ, որոնց բնակչությունը հասնում էր տասնյակ հազարների: Դրանք թագավորական ուժեղ իշխանության հենարանն էին, երկրի տարբեր մասերը տնտեսապես շաղկապող նյութը և պետության տնտեսական կյանքի հիմքը: Ցավոք, հայկական ավատաիրությունն բնականոն զարգացումը հաճախ խանգարվումէր հարևան հզոր տերությունների ռազմական միջամտությամբ: Ավատատիրական հարաբերությունները մեծապես խորացան, երբ պարսկական զորքերը IV դ. 60-ական թթ. բռնագաղ թեցրին Հայոց թագավորության քաղաքային բնակչության նշանակալից մասը: Դրա հետևանքով ուժեղացավ բնատնտեսությունը, թուլացավ թագավորական իշխանությունն:

Ավատականացման հետևանքով ձևավորվեցին ազատներին անազատների դասերը: Եթե մինչ այդ գյուղական համայնքների անդամներն ազատ էին և պարտավոր էին հարկեր տալ պետությանն ու և պարհակներ (հարկադիր աշխատանքներ) կատարել, ապա դրանից հետո նրանք աստիճանաբար վերածվեցին անազատների: Այժմ նրանք պարտավոր էին բերքի մի մասը վճարել իրենց հողերին տիրացող կամ տիրացած ավատատեր-հողատերերին և նրանց համար կատարել պարհակներ: Նրանք աստիճանաբար վերածվում էին հողի վարձակալների: Միաժամանակ, ագարակ-դաստա-կերտներում բանող մշակ-ստրուկները, որոնց աշխատանքը դարձել էր խիստ անարտադրողական, իրենց արտադրանքի մի մասի նկատմամբ ձեռք էին բերում որոշ իրավունքներ: Դրա շնորհիվ նրանք իրավապես աստիճանաբար հավասարվում էին շինականներին կամ գյուղացիներին: Դրա հետևանքով ագարակ-դաստակերտները վերածվեցին սովորական գյուղական բնակավայրերի՝ հաճախ պահպանելով ագարակ կամ դաստակերտ անվանումը: Շինական գյուղացիներից և մշակ-ստրուկներից ձևավորվեց անազատների դասը:

Երկրի ավագանուց և արքունի նախկին պաշտոնյաներից ձևավորվեց ազատների դասը: Ազատների դասի մեջ էին մտնում աշխարհակալ և աշխարհատեր իշխանները, գավառակալ և գավառատեր նախարարները, արքունիքից որպես վարձատրություն հողակտորներ ստացած զինվորականները, աստիճանավորները և այլք: Նրանց հաջողվում է ժառանգական դարձնել զբաղեցրած պաշտոնները: Դրա հետևանքով ազատների դասն աստիճանաբար իր ենթակայության տակ առավ կառավարելու կամ պայմանական հողատիրության սկզբունքով իրեն հանձնված հողերը: Ձևավորվեց ավատատերերի խավը: Խոշոր ավատատերը կոչվում էր իշխան կամ նախարար, իսկ նրա տիրույթը՝ իշխանություն կամ նախարարություն: Ժամանակի ընթացքում արքունիքը ճանաչեց

ավատատերերի մեծ մասի ժառանգական իրավունքը նրանց ենթակայության տակ գտնվող հողերի նկատմամբ: Նախարարություններն ինքնուրույն իշխանություններ չէին, սակայն թագավորից ու արքունիքից դրանց կախումը թույլ էր: Ավատատիրության խորացման հետևանքով նախարարները հաճախ ընդվզում էին արքունական իշխանության դեմ՝ փորձելով չենթարկվել:

Քրիստոնեական եկեղեցին ևս արագ վերածվեց ավատատիրական կառույցի, իսկ հոգևորականները, վերածվելով ավատատերերի, համալրեցին ազատների դասը: Վերջինս ազատված էր հարկեր վճարելուց:

**Հողատիրության ձևերը:** Ավատատիրության ամենաբնորոշ հատկանիշներից մեկն ավատական խոշոր հողատիրությունն էր: Վաղ ավատատիրության շրջանում գոյություն են ունեցել հողատիրության երեք ձևեր՝ հայրենիք, պարգևականքև գանձագին: «Հայրենիք» կամ «հայրենական» էին կոչվում ժառանգական սեփականության իրավունքով հորից որդուն անցնող հողերը: «Պարգևականը» անվանվում էին այն կալվածքները, որոնք հանձնվում էին պետական պաշտոնյաներին կամ զինվորականներին որպես վարձատրություն ծառայության դիմաց: Ծառայությունը դադարեցնելու դեպքում արքունիքը դրանք հետ էր վերցնում: «Գանձագին» էին համարվում գնված հողերը: Սրանք ըստ էության չէին տարբերվում հայրենիքից: Կուսակրոնություն մտցնելուց հետո բարձրաստիճան հոգևորականներին պատկանող հողերը դարձան եկեղեցու սեփականություն: Առաջացավ հողատիրության չորրորդ՝ վանքապատկան ձևը:

Հայոց թագավորի տիրույթները հայրենիք էին: Նրա տիրույթները, որ միաժամանակ պետական հողեր էին, ժառանգաբար անցնում էին հորից որդուն: Չնայած դրանք համարվում էին անօտարելի՝ գնալով կրճատվում էին մինչև այն պահը, երբ արքունիքն սկսեց ամեն գնով դրանք հօգուտ իրեն գրավել:

Արքունական հողերը չէին տրվում սեպուհներին՝ թագավորական և իշխանական ընտանիքների կրտսեր անդամներին: Նրանց որպես բնակության վայր հանձնվում էին Հաշտյանք, Աղիովիտ և Առբերանի գավառները: Այրարատում, որտեղ գտնվում էր արքունի տիրույթների նշանակալից մասը, կարող էին ապրել միայն թագավորն ու թագաժառանգը:

**Թագավորը և ավատատիրական իշխանությունները:** Ավատատիրական իշխանությունները կամ նախարարությունները ժամանակի ընթացքում ձեռք էին բերում մեծ իրավունքներ: Նրանք ենթակա էին թագավորին, սակայն իրենց տիրույթներում ունեին գրեթե անսահմանափակ իշխանություն: Խոշոր ավատատերերն ունեին իրենց ենթակա մանր ազատների խավը, որը զինվորական ծառայության դիմաց նրանցից հող էր ստանում: Թագավորը ևս ուներ ենթակա մանր ազնվականներ, որոնք կոչվում էին ոստանիկներ:

Ավատատիրությունը ծնում էր երկպառակություններ ու կենտրոնախույս ձգտումներ: Դրանք հաճախ հրահրվում էին հարևան Հռոմեական կայսրության կամ Սասանյան Պարսկաստանի կողմից: Արքունիքն էլ իր հերթին կամ դաժանորեն ճնշում էր նման փորձերը կամ էլ աշխատում սիրաշահել դժգոհ նախարարներին:

Մեծ Հայքի թագավորությունն ավատատիրության դարաշրջան թևակոխեց՝ ունենալով բազմաթիվ մարդաշատ ու վաճառաշահ քաղաքներ: Դրանք թագավորական իշխանության հենարանն էին: Երբ, ինչպես նշվեց, 360-ական թթ. Հայաստանի քաղաքային բնակչության նշանակալից մասը բռնագաղ-թեցվեց Պարսկաստան, առևտրական կապերի թուլացման պատճառով շատ քաղաքներ վերածվեցին գյուղերի, թագավորական իշխանությանը ծանր հարված հասցվեց:

**Ավատատիրական աստիճանակարգությունը:** Մեծ Հայքի թագավորություն աստիճանակարգությունը հիշեցնում էր մի բուրգ, որի գլուխ կանգնած էր արքան: Նա երկիրը կառավարում էր արքունիքի միջոցով և համարվում գլուխ երկրին հայոց: Իր հպատակների կյանքի ու գույքի նկատմամբ

թագավորն ուներ անսահմանափակ իրավունքներ: Նա իրավունք ուներ պատերազմ հայտարարելու, հաշտություն կնքելու, դեսպանություններ ընդունելու և բանակցելու այլ երկրների հետ: Միայն թագավորն իրավունք ուներ երկու ոտքին կարմիր կոշիկներ կրել: Բոլոր նախարարները եղել են նրան ենթակա, կատարել են զինվորական և վարչական ծառայությունները և թագավորին տրամադրել իրենց զորաջոկատները: Թագավորական հրովարտակներն ու հրամաններն օրենքի ուժ ունեին: Հայաստանում, ի տարբերություն հին (նախորդ) շրջանի,արքունի գործակալությունները դառնում են խոշոր նախարարական տոհմերի ժառանգական սեփականություն: Այսպես հազարապետություն գործակալությունը պատկանում էր Գնունիներին և Ամատունիներին, սպարապետությունը՝ Մամիկոնյաններին, թագադիր ասպետությունը՝Բագրատունիներին, արքունի թիկնապահությունը «մաղխազությունը»՝ Խոռխոռունիներին և այլն: Այս տոհմերը հաճախ անվանվում են ըստ իրենց սեփականած պաշտոնի՝ Բագրատունիները «Ասպետունի», Խոռխոռունիները՝ «Մաղխազունի» և այլն: Ավատատիրական խավի՝ արքունիքում զբաղեցրած գահերի խնդիրը և մարտադաշտ դուրս բերվող զորաջոկատների թվաքանակը սահմանվում էին «Գահնամակ» և «Զորանամակ» փաստաթղթերով: «Գահնամակով» սահմանվում էր նախարարների գահի տեղն արքունիքում որոշակի կարգով, ըստ նրանց տնտեսական կարողության և ռազմական հզորության:

Առաջին մեկ տասնյակ նախարարությունները համարվում էին ավագ, մյուսները՝ կրտսեր: Այդ հերթականությամբ էլ նրանք արքունիքում բազմում էին իրենց գահերին «բարձերին»: Մրցություն էր ծավալվում նախարարների միջև ավելի բարձր գահի տիրանալու համար: Նախարարական տոհմերի զորքերի թիվը գրանցվում էր «Զորանամակում»: Պետական կարևորություն ունեցող հարցերում թագավորը խորհրդակցում էր երկրի մեծամեծ իշխանների ու կաթողիկոսի հետ: Երկրի առաջ ծառացած կարևոր խնդիրների լուծման նպատակով նա հրավիրում էր աշխարհաժողովներ: Դրանց մասնակցում էին ոչ միայն նախարարներն ու հոգևորականությունը, այլև քաղաքային դասի և շինականների ներկայացուցիչները:

Ավատատիրական բուրգի հաջորդ աստիճանը կազմում էին երկրի մեծամեծ իշխանները: Նրանց մեջ էին մտնում արքունական չորս զորաբանակների հրամանատար բդեշխները, աշխարհակալ ու ավագ նախարարները, ինչպես նաև արքունի գործակալությունների ղեկավարները: Բդեշխներն իրավունք ունեին մի ոտքին կարմիր, իսկ մյուսին կանաչ կոշիկ հագնել: Թագավորին էին ենթարկվում նաև կրտսեր նախարարները: Նախարարներն ունեին իրենց զինանշաններն ու դրոշները: Իրենց տիրույթներում նրանք վարչական և դատական լայն իրավունքներ ունեին: Սեպուհները նախարարական տիրույթների նկատմամբ իրավունքներ չունեին:

Տիրույթ ունեցող բդեշխներն ունեին իրենց ենթակա նախարարությունները, որոնք չէին գտնվում թագավորի անմիջական ենթակայության ներքո:

Աստիճանասանդուղքի հաջորդ աստիճանն ազատներն էին կամ մանր ազնվականները: Թագավորից անմիջական կախման մեջ գտնվողները կոչվում էին ոստանիկ, իսկ նախարարներից կախյալները՝ ազատ: Նրանցից էին կազմվում արքունի հեծելազորը և նախարարական այրուձին: Նրանց էին վստահում արքունիքի պաշտպանությունը և ռազմական ու վարչական շատ պաշտոններ: Իրենց ծառայության դիմաց նրանք ստանում էին պարգևականք կալվածքներ: Բուրգի ամենաստրին աստիճանը զբաղեցնում էին անազատները՝ քաղաքացիները, շինականները և քաղաքային ու գյուղական ռամիկները: Նրանց ուսերին էր ծանրացած հարկային բեռը:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Հասարակական-տնտեսական ի՞նչ փոփոխությունների ենթարկվեց հայկական հասարակությունն ավատատիրության զարգացման հետևանքով:
2. Ինչպիսի՞ն էր ավատատիրական Հայաստանի դասային կառուցվածքը:
3. Ով քե՞ր էին կազում ազատների և անազատների դասերը:
4. Ո՞վ էր Հայոց պետության հողի գերագույն տերը: Որո՞նք էին հողատիրության հիմնական ձևերը:
5. Ինչպե՞ս էին կոչվում ավատատեր իշխանները:
6. Ներկայացրե՛ք գործակալությունները և նրանց գործառույթները:
7. Ո՞ր նախարարական տների մենաշնորհն էին հազարապետության, սպարապետության, թագադիր ասպետության և մաղխազության գործակալությունները:
8. Ովքե՞ր էին սեպուհները:
9. Ի՞նչ փաստաթղթեր են «Գահնամակը» և «Զորանամակը»:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Լրացրե՛ք «Ավատատիրական աստիճանակարգություն» սխեման**



ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ինչպե՞ս էին կոչվում հորից որդուն ժառանգաբար անցնող խոշոր մասնավոր հողերը:**

1) Հայրենիք: 2) Ոստան:
3) Համայնք: 4) Երդ:

**2. Հողատիրության ի՞նչ ձև է պարգևականքը:**

1) Նվաճումների միջոցով ձեռք բերված:
2) Խոպան հողերի մշակման միջոցով ստացված:
3) Հորից որդուն ժառանգաբար անցած:
4) Ծառայությունների համար թագավորի կողմից շնորհված;

**3. Ինչպե՞ս են կոչվում գնման միջոցով ձեռք բերված մասնավոր հողերը:**

1) Գանձագին: 2) Ավատագին:
3) Հայրենական: 4) Արքայական:

**4. Ո՞վքեր էին ապրում արքունի տիրույթներում:**

1) Թագաժառանգը և խոշոր նախարարները:
2) Հոգևորականները և թագավորը:
3) Թագավորը և թագաժառանգը:
4) Արքայական տան բոլոր անդամները և նախարարները:

**5. Ո՞ր դեպքում էր հայոց արքունիքը պարգևականք հողերը հետ վերցնում երկրի ավագանու ներկայացուցիչներից:**

1) Հողի անմշակության: 2) Ծառայության դադարեցման:
3) Ցածր բերքատվության: 4) Ապօրինի վաճառքի:

**6. Ի՞նչ դասերից էր կազմված հայ հասարակությունը վաղ միջնադարում:**

1) Ազատների և ստրուկների: 2) Ստրուկների և մշակների:
3) Մշակների և անազատների: 4) Անազատների և ազատների:

**7. Որտե՞ղ էին քննարկվում երկրի համար առավել կարևոր հարցերը:**

1) Եկեղեցական ժողովում: 2) Աշխարհաժողովում:
3) Արքունի ատյանում: 4) Նախարարների հավաքում:

**8. Ինչպե՞ս էին կոչվում սահմանակալ նահանգների տերերը:**

1) Ստրատեգոսներ: 2) Բդեշխներ:
3) Սատրապներ: 4) Փոխարքաներ:

**9. Նշվանծներից ընտրել նրանց, ովքեր կազմում էին անազատների դասը:**

1) Շինականներ: 2) Նախարարներ:
3) Քաղաքացիներ: 4) Ռամիկներ:
5) Հոգևորականներ: 6) Ոստանիկներ:

**10. Նշվածներից ո՞րն է համապատասխանում «զահնամակ» եզրույթին:**

1) Եկեղեցական ժողովի նամակն՝ ուղղված թագավորին:
2) Նախարարի տեղն արքունիքում սահմանող պետական փաստաթուղթը:
3) Ըմբոստ նախարարներին զահերից զրկող արքայական հրովարտակը:
4) Ծառայության դիմաց հողեր շնորհելու մասին արքայական հրամանագիրը:

## 6. ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ, ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ: (3 ԺԱՄ)

**Ա) Թագավորական իշխանության հզորացումը (2 ժամ)**: 298թ. կնքված Մծբինի 40-ամյա հաշտու-թյան պայմանագրով պարսից արքունիքը ճանաչում էր Մեծ Հայքի թագավորության անկախու-թյունը, իսկ Տրդատ III-ին էլ՝ Հայոց թագավոր (287/298-330թթ.): Տրդատ III–ի գահակալությամբ Մեծ Հայքում խաղաղություն և բարեկեցություն վերահաստատվեց: Նա օրոք Հայաստանում քրիս-տոնեությունը հռչակվեց որպես պետական կրոն, հիմք դրվեց Հայ Առաքելական եկեղեցու կառույցին:

Երիտասարդ արքան հմտորեն տիրապետում էր ռազմական արվեստին, բարեպաշտ և հմուտ պետական գործիչ էր: Տրդատ III Մեծի գործունեությամբ հզորացան կենտրոնական իշխանությունը և բանակը: Նա բարձրացրեց գործակալությունների դերը երկրի կառավարման և պաշտպանության գործում (հազարա պետություն, սպարապետություն, մարդ պետություն, մաղխազություն, ասպե-տություն, Մեծ դատավոր): Հայոց պետության անկախության երաշխավորը հայոց բանակն էր: Տրդատ III–ի ձեռնարկած միջոցառում-ների շնորհիվ երկրի տնտեսությունը վերելք է ապրում:

Միջազգային ասպարեզում, քաղաքական և տնտեսական դրության կայունացմանը զուգընթաց նոր թափ է ստանում առևտուրը, որի գլխավոր կենտրոններն էին Մեծ Հայքում՝ Արտաշատը, իսկ Հյուսիսային Միջագետքում՝ Մծբինը: Հայաստանի մյուս քաղաքները՝ Տիգրանակերտը, Վանը, Նախիջևանը, Վաղարշապատը, Զարեհավանը, Երիզան, նույնպես ընդգրկված էին միջազգային տարանցիկ աշխույժ առևտրի մեջ: Տրդատ III-ը քայլեր է ձեռնարկում Հայ եկեղեցուն տնտեսապես ապահովելու նպատակով: Գյուղական եկեղեցիների քահանաներին տալիս է հողաբաժիններ, դրանով իսկ սկզբնավորվում է եկեղեցական հողատիրությունը: Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Մեծը ձեռնամուխ են լինում կրթության գործին:

Տրդատ Մեծի որդին՝ Խոսրով III-ը (330–338 թթ.), (որն իր կարճահասակության պատճառով կոչվել է Կոտակ) շարունակում է Մեծ Հայքի թագավորության ամրապնդման քաղաքականությունը: Նրա օրոք հայոց կաթողիկոս է դառնում ս. Գրիգոր Լուսավորչի ավագ որդին՝Վրթանես Ա Պարթևը: Տնտեսությունն ու քաղաքաշինությունը երկրում վերելք են ապրում: Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել Երասխի վտակ Մեծամորի հունը փոխվելու հետևանքով: Ուստի Խոսրովն արքունիքը տեղափոխում է ոչ հեռու գտնվող Դվին քաղաքը: Արքայի հրամանով անտառատներ տնկվեցին: Գառնի ամրոցից մինչև Դվին կաղնու անտառի մի մասը կոչվեց «Տաճար մայրի», իսկ մյուսը՝ «Խոսրովակերտ» («Խոսրովի անտառ»): Անտառները դարձան նաև արքայական որսատեղի:

Հայոց սպարապետ Վաչե Մամիկոնյանը 335թ. ջախջախում է Հայաստան ներխուժած մազքթաց Սանեսան թագավորի զորքը: Հաջորդ տարիներին Սասանյանների ներխուժումները կասեցվում են սպարապետ Վաչե Մամիկոնյանի և նրա զինակիցների կյանքի գնով: Վրթանես կաթողիկոսի սահմա-նած կարգով հայրենիքի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերողներին դասում են սուրբ նահատակների շարքին:

Խոսրով Կոտակը սպարապետության պատիվը շնորհում է Վաչե Մամիկոնյանի որդուն՝ Արտավազդին: Երկրում ստեղծված լարված դրությունը պահպանվում է նաև Խոսրովի որդի Տիրանի օրոք (338-350թթ.): Կրկին պատերազմ է սկսվում Պարսկաստանի և Հռոմի միջև: Շարունակվում է

թագավորի և նախարարական տների պայքարը, որին ավելանում է թագավորի առաջին բախումները եկեղեցու հետ: Եկեղեցին գնալով հզորանում էր, որը դուր չէր գալիս թագավորին ու նրա շրջապատին: Այդ հողի վրա վեճ է ծագում թագավորի և Գրիգոր Լուսավորիչի թոռ Հուսիկ կաթողիկոսի միջև: Հուսիկը սպանվում է թագավորի հրամանով և կաթողիկոսական աթոռը խլվում է Լուսավորիչի տոհմից: Սկսվում է աշխույժանալ հեթանոսությունը: Ըմբոստ նախարարների դեմ թագավորի վարած պայքարում Տիրանին սատար է կանգնում նրա մշտական խորհրդատուն և արքունի կալվածքների կառավարիչ Հայր Մարդպետը: Նա գլխավորում է պետության կայունացման ու կենտրոնացման գործը: Նրա նախաձեռնությամբ պատժվում են Արծրունի և Ռշտունի նախարարական տոհմերը:

Տիրան թագավորի կյանքի վերջին տարիներին դժբախտություն էր սպասվում: 344թ. պատերազմ է սկսվում Պարսկաստանի և Հռոմի միջև: Հայաստանը պետք է կատարեր Հռոմի նկատմամբ դաշնակցային պարտքը: Հռոմեացիները պարտություն են կրում, և պարսիկները ներխուժում են Հայաստան: Շապուհ II-ը գերում է Տիրանին և կուրացնել տալիս: Հետագայում Տիրանն ազատվում է գերությունից, բայց քանի որ կույր էր, թագավորել չէր կարող, գահն անցնում է նրա որդուն՝ Արշակ II-ին (350-368թթ.): Արշակ II-ի թագավորության առաջին տասնամյակն անցնում է խաղաղ: Նա ձգտում է համերաշխություն պահպանել իր երկու հզոր հարևանների, ինչպես նաև եկեղեցու և նախարարական տների միջև: Կաթողիկոսությունը վերադարձվում է Լուսավորչի տոհմին: Կաթողիկոս է դառնում Հուսիկի թոռ Ներսես Մեծը (353-373թթ.): Արշակ II-ի իշխանության առաջին շրջանում Ներսեսը թագավորի մերձավոր գործակիցն էր ու խորհրդատուն: Հռոմի հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով Ներսեսի գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկվում Հռոմ՝ կայսեր մոտ: Ներսեսի ջանքերով Տարոն գավառի Աշտիշատ գյուղում 354թ. հրավիրվում է առաջին եկեղեցական ժողովը, որն ընդունում է բազմաթիվ եկեղեցական ու կենցաղային բնույթի օրենքներ: Այդ խաղաղ տարիներին կենտրոնացված իշխանության համար նոր հենարան ստեղծելու նպատակով, Արշակը Մասիսի հարավային կողմում հիմնադրում է Արշակավան քաղաքը: Թագավորը հրավիրում է բոլոր ցանկացողներին գալ և բնակվել այնտեղ: Թագավորի կոչին արձագանքում են մեծ մասամբ աշխատավոր զանգվածներ: Նրանք խումբ-խումբ փախչելով նախարարների կեղեքումներից, գալիս բնակվում են նոր քաղաքում: Խուսափելով դատ ու դատաստանից այստեղ են հավաքվում նաև գողեր ու հանցագործներ: Այդ էր պատճառը, որ Արշակավանի գոյությունը մշտապես գրգռում էր նախարարներին և նրանք հարմար պահի էին սպասում կործանելու այն:

350-ական թթ վերջերին խախտվում է երկրի ներքին խաղաղ վիճակը: Անհնազանդության համար դաժանորեն պատժվում է Կամսարականների տոհմը: Կրկին հանդես է գալիս Հայր Մարդպետը և Ներսես Մեծը դուրս մղվում: Նրան ստիպում են թողնել կաթողիկոսությունը: Հայր Մարդպետը ձգտում էր թուլացնել եկեղեցու տնտեսական հզորությունը, բայց հաջողության չի հասնում և սպանվում է նախարարների ձեռքով: Արքունիքում գլուխ են բարձրացնում հռոմեասեր խմբավորումը: Հռոմի կայսեր համակրանքը վայելող Արշակի եղբորորդի Գնելը կասկած է առաջացնում հայոց թագավորի սրտում: Գնելի մեջ տեսնելով իր գահի հավակնորդի ու հռոմեացիների կողմնակցի, Արշակը սպանել է տալիս նրան: Սպանվում է նաև Արշակի մյուս եղբորորդի Տիրիթը և Օլիմպիա հայոց թագուհին, որը Հռոմի կայսեր ազգականներից էր: Արշակ թագավորն ամուսնանում է Գնելի այրի Փառանձեմի հետ:

Պայքար է սկսվում նախարարական տների ներսում: Մամիկոնյան տոհմը բաժանվում է երկու թևի: Վասակ սպարապետը դառնում է Արշակի զինակիցը, իսկ նրա եղբայր Վահան Մամիկոնյանը անցնում է Շապուհ II-ի կողմը, որը դավաճանության համար հետագայում սպանվում է իր որդու Սամվելի ձեռքով (այս դեպքերը նկարագրված են Ռաֆֆու «Սամվել» պատմավեպում): Պարսկաստանի կողմն է անցնում նաև Մերուժան Արծրունին: Իրար դեմ պատերազմի պատրաստվող երկու

հզոր հարևանները՝ Հռոմը և Պարսկաստանը, ձգտում էին նրան իրենց կողմը գրավել: Շուտով նոր պատերազմ է ծագում Հռոմի և Պարսկաստանի միջև: Այդ էր պատճառը, որ չեզոքություն պահպանող Հայաստանը զերծ չի մնում արհավիրքից: Պարսկական բանակը ներխուժում է Հայաստան, գրավում և ավերում Տիգրանակերտը, թալանվում են Արշակունիների տոհմական դամբարանները Եփրատի ափին գտնվող Անի ամրոցում: Հենց այդ ժամանակ էլ կործանվում է Արշակավանը: Երբ պարսկական զորքերը դավաճան Մերուժան Արծրունու գլխավորությամբ ներխուժում են Հայաստան, նախարարների մի մասը միանում է նրանց և հարձակվում Արշակավանի վրա: Նորաստեղծ քաղաքը հիմնահատակ քանդվում է, իսկ բնակչության մեծ մասը կոտորվում: Արշակ II-ը, որն անցել էր Վրաստան, շուտով վերադառնում է վրացական մի զորամասի հետ Հայաստան, հավաքում իր կողմնակիցներին և կռվում նախարարական զորքի դեմ: Ճակատամարտում կողմերից ոչ մեկը չի հաղթում և կրկին կաթողիկոսական աթոռին վերադարձած Ներսես Մեծի միջնորդությամբ կնքվում է խախուտ հաշտություն:

Հռոմի Հուլիանոս Ուրացող կայսրը 363թ. հարձակվում է Պարսկաստանի վրա և հասնում նրա մայրաքաղաք Տիզբոնի մոտերքը ու սպանվում այստեղ տեղի ունեցած ճակատամարտում: Նրան փոխարինած նոր կայսր Հովիանոսը շտապում է հաշտություն կնքել պարսիկների հետ, ըստ որի, ինչպես վկայում է հռոմեական պատմիչ Ամմիանոսը, Հռոմը պարտավորվում է այլևս չօգնել Հայաստանին: Այդ հաշտությունը իրենք հռոմեացիներն անվանել են ամոթալի: Շապուհ II-ը, ապահով զգալով Հռոմի միջամտությունից, 364թ. հարձակվում է Հայաստանի վրա, սկսվում է 364-368թթ. հայ-պարսկական պատերազմը: Հայոց քաջարի բանակը սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ դուրս էր գալիս անհավասար կռվի թշնամու դեմ: Սակայն նախարարներից շատերը հետզհետե լքում են Արշակին: Մի մասն անցնում է պարսիկների կողմը, իսկ մյուս մասը չեզոք դիրք է բռնում: Չնայած այդ հանգամանքին հայերը բազմաթիվ հաղթանակներ են տանում: Արարատյան դաշտում տեղի ունեցած ճակատամարտում հայերը սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ ջախջախում են թշնամուն: Սակայն դրանից հետո էլ պարսիկները բազմիցս հարձակվում են Հայաստանի վրա, բայց պարտվելով դուրս են քշվում երկրից: Շապուհ II-ը, չկարողանալով զենքի ուժով ծնկի բերել Հայաստանը, դիմում է խորամանկության: Նա Արշակ II-ին և Վասակ Մամիկոն-յանին հաշտություն կնքելու պատրվակով հրավիրում է Տիզբոն: Այդ խորամանկ առաջարկը հավա-նություն է գտնում պատերազմից հոգնած հայ նախարարների մեջ: Արշակը և Վասակը ստիպված ներկայանում են Տիզբոն, որտեղ նրանց ձեռբակալում են և նետում հեռավոր Անհուշ բերդը: Այստեղ Վասակը մորթազերծ է արվում, իսկ Արշակը II-ը՝ ինքնասպան լինում:

Շապուհ II-ը Հայաստանը զրկելով իր թագավորից ու հմուտ զորավարից, կրկին զորք է ուղարկում Հայաստան: Պարսկական բանակին հաջողվում է հասնելմ ինչն երկրի խորքերը, պաշարել Արտագերս ամրոցը, ուր փակվել էր հայոց թագուհի Փառանձեմը արքայազն Պապի հետ: Անսպասելի հարձակմամբ ամրոցի կայազորը մեծ ջարդ է տալիս թշնամուն: Թագաժառանգ Պապը ուղարկվում է հռոմեացիների մոտ: Կատաղած Շապուհ II-ը նոր զորքեր է ուղարկում Արտագերս: Այս անգամ թշնա-մուն հաջողվում է կոտրել սովի ու համաճարակի հետևանքով հուսահատության հասած ամրոցի պաշտպանների դիմադրությունը, գրավել Արտագերսը, գերել ու տանջամահ անել Փառանձեմ թագու-հուն: Այնուհետև պարսկական զորքերը հայ դավաճան իշխաններ Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի աջակցությամբ, գրավում և ավերում են Հայաստանի խոշոր քաղաքները՝ Արտաշատը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Զարեհավանը, Զարիշատը և Վանը, իսկ բնակչության մի մասին գերեվարում են Պարսկաստան: Տիգրանակերտը գրավվել էր դրանից առաջ:

Վաղես կայսրն իր հերթին զորք է ուղարկում Հայաստան, որի օգնությամբ թագաժառանգ Պապը 370թ. հաստատվում է հայոց գահին (370-374թթ.): Հռոմեական զորքի ներկայությունը Հայաստանում ստիպում է Շապուհ II-ին 371թ. կրկին ներխուժել Հայաստան: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Նպատ լեռան մոտ՝ Ձիրավի դաշտում: Հայ-հռոմեական զորքերը սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ հաղթում են պարսիկներին, որոնք մեծ կորուստներ կրելով, փախչում են Հայաստանից: Ձիրավի ճակատամարտից հետո Պապ թագավորը հնարավորություն է ստանում ամրապնդելու իր իշխանությունը և հայոց պետությունը: Նա նախ և առաջ ձեռնարկում է Հայաստանից անջատված երկրամասերի միավորման գործը: Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին հաջողվում է վերամիավորել հայկական հողերը և վերականգնել Մեծ Հայքի պետության նախկին տարածքը: Պապ թագավորը սանձահարում է անհնազանդ և կենտրոնախույս նախարարներին: Նա թուլացնում է եկեղեցու տնտեսական հզորությունը: Այդ նպատակով նա վերացնում է եկեղեցուն առանձին տրվող հարկը՝ տասանորդը, նվազեցնում է բնակավայրերում եկեղեցական պաշտոնյա-ներին դեռևս Տրդատ III-ի ժամանակ տրված հողերի քանակը: Պապը փակում է վանքերի ու կուսանոցների մի մասը, կրճատում հոգևորականների թիվը: Պապը անտեսելով ընդունված կարգը, ձեռնադրման համար նոր կաթողիկոսին ոչ թե ուղարկում է Կեսարիա, այլ ձեռնադրել է տալիս Հայաստանում և ինքն էլ հաստատում նրան: Դրանով հայկական եկեղեցին լիովին անկախ դառնում կայսրության եկեղեցուց:

Պապի կարևոր միջոցառումներից էր հայկական բանակի մեծացումը և ուժեղացումը, հատկապես արքունական հեծելազորի հաշվին: Չնայած Պապը գահ էր բարձրացել հռոմեական զենքի ուժով, բայց չի դառնում նրա կամակատարը և վարում է ինքնուրույն, անկախ քաղաքականություն, որի նպատակն էր արտաքին ուժերի հավասարակշռման միջոցով պահպանել ու ամրապնդել հայոց պետականությունը: Պապը շատ լավ էր հասկանում, որ հռոմեացիները այնքան ժամանակ կարող են լինել օգնական և դաշնակից, քանի դեռ հայոց թագավորը պատրաստ է կատարելու նրանց կամքը: Ուստի չխզելով բարի դրացիական կապերը Հռոմի հետ, Պապը փորձում է խաղաղ հարաբերություններ հաստատել նաև Պարսկաստանի հետ: Հռոմին դուր չէր գալիս իր շահերին հակասող Պապի այդ ինքնուրույն ձեռնարկումները և հատկապես Շապուհ II-ի հետ մերձենալու փորձերը: Հռոմեացիները ուշադիր հետևում էին Պապի յուրաքանչյուր քայլին: Պապից դժգոհ Վաղես կայսրը իբր նրա հետխորհրդակցելու նպատակով՝ իր մոտ է հրավիրում հայոց թագավորին: Իր 300 հոգանոց շքախմբով կայսեր մոտ՝ Կիլիկիայի Տարսոն քաղաք մեկնած Պապն արգելափակվում է այնտեղ: Սակայն Պապին հաջողվում է դուրս պրծնել ծուղակից, վերադառնալ Հայաստան: Դրանից հետո հռոմեական կայսրը հանձնարարում է Հայաստանում գտնվող իր զորավարին վերացնել հայոց թագավորին: Կեղծ բարեկամությամբ և շողոքորթությամբ բթացնելով Պապի զգոնությունը, 374թ. նրան խնջույքի ժամանակ սպանում են: Հայաստանը զրկվում է եռանդուն, խոլամիտ ու վճռական թագավորից: Հակառակ Վդ. հայ պատմիչների, որոնք նրան անվանել են խելագար և նույնիսկ նրան մեղադրել Ներսես կաթողիկոսին թունավորելու մեջ, հռոմեական հեղինակ Ամմիանոսը Պապին բնութագրել է որպես եռանդուն, խիզախ ու խելոք իշխող: Իրոք, հայոց թագավորների շարքում Պապն առավել ինքնատիպ անձնավորություններից էր, որի քայլերը ուղղված էին պետության միավորմանն ու ամրապնդմանը: Այսպիսով, հայկական պետության կենտրոնացման և հզորացման ուղղությամբ կատարված բոլոր փորձերը ձախողվում են: Դրանք դեմ են առնում հայ նախարարների պառակտիչ գործունեությանը և Հայաստանն իրեն ենթարկելու պետությունների քաղաքականությանը:

**Բ)Հայոց պետության թուլացումը և անկումը (1 ժամ):** Պապի մահով փաստորեն կասեցվում է հայկական պետության հետագա ամրապնդումը և այն գնում է դեպի թուլացում և անկում: Պապի մահից հետո հռոմեացիների ընտրությամբ թագավորում է նրա ազգակից, օլիպիական խաղերի չեմպիոն Վարազդատը (374-378թթ.), որը միաժամանակ շատ միամիտ մարդ էր: Նա նախարար Բատ Սահառունու թելադրանքով դավաճանության և նույնիսկ Պապի սպանության մեջ մեղադրում է հայրենասեր սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին և կազմակերպել տալիս նրա սպանությունը՝ խնջույքի ժամանակ: Շուտով Մամիկոնյան տոհմից Մանվելի հաջողվում է վրեժխնդիր լինել Վարազդատից: Նա Պարսկաստանի օժանդակությամբ վտարում է Վարազդատին Հայաստանից, որը փախչում է հռոմեացիների մոտ, ձեռբակալվում ու աքսորվում: Գահը անցնում է Պապի որդի Արշակ III-ին (378-387թթ. և 387-389 թթ. Հայաստանի արևմտյան մասում), որը թագավորում է իր կրտսեր եղբայր Վաղարշակի հետ: Մանվել Մամիկոնյան դառնում է մանկահասակ թագավորների խնամակալը և ղեկավարում Հայաստանը: Նա լուրջ ջանքեր է գործադրում պետությունը ամրապնդելու ուղղությամբ: Մանվելի մահից հետո պարսկասեր հայ նախարարները չեն ճանաչում Արշակ III-ին և դիմում են պարսից արքա Շապուհ III-ին՝ իրենց տալու նոր թագավոր: Պարսիկները գահը հանձնում են Արշակունյաց տոհմից Խոսրով IV-ին: Արշակ III-ը հեռանում է Հայաստանի արևմտյան գավառներ: Արշակ III-ի թիկունքին կանգնում է Հռոմը, որի զորքերը հաստատվում են Արևմտյան Հայաստանում, իսկ Խոսրով IV-ի թիկունքին՝ Պարսկաստանը, որի զորքերն էլ հաստատվում են Արևելյան Հայասանում՝ Այրարատում: Շուտով Հռոմի կայսրն ու Պարսկաստանի թագավորը գտնում են փաստորեն անդամահատված Հայաստանի խնդրի լուծման նոր ուղի՝ փոխադարձ համաձայնությամբ նրանք 387թ. Հայաստանը բաժանում են միմյանց միջև երկու անհավասար մասերի: Մեծ Հայքի արևմտյան մի քանի գավառներ անցնում են Հռոմին, իսկ մնացած ամբողջ տարածքները՝ Պարսկաստանին: Դրանով փաստորեն վերանում է Հայաստանի անկախությունը: Հռոմեական մաս տեղափոխված Արշակ III թագավորի մահից հետո հռոմեացիները նոր թագավոր չեն նշանակում և Արևմտյան Հայաստանը դարձնում են իրենց պետության սովորական նահանգներից մեկը: Հայաստանի արևելյան պարսկական մասում, հայկական թագավորությունը միաժամանակ պահպանում է իր գոյությունը: Այնտեղ թագավոր է մնում Խոսրով IV Արշակունին (387-388թթ.): Նա բանակցությունների մեջ մտնելով Հռոմի հետ փորձ է անում վերամիավորել Հայաստանի երկու մասերը: Պարսից թագավորը, տեղեկանալով այդ մասին, Խոսրովին կանչում է Տիզբոն, զրկում գահից և հայոց թագավոր կարգում նրա եղբայր Վռամշապուհին (388-414թթ.): Այս ուսյալ արքայի օրոք վերելք է ապրում հայ մշակույթը, ստեղծվում է հայոց գրերը 405թ.: Նա հրաժարվում է նախարարների դեմ պայքարելուց և միջնորդի դեր է կատարում հայ նախարարների ու պարսից արքայի միջև: Երկրի կյանքում այդ ժամանակ խոշոր դեր էր խաղում Ներսես Մեծի որդի Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը: Վռամշապուհ արքայի մահից հետո մի քանի ամիս կրկին թագավորում է Պարսկաստանից վերադարձաց Խոսրով IV-րդը: Շուտով նա մահանում է, և պարսից արքան Հայաստանի թագավոր է կարգում իր որդի Շապուհին (415-419թթ.), որը սակայն չի կարողանում շահել հայ նախարարների համակրանքը և դառնում նրանց համար ատելի: Մի քանի տարի անց նա հեռանում է Պարսկաստան և իր հոր հետ միասին սպանվում Տիզբոնում: Պարսկաստանում նոր թագավորը սաստկացնում է քրիստոնյաների հալածանքները և կրկին պատերազմ է սկսում Հռոմի դեմ: Եվ նորից պատերազմի թատերաբեմ է դառնում Հայաստանը: Սակայն պարսից արքան

պարտություն է կրում և ստիպված է լինում հաշտության պայմանագիր կնքել Հռոմի հետ: 423թ. Պարսկաստանի ենթակա Հայաստանում թագավոր է կարգվում Վռամշապուհի որդի Արտաշես-Արտաշիր Արշակունին (422-428թթ.): Արտաշես-Արտաշիրի վեցամյա թագավորության ընթացքում թագավորն ու նախարարները կրկին պայքարի մեջ են մտնում: Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը, որը միասնական պետության կողմնակից էր, մեծ ջանք է թափում հաշտեցնելու թագավորի և նախարարներին, բայց արդյունքի չի հասնում: Vդ. պատմիչ Ղազար Փարպեցու խոսքերով հայ նախարարները ամբաստանում են Արտաշեսին պարսից արքայի մոտ և հայտնում, որ իրենց թագավոր պետք չէ և ժամանակ առ ժամանակ պարսից որևէ իշխան կգա և երկրին վերակացու կինի: Պարսից թագավորը, որը առիթ էր որոնում հայոց պետությանը վերջ տալու համար, հրճվանքով է ընդունում այդ առաջարկը: Նա 428թ. Արտաշեսին հրավիրում է Տիզբոն և գահընկեց անում: Միաժամանակ կաթողիկոսությունից զրկվում է Սահակ Պարթևը: Այսպես 428թ. վերանում է Արշակունիների դինաստիան (66-428թթ.) և անկում ապրում Հայոց պետությունը: Դրա պատճառը մի կողմից Պարսկաստանի և Հռոմի ուժեղ ճնշումն էր, մյուս կողմից՝ հայ նախարարների ըմբոստացումը:

Հայաստանը վերածվում է պարսկական սովորական մի նահանգի՝ մարզպանության, պարսից մարզպանի գլխավորությամբ:

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Տրդատ III-ը երկրի տնտեսությունը զարգացնելու ուղղությամբ:
2. Ի՞նչ կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել Տրդատ III-ի օրոք:
3. Ե՞րբ է թագավորել Խոսրով III Կոտակը: Ինչպիսի՞ն էր Հայաստանը նրա օրոք: Ի՞նչ գործերով է նշանավորվել Խոսրով Կոտակը:
4. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Տիրանը: Ինչպե՞ս ավարտվեց արքայի և կաթողիկոսի միջև հակամարտությունը: Ի՞նչ դրսևորում ունեցավ թագավորի և նախարարների միջև հարաբերությունները:
5. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Արշակ II-ը: Ո՞րն էր Արշակի և նախարանների միջև հակամարտության պատճառը:
6. Ե՞րբ և ու՞մ կողմից է հրավիրվել Աշտիշատի եկեղեցական ժողովը, ի՞նչ որոշումներ ու կանոններ է ընդունել այն:
7. Ինչպե՞ս ավարտվեց հայ–պարսկական պատերազմը:
8. Ի՞նչ ընթացք և ավարտ ունեցան Արշակ II–ի և իր եղբորորդիների միջև հարաբերությունները:
9. Ի՞նչ ստեղծագործություններ գիտեք նվիրված Արշակ II–ին, ովքե՞ր են դրանց հեղինակները:
10. Ո՞վ էր Պապը, ե՞րբ է նա գահակալել:
11. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Պապը երկիրը հզորացնելու նպատակով:
12. Ինչու՞ էին հռոմեացիները ցանկանում սպանել Պապ թագավորին, ինչպե՞ս դա նրանց հաջողվեց:
13. Ինչպե՞ս են նկարագրել Պապին հայ և հռոմեացի պատմիչները: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

14. Ի՞նչ ստեղծագործություններ գիտեք նվիրված Պապ թագավորինին, ովքե՞ր են դրանց հեղինակները:
15. Ո՞վ է հաջորդել Պապ թագավորին, նկարագրե՛ք նրան:
16. Ո՞վ է հաջորդել Վարազդատ թագավորին:
17. Ո՞վ էր մանկահասակ թագավորի խնամակալը:
18. Ինչպե՞ս գտան Հայաստանի խնդրի լուծման նոր ուղին Հռոմի կայսրն ու Պարսկաստանի թագավորը:
19. Ո՞վ է կառավարել Հայաստանի Արևմտյան և ո՞վ Արևելյան մասերում:
20. Ի՞նչ քայլեր ձեռնարկեցի հռոմեացիները իրենց տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում՝ Արշակ III-ի մահից հետ:
21. Ինչու՞ պարսից արքան գահընկեց արեց Խոսրով IV-ին:
22. Ո՞վ է կառավարել Հայաստանի Արևելյան մասերում: Ի՞նչ կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել նրա կառավարման շրջանում:
23. Ո՞վ Արշակունիների արքայատոհմի վերջին թագավոր: Ի՞նչ գիտեք նրա մասին:
24. Ե՞րբ և ինչպե՞ս է անկում ապրել Արշակունիների արքայատոհմը
25. Ինչու՞ էին նախարարները ըմբոստանում Արշակունի արքաների դեմ: Ինչպե՞ս էին պատժվում ըմբոստ նախարարները:
26. Ինչպիսի՞ հետք են թողել հայ Արշակունիները հայոց և համաշխարհային պատմության մեջ: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը: Գնահատե՛ք և արժևորե՛ք նրանց գործունեությունը:
27. Ձեր կարծիքով ովքե՞ր էին Արշակունիների դինաստիայի առավել աչքի ընկնող արքաները և ինչու՞:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Համեմատե՛ք Արտաշեսյան և Արշակունի արքայատոհմերը:**



ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ե՞րբ է գահակալել Խոսրով Կոտակը:**

1) 287-330թթ: 2) 252-287թթ.: 3) 330-338թթ.: 4) 350-368թթ.:

**2. Ե՞րբ է գահակալել Պապ թագավորը:**

1) 378-389թթ.: 2) 330-338թթ.: 3) 389-414թթ.: 4) 370-374թթ.:

**3. Ո՞ր քաղաքն է բարեկարգում Խոսրով Կոտակը:**

1) Արտաշատ: 2) Վաղարշապատ:
3) Զարիշատ: 4) Դվին:

**4. Ու՞մ գլխավորությամբ է հայկական բանակը պարտության մատնել մազքութներին:**

1) Վասակ Մամիկոնյանի: 2) Օտա Ամատունու:
3) Արտավազդ Մանդակունու: 4) Վաչե Մամիկոնյանի:

**5. Ե՞րբ է գահակալել Տիրանը:**

1) 298-337թթ.: 2) 339-350թթ.: 3) 325-341թթ: 4) 330-338թթ.:

**6. Ո՞վ է հաջորդել Տիրան թագավորին:**

1) Պապը: 2) Արշակ II-ը: 3) Արշակ III-ը: 4) Վարազդատը:

**7. Ի՞նչ փաստեր են վկայում նախարարների հետ Տիրանի բարդ հարաբերությունների մասին:**

1) Ռշտունյաց և Արծրունյաց տոհմերի պատժվելը:
2) Դատաբեն Բզնունու և Բակուր բդեշխի անցնելը պարսիկների կողմը:
3) Արտավազդ և Վասակ Մամիկոնյանների հեռանալը իրենց տոհմական կալվածք-աշխարհը:
4) Նախարարներին մշտապես արքունիքում պահելու մասին Տիրանի սահմանած օրենքը:

**8. Նշվածներից ընտրել Պապ թագավորի օրոք կատարված կարևոր գործերը:**

1) Պարսկական քաղաքական կողմնորոշման ընդունումը:
2) Եկեղեցու տնտեսական հզորության թուլացումը:
3) Հայոց բանակի թվաքանակի աճը և հզորացումը:
4) Նախարարների իրավունքների սահմանափակում:
5) Հայոց կաթողիկոսական աթոռի սկզբնական ինքնագլխության հաստատումը:
6) Շինականներից գանձվող հարկերի խիստ կրճատումը:

**9. Ո՞ր է պարսիկների կողմից Խոսրով IV-ին գահընկեց անելու պատճառը:**

1) Հռոմի հետ ռազմական դաշինքի կնքումը:
2) Բանակցությունների մեջ մտնելով Հռոմի հետ փորձ է անում վերամիավորել Հայաստանի երկու մասերը:
3) Սասանյանների դեմ՝ հռոմեական արշավանքին մասնակցելը:
4) Առանց համաձայնության Սահակ Պարթևին կաթողիկոս նշանակելը:

**10. Հայոց արքաների անունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**

1) Արշակ II: 2) Խոսրով Կոտակ:
3) Վռամշապուհ: 4) Տրդատ III Մեծ:
5) Տիրան: 6) Պապ:
7) Արտաշես-Արտաշիր: 8) Արշակ III:
9) Խոսրով IV (առաջին անգամ): 10) Վարազդատ:

## 7. ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: (2 ԺԱՄ)

**Ա) Գյուղատնտեսություն, արհեստագործություն, առևտուր (1 ժամ ):** 65 թվականից մինչև երկրորդ դարի կեսերը Հայաստանը ապրում էր խաղաղության շրջան, որը նպաստեց երկրի տնտեսական կյանքի աշխուժացմանը: Ստրկատիրական նախկին հարաբերությունները մեր դարաշրջանի սկզբներում ոչ միայն չէին նպաստում և չէին խթանում արտադրական ուժերի զարգացմանը, այլև արգելակում էին նրան: Բացի այդ, նորաստեղծ հայ Արշակունիների պետությունն ի վիճակի չէր ա յլևս նվաճողական պատերազմների միջոցով տնտեսությունները ապահովել գերի ստրուկներով: Ստրկական աշխատանքն ինքն այլևս անշահաբեր էր դարձեր և ահա իր դարնապրած ստրկատիրությանը փոխարինելու է գալիս արտադրության ֆեոդալական եղանակը, որը նախկինի համեմատությամբ ավելի առաջադիմական էր:

Անշուշտ, ավատատիրության սկզբնավորության մասին որոշակի ժամանակ սահմանելը դժվար է, որովհետև ստրկատիրական հասարակությունից ավատատիրականին անցնելը տեղի չի ունեցել անմիջապես, այլ այն երկարատև մի պրոցես է և ընդգրկել է մեծ ժամանակաշրջան: Ավատատիրական կացութաձևը ստրկատիրական հասարակության ընդերքում գոյություն ուներ շատ վաղուց, սակայն այն նոր որակ ստացավ, արտադրության հիմնական եղանակ դարձավ միայն II-III դարում: Խորենացու մի տեղեկությունն այն մասին, որ հայոց Վաղարշ թագավորը բարեփոխություններ է կատարում պետական ապարատում, կարգ ու կանոն է սահմանում նախարարական տների, քաղաքների, ավանների միջև և այլն, ամենայն հավանականությամբ, վերաբերում է նոր ձևավորված ավատատիրական հասարակական կարգ ու կանոնին: Արտադրության ավատատիրական եղանակի այս երկարատև ձևավորման ժամանակը նկատի ունենալով, I դարը և II դարի կեսը պայմանականորեն կարելի է համարել ստրկատիրական հասարակությունից ավատատիրականին անցնելու ժամանակաշրջան: Հայաստանում ավատատիրական հարաբերությունների կազմավորումը տեղի է ունեցել առանձնահատուկ պայմաններում: Ավատատիրությունն այստեղ ձևավորվել է ո՛չ միա յն ստրկատիրական տնտեսությունների, այլև տոհմացեղային կացութաձևի և գյուղական համայնքների քայքայման, նրանց փլատակների վրա: Հին հայկական մատենագրության մեջ բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ Արշակունի հայ թագավորները «իշխանազուն անձանց» տիրույթներ են նվիրել Հայաստանի գլխավորապես լեռնային շրջաններում, որոնց բնակչությունը, հիմնականում չէր անցել ստրկատիրության ոլորտով: Հայաստանի սոցիալտնտեսական հարարերությունների մասին խոսելիս պետք է հաշվի առնել մի այլ հանգամանք ևս, այնպիսի մի երկրում, ինչպիսին լեռնոտ Հայաստանն է, նրա բոլոր վայրերում միաժամանակ չէ, որ տեղի են ունենում տնտեսական կյանքի փոփոխություններ, այն ժամանակ, երբ արդեն ձևավորվել էին ավատատիրական հարաբերությունները, առանձին տեղերում դեռ պահպանվում էին տոհմատիրության և ստրկատիրության մնացորդները:

Արշակաունյաց թագավորության և ավատատիրական կարգերի հաստատումով՝ Հայաստանը անցնում է խաղաղ զարգացման ժամանակաշրջան: Հասարակական հարաբերությունների, մշակույթի զարգացմանը զուգահեռ, զարգացում է ապրում տնտեսությունը՝ իր բոլոր ուղղություններով:

Գյուղատնտեսության և արհեստագործության զարգացման ոլորտում Արշակունիների թագավորության պայմանները բարենպաստ էին: Երկրագործության համար հարմար տարածքներ էին Այրարատյան, Շիրակի, Տարոնի (Մշո), Բագրևանդի (Ալաշկերտ), Բասենի դաշտերը, Վանի շրջակայքը և բազմաթիվ այլ գետահովիտներ: Այնտեղ զարգանում էին հացահատիկների մշակությունը, այգեգործությունն ու խաղողագործությունը:

Հնագիտական պեղումներից երևում է որ, այս շրջանում արորի փոխարեն սկսում են լայն չափով օգտագործել երկաթե խոփ ունեցող փայտե գութանը և կատարելագործված գյուղատնտեսական այլ

գործիքներ է որոնք բարելավում են հողի մշակությունը և ընդարձակում ցանքատարածությունները: Այս շրջանում նկատվում է նաև ոռոգման ցանցի ընդարձակում է, որը կարևոր նշանակություն ուներ ցամաքային կլիմա ունեցող Հայաստանի բերքատվության բարձրացման համար: Իսկ անասնապահության զարգացման համար հարմար էին երկրի ընդարձակ ալպյան մարգագետիններն ու արոտավայրերը: Այս ամենի արդյունքում Հայաստանն աչքի էր ընկնում գյուղատնտեսական մթերքների արտադրության առատությամբ: Բնակչության մեծ մասն ապրում էր գյուղերում,որտեղ հիմնականում պահպանվում էր համայնքային կյանքը:

Հայոց աշխարհը վաղուց հայտնի է եղել ոսկու, արծաթի, երկաթի, պղնձի ու կապարի օգտակար հանածոներով և շինարարական քարատեսակներով՝ տուֆ, մարմար, բազալտ և այլն: Այս հանածոների հանքամշակումը նպաստում էր արհեստների զարգացմանը: Բանակի հանդերձանքը, զենք-զրահը, պաշարողական մեքենաները ստեղծվում էին արհեստավորների կողմից: Նրանք պատրաստում էին նաև գյուղատնտեսական գործիքներ, կենցաղային իրեր (պղնձաման, անոթ, կարաս, կուլա, կուժ և այլն): Մեծ հռչակ ունեին հայ ոսկերիչներն ու արծաթագործները, որոնք հատկապես հմտացել էին կանացի զարդեր պատրաստելու գործում: Այս ժամանակաշրջանում մեծ զարգացում էին ապրում նաև կաշեգործությունը, մանածագործությունը և գորգագործությունը: Երկրում արտադրվող մետաղների մի մասն արտահանվում էր դեպի հարևան երկրներ:

Մեծ Հայքի տնտեսության համար կարևոր էր ներքին և արտաքին առևտուրի զարգացումը: Հայաստանի տարածքով էին անցնում Առաջավոր Ասիայի մի շարք առևտրական ճանապարհներ, որոնց միջոցով երկիրն ակտիվ մասնակցություն էր ունենում միջազգային տարանցիկ առևտրին: Շատանում էին Հայաստանից արտահանվող և Հայաստան ներմուծվող ապրանքների քանակն ու տեսականին: Ներմուծվում էին մետաքս, բամբակ, արևելյան համեմունքներ, թանկարժեք քարեր, պերճանքի առարկաներ, գործվածքներ, ապակե անոթներ և այլն: Արտահանվում էին ձիեր, ջորիներ, ներկեր (հատկապես «որդան կարմիր»), գինիներ, չորացրած մրգեր, կաշի, բուրդ և այլն: Առևտրական ճանապարհների հիմնական խաչմերուկը սկզբում Արտաշատ մայրաքաղաքն էր, իսկ երկրորդ դարի վերջերից՝ արդեն Վաղարշապատը: Առևտրի և արհեստների վերելքի արդյունքում քաղաքները դառնում էին ոչ միայն դրամական շրջանառության կենտրոններ, այլ նաև արքունիքի տնտեսական հիմնասյունը:

Արշակունիների գահակալության առաջին հարյուրամյակները նշանավորվեցին տնտեսության վերելքով: Հատկապես նշանակալից տեղաշարժեր եղան Տրդատ I, Սանատրուկ և Վաղարշ թագավորների օրոք: Տրդատ I-ը շինարարական մեծ աշխատանքներ էր կատարել՝ զարկ տալով հատկապես քաղաքային տնտեսության զարգացմանը: Դրա վկայությունն են հռոմեացիների կողմից ավերված Արտաշատի վերականգնումը, հնուց գոյություն ունեցող Գառնի ամրոցում շինարարական աշխատանքները (որոնք հետագայում շարունակել է Տրդատ III-ը) և հատկապես Արեգակի տաճարի կառուցումը, ինչի մասին վկայում է Գառնիում Տրդատի թողած հունարեն արձանագրությունը: Սանատրուկ թագավորի օրոք մեծ ուշադրություն էր դարձվում առևտրական կապերի զարգացմանը: Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող մայրուղու վրա կառուցված Մծուրք քաղաքն այդ մասին է վկայում: Նմանապես քաղաքաշինության մեծագույն վաստակ ունի հայոց արքա Վաղարշ I-ը, որը հիմնեց Վաղարշապատ մայրաքաղաքը: Վաղարշապատի կառուցապատումը շարունակվեց նաև հետագայում: Միևնույն ժամանակ հինավուրց Արտաշատը շարունակում էր մնալ որպես մայրաքա-ղաք: Հայաստանի մյուս քաղաքներից շատերը՝ Վան, Երվանդաշատ, Զարեհավան, Զարիշատ, Արճեշ, Նախիջևան և այլն, պահպանում էին իրենց տնտեսական, մշակութային և արհեստների կենտրոն լինելու նշանակությունը:

Հայաստանը պահպանում էր իր ազգաբնակչության միատարր ժողովրդագրական կազմը: Միջազգային ասպարեզում առևտրական և մշակութային շփումները փոխհարստացնում էին

մշակու-թային կյանքը: Քաղաքներում՝ հայկական բնակչության կողքին, օտարների առանձին խմբեր էին (հույներ, ասորիներ, իրանցիներ և այլն) ապրում, որոնք հիմ նականում զբաղվում էին առևտրով: Խաղաղ ժամանակաշրջաններում քաղաքային կյանքը բնորոշվում էր մշակութային և առևտրատնտեսական վերելքով:

**Բ) Կառավարման համակարգը: Բանակը (1 ժամ ):** Հայոց պետության գլուխ կանգնած էր արքան, որը կոչվում էր թագավոր կամ արքա Հայոց մեծաց: Թագավորությունը Արշակունիների հարստության ժառանգական իրավունքն էր և հիմնականում արքաներ դառնում էին այդ տան ներկայացուցիչները: Արքայի տված հրամանները ունեին օրենքի ուժ: Նա նաև զորքերի գերագույն հրամանատարն էր և երկրի կյանքի բոլոր ասպարեզների գլխավոր ղեկավարը: Նա ուներ պատերազմ հայտարարելու, հաշտություն կնքելու, այլ երկրներ դեսպանություններ ուղղարկելու, դեսպանություններ ընդունելու, նոր քաղաքներ ու ամրոցներ հիմնադրելու և անվանակոչելու իրավասություն:

Թագավորը երկիրը կառավարում էր արքունի միջոցով, որի մեջ մտնում էին գործակալությունները: Եթե Արտաշեսյանների կառավարման շրջանում այդ գործակալությունները տրվում էին այս կամ այն նախարարական տոհմին, ապա այժմ այդ գործակալությունները դառնում են նախարարական տոհմերի ժառանգությունը, որն անցնում էր հորից ավագ որդուն:

Գործակալություններն իրականացնում էին վարչական, զինվորական, տնտեսական, դիվանագիտական և այլ գործառույթներ:

**Հազարապետությունը** սահմանում էր պետական հարկերը, հսկում դրանց հավաքումը, ղեկավարում պետական նշանակություն ունեցող աշխատանքները: Այդպիսիք էին նոր քաղաքների ու ամրոց-ների կառուցումը, ճանապարհների ու ջրանցքների անցկացումը և այլն: Հազարապետությանն էին ենթարկվում հարկահավաք պաշտոնյաները: Այս պաշտոնն սկզբում զբաղեցնում էին Գնունիները, ապա Ամատունիները:

**Սպարապետության** գլուխ կանգնած էր սպարապետը: Նրա հրամանատարության տակ էին արքունի և նախարարական ինչպես հեծյալ, այնպես էլ հետևակ ուժերը: Նա անմիջականորեն ենթարկվում էր թագավորին, որը երկրի զորքերի գլխավոր հրամանատարն էր: Այս գործակալությունը Մամիկոնյան տան ժառանգական իրավունքն էր: Սպարապետին էին ենթարկվում չորս բդեշխները և երկրի նախարարական զորաջոկատները ղեկավարող չորս զորավարները:

**Մարդպետություն** գործակալությունը վերահսկում էր արքունի տիրույթները, պահպանում էր արքունի գանձերը և ապահովում երկրի ներքին կարգ ու կանոնը: Նա արքունի կանանոցի վերակացուն էր, թագաժառանգի դայակը և թագավորի խորհրդատուն: Գործակալը կրում էր Հայրմարդպետ տիտղոսը:

**Մաղխազությունն** իրականացնում էր արքունական պահակազորի պարտականությունը: Գործակալը՝ մաղխազը, թագավորի 10 հազար մարտիկներից բաղկացած թիկնապահ գնդի հրամանատարն էր: Մաղխազությունը Խոռխոռունիների տան ժառանգական պաշտոնն էր:

**Թագակիր ասպետություն** գործակալությունը ղեկավարում էին Բագրատունիները: Նրանց պարտականությունն էր նորընծա արքայի գլխին թագն դնելը, խստիվ հետևել արքունիքում պալատական արարողակարգի կատարմանը, նախարարների զբաղեցրած գահերի հերթականությանը և ունեցած պատվանշաններին: Ինչպես նաև զբաղվել թագաժառանգի դաստիարակությամբ:

**Մեծ դատավարությունը** գլխավորում էր կաթողիկոսը: Նա եկեղեցական ժողովների միջոցով կանոններ և օրենքներ էր սահմանում ու հետևում դրանց անշեղ կատարմանը: Կաթողիկոսը նաև լուծում էր նախարարների միջև ծագած վեճերը և միջնորդի դեր էր կատարում թագավոր-նախարար հարաբերությունում:

**Արքունի սենեկապետությունը** ղեկավարում էր արքունի դիվանը կամ գրասենյակը: Սենեկապետը թագավորի անձնական քարտուղարն էր, արքունի գրագրության կազմակերպողը, արխիվի պահապանը:

Կային նաև այլ գործակալություններ:

Մայրաքաղաքը կառավարող քաղաքագլուխը Արտաշատի շահապն էր: Այս պաշտոնը թագավորը հանձնում էր պալատական ավագանու ներկայացուցիչներից մեկին:

Երկրի համար առավել կարևոր հարցերը քննարկվում էին Աշխարհաժողովում: IV դ. երկրորդ կեսից Աշխարհաժողովի պարտականություններն աստիճանաբար անցնում են աշխարհիկ ներկայացուցիչների մասնակցությամբ գումարվող եկեղեցական ժողովներին:

Հայկական բանակն Արշակունիների օրոք բաղկացած էր 120 հազար մարտիկներից: Դրանցից 40 հազարն արքունական էին, ղեկավարվում էին չորս բդեշխների կողմից և պաշտպանում երկրի սահմանները բոլոր չորս ուղղություններով: Բանակի մաս էին կազմում մարդպետական 15-հազարանոց և մաղխազական 10-հազարանոց գնդերը, որով արքունական զինուժի ընդհանուր քանակը հասնում էր 65 հազարի: Մնացած 55 հազար մարտիկները ներկայացնում էին նախարարական զորաջոկատները: Դրանք պատերազմի էին դուրս գալիս արքունի բանակի կազմում, սակայն իրենց նախարարների հրամանատարությամբ ու նրանց դրոշի ներքո: Բանակի հիմնական հարվածային ուժն այրուձին էր: Զգալի ուժ էին ազատներից կազմված հետևակային զորամասերը, ինչպես նաև պատերազմի ժամանակ հավաքագրվող ժողովրդական աշխարհազորը:

Բանակը զինված էր ժամանակի բոլոր տեսակի զենքերով՝ նետ ու աղեղ, նիզակ, պարսատիկ, տեգ, սուր, վահան, սակր և այլն: Քաղաքների պարիսպները բանդելու համար օգտագործում էին բաբան և այլ պարսպակործան մեքենաներ: Մեծ նշանակություն էր տրվում քարանետ գործիքներին: Բանակն ուներ հետախուզական և սակրավորական զորամասեր: Դրանցից վերջինը զբաղվում էր կռվի ժամանակ ճանապարհների անցկացումով, գետանցների ապահովումով և քաղաքների ու ամրոցների պարիսպների խորտակումով:

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

1. Ո՞ր հասարակարգին է հաջորդել ավատատիրությունը:
2. Տնտեսության ո՞ր ուղղություններն էին զարգացած Արշակունյաց Հայաստանում:
3. Որո՞նք էին երկրագործության համար հարմար տարածքները:
4. Ի՞նչն էր բարելավում հողի մշակությունը և ընդարձակում ցանքատարածությունները:
5. Ո՞ր օգտակար հանածոներով վաղուց հայտնի Հայոց աշխարհը:
6. Ի՞նչ շինարարական քարատեսակներով էր հայտնի Հայոց աշխարհը:
7. Ո՞ր արհեստներն էին մեծ զարգացում ապրում հին Հայաստանում:
8. Որտե՞ղ էին զարգանում առևտուրը: Փորձե՛ք բացատրել «ներքին և արտաքին առևտուր» ու «արտահանում և ներմուծում» եզրույթները:
9. Ո՞վ էր կանգնած Հայոց պետության գլուխ, ի՞նչ իշխանությամբ նա օժտված:
10. Ի՞նչ գործառույթներ էին իրականացնում գործակալությունները:
11. Ի՞նչ մասերից էր բաղկացած հայկական բանակը Արշակունիների օրոք:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

**Շարունակե՛ք «Մեծ Հայքի տնտեսությունը I-Vդդ.» գծապատկերը:**



ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ինչպե՞ս էր կոչվում Մեծ Հայքի զինված ուժերով զբաղվող գործակալությունը:**

1) Մաղխազություն: 2) Զորավարություն: 3) Սպարապետություն: 4) Բդեշխություն:

**2. Ինչպե՞ս էր կոչվում թագավորական և արքունի պահակազորի հրամանատարը:**

1) Սպարապետ: 2) Պահակապետ: 3) Մաղխազ: 4) Արքունապետ:

**3. Ո՞վ էր գլխավորում Մեծ դատավորի գործակալությունը:**

1) Կաթողիկոսը: 2) Թագավորը: 3) Մարդպետը: 4) Հազարապետը:

**4. Ինչպե՞ս էր կոչվում թագավորի անձի պաշտպանությունն ապահովող այրուձին:**

1) Սեպուհական: 2) Մաղխազական: 3) Պալատական: 4) Իշխանական:

**5. Նշվածներից ընտրել միայն հայոց թագավորի իրավունքները:**

1) Պետության սահմանների պաշտպանություն:
2) Պատերազմի հայտատրարում և հաշտության կնքում:
3) Արտաքին գործերի վարում:
4) Ներքին խռովությունների ճնշում:

**6. Կառավարման ի՞նչ ոլորտներ էր տնօրինում հազարապետություն գործակալությունը:**

1) Երկրի տնտեսական և հարկային համակար·ը:
2) Օտար տերությունների հետ հարաբերությունները:
3) Հանրային աշխատանքները:
4) Թագավոր-նախարար կապերի իրավական կողմը:

**7. Ի՞նչ գործառույթներ էր իրականացնում մարդպետություն գործակալությունը:**

1) Պետական պարհակների տնօրինության:
2) Արքունի կալվածքների ու գանձարանի հսկողության:
3) Պետական հեղաշրջման փորձերի կանխման:
4) Արշակունյաց սեպուհների դաստիարակության:

**8. Ինչ գործառույթ էր իրականացնում Մեծ դատավորը:**

1) Այլ երկրների հետ բանակցությունների վարման:
2) Կրթական գործի կազմակերպման:
3) Ընդունված կարգով թագավորի օծման:
4) Երկրում ընդունված օրենքների հսկողության:

**9. Ավատատիրության հաստատման շրջանի հայկական բանակի սպառազինությունը կազմող զենքերից էին՝**

1) մարտակառքերը: 2) գուրզերը: 3) նիզակները: 4) սակրերը: 5) տեգերը: 6) լայնալիճ աղեղները:

**10. Կատարել համապատասխանեցում:**

| | |
|---|---|
| 1) Մարդ պետություն | ա) Երկրի զինված ուժերի հրամանատարության իրականացում: |
| 2) Մաղխազություն | բ) Երկրի տնտեսական-հարկային համակարգի և հանրային շինարարության ղեկավարում: |
| 3) Հազարապետություն | գ) Պալատական արարողությունների և օտար դեսպանների ընդունելության կազմակերպում: |
| 4) Սպարապետություն | դ) Նախարարների միջև ծագած հակամարտությունների կարգավորում: |
| 5) Ասպետություն | ե) Արքունի կալվածքների ու գանձարանի հսկողության իրականացում: |
| | զ) Արքունի և թագավորական պահակազորի հրամանատարության իրականացում: |

## 8. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ: (1 ԺԱՄ)



**Ա) Նյութական մշակույթ:** Հնուց ի վեր գոյություն ունեցող հայկական ճարտարապետությունը հել-լենիզմի դարաշրջանում հասնում է զարգացման նոր ու բարձր աստիճանի: Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում կառուցվում են մի քանի տասնյակ քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ, բազմաթիվ անառիկ ամրոցներ, պալատներ, տաճարներ, թատրոններ, պարիսպներ, կամուրջներ, հյուրանոցներ, բաղնիքներ և այլն: Սկզբնաղբյուրները մեծ գովեստով ու հիացմունքով են խոսում Հայաստանի հին մայրաքաղաքներ Արմավիրի, Երվանդաշատի, Արտաշատի, Տիդրանակերտի և Վաղարշապատի ճարտարապետական հուշարձանների մասին: Ճարտարապետական հուշարձանների մի մասի ավերակների պահպանումով երջանիկ բացառություն է կազմում Գառնիի թագավորական ամրոցը: Հին հայկական ճարտարապետության մոնումենտալ կոթողներից, հին Հայաստանի ռազմապաշտպանական հզոր ու առաջնակարգ կառուցումներից մեկն է այս ամրոցի կիսականգուն պարիսպը՝ իր աշտարակներով, որը, հավանաբար, կալուցվել է Ք.ա.III դարում, իսկ վերակառուցվել՝ Ք.ա.I դարում: Հայկական հելլենիստական ճարտարապետության գլուխգործոցը՝ Գառնիի հեթանոսական տաճարն է, որի այժմ վերականգնված պատկերը գերող տպավորություն է թողնում դիտողների վրա: Այս հազվագյուտ, փառահեղ ու շքեղ տաճարը կառուցվել է I դարում: Նա ունեցել է երկթեք տանիք, չորս կողմից 24 սյուներից բաղկացած սյունաշար:

Հնագիտական պեղումների միջոցով հայտնաբերվել է նաև Գառնիի պալատական բաղնիքի շենքը, որը կառուցվել II կամ III դարում: Իր հինգ սենյակներով կամ բաժանմունքներով, տաքացման համակարգով այս բաղնիքը շինարարական արվեստի տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Այս բոլորը մեզ մոտավոր գաղափար են տալիս Հայաստանի հին մայրաքաղաքներում, քաղաքներում, ամրոցներում և սրբավայրերում գոյություն ունեցած ճարտարապետական կոթողների մասին:

Հին Հայաստանում զարգացած էին նաև քանդակագործությունը և կիրառական արվեստը: Հայ և օտար սկզբնաղբյուրներից հայտնի է, որ հայկական հեթանոսական տաճարներում եղել են մարմարից, քարից, փղոսկրից, ոսկուց, արծաթից, բրոնզից, պղնձից և այլ նյութերից շինված աստվածների և թագավորների մեծ ու փոքր բազմաթիվ արձաններ: Անկասկած է, որ զանազան արձաններ եղել են նաև քաղաքներում, քաղաքատիպ ավաններում, ամրոցներում, թագավորական պալատներում, հարուստ ստրկատերերի ու քաղաքացիների տներում: Սակայն այդ արձաններից մեզ միայն մի քանի նմուշներ ու բեկորներ են հասել: Ուշագրավ ու արժեքավոր նմուշներ են Վաղարշապատում գտնված կավե արձանիկների գլուխները: Գառնիում հայտնաբերվել են մարմարից պատրաստված մի կնոջ արձանիկի իրանն ու պատվանդանը, որտեղ շատ գեղեցիկ ու բնական կերպով տրված են կնոջ կեցվածքը և հարուստ շրջազգեստի ծալքերը: Քանդակագործական արվեստի ակնառու և արժեքավոր նմուշ է նաև Արտաշատի պեղումների ժամանակ գտնված կնոջ մարմարյա փոքր արձանը, որի գլուխն ու թևերը նույնպես ջարդված են և մեզ չեն հասել: Պետք ենթադրել, որ սրանք եղել են աստվածուհիների կամ թագուհիների արձաններ:

Հայաստանում զարգացած էր նաև կերպարվեստը: Տաճարները և պալատները ոչ միայն զարդարվում էին դրսից բուսական ու երկրաչափական ճոխ զարդաքանդակներով, ինչպիսին Գառնիի

հեթանոսական տաճարն է, այլև ներսից՝ որմնանկարներով ու խճանկարներով (մոզաիկա ): Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գառնիի պալատական բաղնիքի հանդերձասրահի խճանկար հատակը: Նրա թեման վերցված է հունական դիցաբանությունից: Խճանկարը ամբողջապես պատրաստված է Գառնիի մոտից հոսող Ազատ գետից հավաքված ու նրա ջրերով հղկված գունավոր խճաքարերից և մեծ արժեք է ներկայացնում:

Սկզբնաղբյուրները վկայում են, որ հին Հայաստանում գոյություն են ունեցել գոհարազարդ թագեր, թանկագին մետաղներից ու քարերից պատրաստված զանազան զարդեր, գորգեր և այլն:

Կիրառական արվեստի լավագույն նմուշներ են Սիսիանի դամբարան-զոհարանում գտնված վիշապագլուխ ոսկյա ապարանջանները, գավազանի գլուխները, արծաթյա գեղազարդված թասերը, որոնք պատկանում են I դարին:

**Բ) Հոգևոր մշակույթ:** Հին հայկական պաշտամունքի հիմքի վրա և մասամբ իրանական պաշտամունքի ազդեցությամբ առաջանում և ձևավորվում է հայկական հեթանոսական կրոնի նոր պանթեոնը: Հայկական հին աստվածներից շատերը՝ Հայկը, Արան, Տորքը, Ծովինարը և այլք իրենց տեղը զիջում են նոր աստվածներին, թեև նրանց պաշտամունքը դրանից հետո էլ երկար ժամանակ պահպանվում է ժողովրդի մեջ:

Հայկական հեթանոսական կրոնի նոր պանթեոնի գլխավոր աստվածը Արամազդն էր: Արամազդը համարվում էր աստվածների հայրը, երկնքի ու երկրի ստեղծողը, մարդկանց բարօրության ու արիություն շնորհողը, երկրին լիություն ու պարարտություն պարգևողը: Նրա գլխավոր մեհյանը գտնվում էր Դարանաղյաց գավառի Անի ամրոցում, որը, հավանաբար, նաև հայոց քրմապետի կենտրոնատեղին էր:

Արամազդի դուստրն էր աստվածուհի Անահիտը: Նա համարվում էր Հայոց աշխարհի խնամակալը, մարդկանց բարերարը: Հեթանոս աստվածներից միայն Անահիտը ուներ ոսկեձույլ արձան:

Անահիտի ամենանշանավոր մեհյանը գտնվում էր Եկեղյաց գավառի Երիզա (այժմ՝ Երզնկա) ավանում: Նրա մյուս նշանավոր մեհյանները գտնվում էին Արտաշատ մայրաքաղաքում և Տարոն գավառի Աշտիշատ ավանում: Անահիտ աստվածուհուն նվիրված էր երկու տոն, որոնք նշվում էին գարնանն ու աշնանը: Այս տոները տեղի էին ունենում մեծ հանդիսավորությամբ և ուղեկցվում Ժողովրդական երգերով, պարերով ու խաղերով:

Հայկական նոր պանթեոնի մեջ մտած, տեղական ծագում ունեցող, հայերի սիրելի աստվածներից էր Վահագնը: Նա համարվում էր քաջության, ուժի, հերոսության, ռազմի և ամպրոպի աստվածը: Հայ թագավորները և ռազմիկները նրանից էին քաջություն խնդրում: Հայ գուսանները Վահագնի և նրա կատարած քաջագործությունների մասին առասպելական բազմաթիվ երգեր ու զրույցներ էին հորինել: Այդպիսի հին երգերից էր Վահագնի ծննդին նվիրված երգը, որը պատմահայր Խորենացին լսել էր գուսաններից և գրի առել իր «Հայոց պատմության» մեջ: Վահագնի նշանավոր մեհյանը գտնվում էր Տարոն գավառի Աշտիշատ ավանում:

Հայերի հին ու սիրելի աստվածուհիներից էր Աստղիկը**:** Նա երկնային լույսի, ջրի, սիրո և գեղեցկության աստվածուհին էր: Աստղիկին էր նվիրված հեթոնասական շրջանի ամենաժողովրդական տոներից մեկը՝ վարդավառի տոնը, որը նշվել է հանդիսավորությամբ, ժողովրդական երգերով, պարերով, սպորտային խաղերով և այլն: Տոնի օրը մարդիկ իրար վրա անուշահոտ կամ սովորական ջուր են ցանել, իբրև խաղաղության և անմեղության նշան՝ աղավնիներ թռցրել:

Հայկական պանթեոնի աստվածներից էր նաև Արամազզի որդին՝ Միհրը: Նա արեգակի, լույսի և կրակի աստվածն էր, արդարության ու ճշմարտության պաշտպանը, կեղծիքի ու խարդախության մերկացնողը: Միհր աստծու նշանավոր մեհյանը գտնվում էր Դերջան գավառնում: Գառնիի հեթանոսական տաճարը ևս նվիրված է եղել Միհր աստծուն:

Արամազդի երկրորդ դուստրը, Անահիտի և Միհրի քույրն էր Նանե աստվածուհին: Նա համարվում էր մայրության, տան օջախը պահպանող աստվածուհին: Նրա մեհյանը գտնվում էր Դարանաղյաց գավառի Թիլ ավանում:

Հայերի հարգված աստվածներից էր Տիրը: Նա Արամազդի քարտուղարն էր, գրի, գրականության, գիտության ու արվեստի հովանավորողը: Տիր աստծու մեհյանը գտնվել է Արտաշատ մայրաքաղաքի մոտ :

Հելլենիզմի դարաշրջանում հայկական պանթեոնի առավածները նույնացվում են հունական աստվածների հետ և անվանվում նաև նրանց անունով: Այսպես, Արամազդը նույնացվում է Զևսի, Անահիտը՝ Արտեմիսի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի, Տիրը՝ Ապոլլոնի, Վահագնը՝ Հերակլեսի հետ: Սակայն օտարամուտ այս աստվածների ո՛չ պաշտամունքը և ո՛չ էլ նրանց անունները ժողովրդի մեջ չեն տարածվում և շուտով մոռացվում են:

Բացի դիցաբանական առասպելներից, հին Հայաստանում լայն տարածում են ունեցել նաև վիպական զրույցները, որոնք հյուսվել են այս կամ այն պատմական երևելի անձնավորության՝ Տրդատի, Սանատրուկի և ուրիշների շուրջը: Սրանցից ևս Խորենացին մի շարք գունեղ նմուշներ է պահպանել: Դրանք հիմնականում վերաբերում են Տրդատ I-ին, որը վիպասանքում հանդես է գալիս Արտաշես անվան տակ:

Հայ դպրության բացակայության պայմաններում հին Հայաստանում գրավոր լեզուներ են եղել հունարենը և արամեերենը: Հունարեն լեզվով մեզ հասել են թեև փոքրաթիվ, բայց տարբեր բնույթի ու բովանդակության վիմական արձանագրություններ, որոնք վկայում են, որ հունարենը կիրառվել է կյանքի մի շարք բնագավառներում: Գառնիում գտնված հունարեն արձանագրությունը թվագրված է Ք. հ. 77 թվականով և պատմում է Տրդատ I-ի շինարարական գործունեության մասին: III դարում կամ IV դարի սկզբին է գրված Ապարանի հունարեն արձանագրությունը, որով թագավորը հողեր է նվիրաբերում Գնթունի տոհմին: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Տիգրանակերտի ավերակներում գտնված հունարեն ծավալուն արձանադրությունը, որը հայոց թագավորի (հավանաբար Տրդատ Մեծի) հրովարտակն է Տիգրանակերտ քաղաքին: Կան և այլ հունարեն արձանա գրություններ՝ տապանաքարերի վրա:

Գառնիում գտնված արամեերեն արձանագրությունը պատկանում է Ք. հ. II-III դարերի եզրին, այստեղ հիշատակված է հայոց Վաղարշ II թագավորը:

Այս օտարալեզու, բայց հայկական արձանագրությունները ցույց են տալիս, որ հայ դպրության բացակայության պայմաններում արքունիքը իր վարչական գործերը վարելիս օգտագործում էր հիշյալ լեզուները: Հավանաբար, բոլոր պաշտոնական գրությունների մագաղաթյա պատճենները պահվում էին արքունի դիվանում:

Որոշ տվյալներ կան հին Հայաստանում պատմագրության գոյության մասին: Այն զարգանում էր արքունիքում և հեթանոսական մեհյաններում: Վաղ ժամանակներից սկսած արքունիքը մշակութային կենտրոն է եղել: I-III դարերում հայ Արշակունի թագավորները ևս Հայաստան են հրավիրել ու հովանավորել հելլենիստական մշակույթի մի շարք ներկայացուցիչների: Այսպես, օրինակ՝ հայտնի է, որ հայոց թագավոր Սոհեմոս-Տիգրանի հրավերով Հայաստան է գալիս և երկար ժամանակ Արտաշա-տում ապրում II դարի հայտնի հռետոր, գրող և մանկավարժ Յամբլիքոս Բաբելոնացին: Նա Արտաշա-տում զբաղվում է հայ արքայազների դաստիարակությամբ:

II դարի վերջից հայ Արշակունի թագավորները առանձին հետաքրքրություն են հանդես բերում Հայաստանի պատմության նկատմամբ: Հայոց Վաղարշ II թագավորի հանձնարարությամբ ասորի փիլիսոփա և պատմագիր Մար Աբաս Կատինան, օգտվելով հայկական արքունի դիվանում պահվող ժողովրդական ավանդությունների առասպելների ու երգերի ժողովածուներից, հունարեն և ասորերեն լեզուներով գրում է Հայաստանի նախնական պատմությունը: Խորենացին և Սեբեոսը

իրենց աշխա-տությունների առաջին մասը գրելիս մեծապես օգտվել են նրա աշխատությունից։ Սեբեոսը նրան անվանում է «Մծուրնացի»։ Այս անվանումը ցույց է տալիս, որ նա ծնվել կամ երկար ժամանակ ապրել է Հայաստանի Մծուրք քաղաքում։ Անկասկած է, որ նա իմացել է նաև հայոց լեզուն։

Մար Արաս Կատինա Մծուրնացու ժամանակակիցն էր ասորի նշանավոր գրող ու պատմագիր Բարդածան Եդեսացին։ Ըստ Խորենացու վկայության՝ նա Հայաստան եկած առաջին քրիստոնյա քարոզիչներից էր։ Իր քարոզչության մեջ հայերի շրջանում հաջողություն չունենալով, Բարդածանը գալիս է Դարանաղյաց գավառի Անի ամրոցը և իրեն նվիրում գիտական աշխատանքի։ Այն տեղ նա գտնում, ընթերցում և հայերենից ասորերեն է թարգմանում է «Մեհենական պատմությունը», որտեղ եղել են նաև տեղեկություններ հայ թագավորների գործունեության մասին։ Նա այնուհետև այս աշխատության և նոր ժամանակների վերաբերյալ իր ունեցած տեղեկությունների հիման վրա գրում է Հայաստանի պատմությունը, որը հետագայում թարգմանվել է նաև հունարեն։ Նրա աշխատությունը ևս, որից Խորենացին օգտվել է, դժբախտաբար, մեզ չի հասել։

Բացի պատմավանդական վեպերից և դիցաբանական առասպելներից, անշուշտ, գոյություն են ունեցել նաև աշխատանքի, սիրո, ուրախության է հարսանիքի, տխրության, վշտի, թաղման և այլ ժողովրդական երգեր։ Սակայն, դժբախտաբար, հայ ժողովրդի առօրյան արտահայտող այդ երգերը մեզ չեն հասել։ Այս դարաշրջանում ևս ժողովրդական վեպերը, առասպելները և երգերը հորինում, մշակում և հարստացնում էին վիպասաններն ու գուսանները։ Հայաստանում հատկապես հռչակված էին Գողթն գավառի երգիչները։ Շրջելով ամեն տեղ, գուսանները քաղաքների ու գյուղերի հրապարակներում, իշխանական պալատներում, քաղաքացիների տներում, շինականների խրճիթներում տոնական հանդեսների, հարսանիքների ու խնջույքների ժամանակ պատմում էին դյուցազնական վեպեր և առասպելներ, նվագակցությամբ կատարում էին ժողովրդական երգեր ու պարեր։ Նրանք հորինում էին նաև երգերի երաժշտությունը։ Նրանց երաժշտական գործիքներն էին փանդիռը, տավիղը, քնարը, վինը, սրինգը և փոքր թմբուկը։ Գառնիի հին դամբարաններից մեկում գտնվել է ոսկրից պատրաստված մի սրինգ, որը մեզ հասած ամենահին երաժշտական գործիքն է։

Հայկական հելլենիստական թատրոնն իր գոյությունը պահպանում և զարգանում էր նաև մեր թվականության I-III դարերում։ Հունական մատենագրության մեջ տեղեկություններ են պահպանվել, որ Տրդատ I-ի խնդրանքով Ներոն կայսրը նրան է նվիրում իր ամենահայտնի միմոսներից մեկին։ Թատերական ճաշակը այնքան տարածված ու հարգված էր Հայաստանում, որ նույնիսկ թատերական տեսարանները գեղազարդման նյութ են դառնում կիրառական արվեստի համար։ Հելլենիստական թատրոնի կողքին գոյություն ուներ նաև հայկական ժողովրդական թատրոնը։ Այս թատրոնի դերասանները նույն գուսաններն էին։ Ժողովրդական թատրոնի ներկայացումները տեղի էին ունենում նվագի, երգերի ու պարերի ուղեկցությամբ։

Գյուղատնտեսությունը սերտորեն կապված է տարվա եղանակների, ժամանակի հետ։ Ցանքսի, բերքահավաքի և գյուղատնտեսական մյուս աշխատանքների ճիշտ ժամանակը որոշելու համար, բնական է, որ հայերը վաղ ժամանակներից պետք է ստեղծեին նաև իրենց տոմարը կամ օրացույցը։

Ինչպես այլ ժողովուրդների, նույնպես և հայկական տոմարը ստեղծվել է երկնային լուսատուների շարժման հիման վրա։ Հատուկ մարդիկ են եղել, որոնք դիտել են երկնային լուսատուների շարժումը, կազմել են օրացույց և գուշակություններ արել։

Հայկական արեգակնային տոմարով տարին ուներ 365 օր և բաժանված էր տասներկու լրիվ ամիսների և մեկ փոքր ամսի։

Անանիա Շիրակացու հաղորդած մի ավանդության համաձայն՝ ամիսները եղել են հայոց նախահոր՝ Հայկի որդիների և դստերի անունները։

Ամսվա յուրաքանչյուր օրը և օրվա ժամերը ևս ունեին իրենց հատուկ անունները։

## ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նյութական մշակույթի ո՞ր ճյուղերն էին զարգացած Հայաստանում։ Բերե՛ք օրինակներ։
2. Ի՞նչ նպատակով էին կառուցվում ամրոցները և տաճարները։ Նկարագրե՛ք Գառնիի ամրոցը և տաճարը։
3. Քանդակագործությունը և կիրառական արվեստը ի՞նչ նմուները են հայտնաբերվել։ Ինչի՞ մասին են դրանք վկայում։
4. Ի՞նչ կրոն են դավանել հին հայերը քրիստոնեությունից առաջ։ Ի՞նչ աստվածների են երկրպագել։
5. Ի՞նչ լեզուներով են գրված արձանագրություններ են մեզ հասել։
6. Ի՞նչ փաստեր են վկայում հին Հայաստանում պատմագրության զարգացման մասին։
7. Ի՞նչն է վկայում հին Հայաստանում հելլենիստական թատրոնի գոյության մասին։
8. Ի՞նչ գիտեք հայկական տոմարի և օրացույցի մասին։ Ի՞նչ նպատակով էր այն օգտագործվում։

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Համեմատե՛ք «Հայկական մշակույթը Արտաշեսյանների և Արշակունիների օրոք»։**



ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**1. Ո՞վ էր երկրի և երկնքի արարիչը, մարդկանց բարօրություն, լիություն և արիություն շնորհողը հայոց դիցարանում:**

1) Արամազդը: 2) Հայկը: 3) Արամը: 4) Արան:

**2. Ո՞ր ամրոցն էր Արամազդի պաշտամունքի գլխավոր կենտրոնը:**

1) Գառնի: 2) Անի:
3) Արտագերս: 4) Բագարան:

**3. Որտե՞ղ էր Անահիտ աստվածուհու պաշտամունքի գլխավոր կենտրոնը:**

1) Արտաշատում: 2) Տիգրանակերտում:
3) Երիզայում: 4) Վանում:

**4. Ո՞վ էր Վահագնը հայոց դիցարանում:**

1) Երկնքի և երկրի արարիչը:
2) Ռազմի, քաջության և ամպրոպի արարիչը:
3) Արհեստների հովանավորը:
4) Աստվածների հայրը:

**5. Ո՞վ էր երկնային լույսի, սիրո և գեղեցկության աստվածուհին հայոց դիցարանում:**

1) Աստղիկը: 2) Անահիտը:
3) Ծովինարը: 4) Շամիրամը:

**6. Ո՞վ էր հայոց դիցարանում արևի, լույսի, կրակի և արդարության աստվածը:**

1) Վահագնը: 2) Միհրը:
3) Արամազդը: 4) Տորքը:

**7. Ո՞վ էր դպրության, գրականության, արվեստի ու գիտության հովանավոր աստվածը հայոց դիցարանում:**

1) Տիրը: 2) Միհրը:
3) Վահագնը: 4) Արան:

**8. Ո՞վ է օգտվել մեհենական պատմագրության արխիվից՝ կատարելով թարգմանություններ:**

1) Արիանոսը: 2) Տակիտոսը:
3) Բարդածանը: 4) Ապպիանոսը:

**9. Որքա՞ն է Գառնիի տաճարի սյուների քանակը:**

1) 18: 2) 20: 3) 14: 4) 24:

**10. Ինչո՞վ է հայտնի Գառնիի արքունի բաղնիքը:**

1) Հարթաքանդակով: 2) Որմնանկարով:
3) Խճանկարով: 4) Բարձրաքանդակով: